


Ltin
14145

1999

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԵՊԻՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆ



ԴՐԱՅՐԱՆԴԱՐԻԱՆ

ՊԵՏՐՈՍ ՀԱՆՁԵԱՆՑ

ՎԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

1068

(Պատկերով)

(Արտադպած «ՀՈՒՄԱՅ» հանդիսից)



ՄԱՅՏԱՐԱՐՈՒ . ՍՊԻՅ ԽԵՐԵՍՏՈՎԱՅՏՈՒ

ՅԵՒԳԻՆԻ ՍՈՂԶՅԲ

Ժ Գ Գ - Գ Գ Ա Կ Գ Պ Ա Հ Վ Ը Ց Մ

(Ա Բ Ա Ջ Ա Մ Ա Յ Ա Բ Ա Հ Ա Հ Ա Յ Ա Հ Ա Յ Ա Հ)

Дозволено цензурою, Тифлисъ, 13-го Декабря 1897 г.

(Ա Բ Ա Ջ Ա Մ Ա Յ Ա Բ Ա Հ Ա Հ Ա Յ Ա Հ Ա Յ Ա Հ)

20

29 1448

41445-ԱՀ

Խ Ա Բ Ա Ջ Ա Մ Ա Յ Ա Բ Ա Հ Ա Հ Ա Յ Ա Հ Ա Յ Ա Հ

8981

յաջու ոչ ոչ նույտ մինուսդրիք քայլ առաջակ և պահա-
պատ ունակ նույտ անկերպնեց ու բայ անհայտ
այս առաջայ անոն ան ան անուն ան ան ան
ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան
ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան
ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան
ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան ան
Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Կ

Զմիւռնիոյ առաջնորդական պաշտօնէս հրաժարելով
և ի Պօլիս գալով՝ ընկում էի ի Գլզըլ-Թոփիրակ, Զմիւռ-
նացի Սերովիքեան Գալուստ Աղայի ամարանոցումն, որ
շրջապատուած էր այգեստանով և մրգաբեր ծառառտանով։
Գալուստ Աղայ, առևտրական ասպարէղին քաշուած, ա-
ռանձնական կեանք էր վարում. ես ընկերացայ իրեն, իւր
յատուկ հրաւիրմամբ, զի արդէն վաղածանօթ էր ինձ։
Ամուրի էր նա, մաքրակինցաղ, ուզգամիտ և ընկերական
յարաբերութեանց մէջ աննենդ ու հաւատարիմ։ Այս աղ-
նիւ ընաւորութեամբ էր, որ իրը միջնորդ առևտրական
մեծամեծ տանց, կալուածատէր եղած էր և 'ի կենզանու-
թեան իսկ ամենն կտակած էր իւր այրի քրոջն, որ բա-
րեհամբաւ զաւակաց մայր էր 'ի Զմիւռնիա։

Մետասանամեայ առաջնորդական հովուութենէ զինի՝
արդէն կարօտ էի մենաւորական կենաց սփոփման և կագ-
դուրման։ Նախախնամութեան մատն էր անշուշտ, որ ա-
ռաջնորդած էր ինձ սոյն բնակարանն։ Մրտով ու մտքով
վշտակրոլներն ու վաստակողներն միայն քաջ կը զգան,
թէ ինչ քաղցրութիւն ունի առանձնութիւնն, երբ մտա-
յոյդ ժխորներուն յաջորդում են բնութեան զննութիւնն,
սովորական կամ պաշտօնական խոկումներուն հոգեոր
յափշտակութիւնն ու խորհրդագութիւնն. և ներկային՝ ան-
ցելոյն յիշատակներն ու աղաղային տեսիներն. է որ պայ-
ծառ, է որ սևաթոյր,

Դալուստ Աղայ այգեստանին տուած էր իւր ուշադրութիւնն, իսկ ես՝ ընթերցման, զրութեան և յաւէտ մըտածութեան։ Մենք օրուան մեծ մասն գրեթէ տարակայ էինք իրարմէ։ Միայն սեղանն էր, որ մեզ միացնում էր, միայն լրագրերն էին, որ ընթրիքն յետոյ կարգում էինք միասին, միայն ոմանց մեր բարեկամաց հազուագէպ այցելութիւնն էր, որ մերթ ընդ մերթ խռովում էր մեր մենաւորութիւնն՝ աղգային տխուր իրողութեանց զրոյցներով։

Սոյն մենաւորութեան ծնունդն են իմ մի քանի գլորաւոր երկերս, տպուած և անտիպ—ջոհութեան գիրս առ չօտն Զմիւռնիոյ, Թղթերս՝ առ Պապն Հոռվմայ եւ առ ս. Պատրիարքն Աշռական, Երկու Խօսքս, ինչ ինչ Աղօթքներ, և այն և այն։ Այս մենաւորութեան մէջ էր, որ գարթնում էին շատ յիշատակներ՝ ուսանողական, ուսուցչական, վարդպապետական. պատկերանում էին շատ մնցքեր՝ ուրախական, տիրական, քաջալերական, վհատական։ Այս մենաւորութեան մէջ էր, որ մի գիշեր երևեցաւ ինձ և Փեղլեան ծերունի Հայրապետն ներսէս Աշտարակեցի և ասաց. «Ասլիս. լաւ արիս, որ մեր եկեղեցւոյ պատութիւնն գրեցիր, եթէ թշնամիք ու սուտ գաւակունք այլայլեն նորա պարզութիւնն ու առարելական ուղղութիւնն, գննէ Պատմութիւնն միշտ վկայ կը մնայ թէ չայց եկեղեցին, երկար դարեր, Էապէս քրիստոնէական մասցած է իւր գարդպապետութեամբ ու վարչութիւններ։» — Մեծ բան չէ, ասացի, զրածս, չայր իմ, և խոնարհեցայ սուրբ աշն համբուրել։ «Լաւ է, լաւ է, կրկնեց» և աներեսութացաւ։

Դողալով զարթնեցայ և սկսայ լաւ ու հեծկտալ։ Նոյն պատկառելի ծերունին էր, որ շատ անզամ իւր այցելութեամբ քաջալերում էր ներսիսկան ուսումնաբանի ուսուցիչներն ու սաներն։ Այլ ես շը քնացայ, արդէն ար-

շալոյսն ծագելու վրայ էր։ Ելայ, լուացուեցայ և գնացի՝ ծառի տակ նստայ։

Տեսլեան տպաւորութեամբ պաշարուած էին միտքս ու սիրտս։ Գոզցես՝ 'ի Գըզըլ-Թոփրակ չէի, այլ 'ի Թիֆլիս, 'ի Ներսիսեան ուսումնաբանի, ուր Հայրապետին հետ պատկերանում էր նաև Աղնիւ Տեսուչն Պետրոս Ղանչեանց, որոյ ճակատն համբուրում էր Հայրապետն՝ իրեն դիմաւորած ժամանակ։ Ա՛խ, մտածում էի, երանել թէ հնար լինէր տեսիլս պատմել Աղնիւ Տեսչին, կամ գննէ մի ընկերիս և իրենց հետ բաժնել զգացումներս։ Տեսակ տեսսակ իղձեր յաջորդում էին իրարու։ Մի անպատճում փափագ յուզում էր սիրտս, գեթմ մի անզամ ևս ի կենդանութեան տեսնել Աղնիւ Ղանչեանցն, խօսակցիլ իրեն հետ, լսել իւր խորհրդներն, որոնք օգտակար եղած էին ինձ բովանդակ կենացս մէջ։

Այսպիսի ծփանաց մէջ էի, երբ յանկարծ փափար ծնաւ սրտում՝ պատրաստել պ. Ղանչեանցի կենսագրութիւնն։ Ծառաստանէն դարձայ սենեակս և խկոյն մի նամակ գրեցի սիրելի ընկերիս՝ պ. Պոօշեանցին, որչափ կարելի է շուտով կենսագրական տեղեկութիւններ հաղորդել ինձ Պ. Ղանչեանցի մասին, այսինքն այնպիսիներ, որոնք անծանօթ էին ինձ և որոց թերմս ինքն կարող էր գիտակ լինել հարցնելով։

Որու մաքէն կանցնէր, թէ երբ ես խորհում էի Պ. Ղանչեանցի կենսագրութեան մասին, նա արդէն պառկած էր հիւանդագին։ Ո՞վ կարող էր գուշակել՝ թէ Պ. Պոօշեանցին զրած նամակիս պարունակութիւնն պիտի լսէր նա կենաց և մահուան վերջին ճգնաժամին։ Բայց նախախնամութիւնն ունի խորհուրդներ, որոնք միշտ գաղտնիք են մարդու համար։ Կայ, կայ մի խորհրդաւոր կապ, որով վիշտ ու տրտմութիւն հաղորդում են հեռաւոր բայց իրար սիրող սրտեռուն։ Մարդ տիրում է՝ առանց

պատճառն իմանելու. արտասում է՝ առանց գաղտնիքն թափանցելու։ Հաւատացէք, որ երբ փափառ յլացաւ ձանշեանցի կենսագրութիւնն պատրաստել, սիրտս խռովեցաւ, աչքերէս արտասուր ցողեցաւ և սակայն չը գիտէի բնաւ։ թէ նա մատնուած է հիւնդութեան։

Ահա թէ ինչ է զրում ինձ այն ժամանակ Պ. Ձանշեանցի մահճակալի մնարէն Հարաբաղի Հայրենասէր զաւակն անմոռանալին Համբարձում Հախումեանց։

«Մեր անսիոնարինելի բարեկամ Պետրոս Հանշեանցի մահիցն քանի մի օր առաջ Պոօշեանցն նրանից ինչ ինչ տեղեկութիւններ էր ինդրել իւր կենսագրութեամ մասին իբր թէ Զեր յանձնարարութեամբ, ինձ յայտնելով յանձնեց ստուգել այդ բանը, արդեօք իսկապէս Զեր յանձնարարութեամբ է ինդրածն, թէ ինքն է ունեցել ցանկութիւն Զեր անունովն ունենալ։ Երբ տեղեկացայ, որ իսկապէս Զեր կամքն է եղել և յայտնեցի իրեն՝ անսահման ուրախութիւն նկատեցի իւր դէմքի վրայ։ Ամեն օր շարունակ այցելում էի և օր չէր անցնում, որ չը յիշէր Զեզ, չը մտարերէր անցեան, չը խօսէր և չը խորհէր ներկայիս մասին, մանաւանդ վերջին օրն։ մահիցն քանի մի ժամ առաջ մօտն էի, երկար պահեց, կարծես իմանում լինէր իւր վերջին ժամերն։ Բարսելիս (մնաս բարի ժամանակ) սկսաւ օրհնել ինձ և զաւակներիս այս սուրբ խօսքերով։ «Օրհնեալ լինիս երեխաներովդ։ Նրանց հետ ի միասին երջանիկ ապրիս» և յետոյ աւելացրեց։ «զիտեմ ժամ ևս գնում, չը մոռանաս ազօթքը— Յիշեա, Տէր, զաւաշտօնեայս քո, զծնողն մեր, զվարդապետս, զեղքարս, զընկերս և այլն»։ Ես միանեպամայն մնացի ապշած և սառած կանգնած դրան չէմքումն, որովհետև ինքդ էլ լաւ զիտես, որ նրա բնաւորութիւնից շատ հեռի էր իւր սրտի զգացմունքն դէպի իւր սիրելիս խօսքով արտասանել։ Միւս օրն առաւտեան լսում եմ, որ այլ ևս չը կայ

Պ. Հանշեանց։ նոյն իսկ գիշերն վախճանուել է։ Կարծես թէ մթնեց ինձ համար աշխարհս, ըստ օրինակի Փրկչին։ Նա զինի իւր մահուան քեզ թողուց ինձ մխիթարիչ և իրեն փոխանորդ։ Բոլոր հոգւովս փափառում եմ այն երանելի ժամին, երբ ոլիտի արժանանամ սուրբ և քաղցր տեսութեանդ և բանամ սիրտս առաջիդ և հանգստանամ։ Առ այժմ այսքան միայն կասեմ թէ՝ «Սստուած լինի մխիթարիչդ և պաշտպանելու համար»։ 27 Մարտի. 1889. Թիվիս։

Ուրեմն, տակաւին 'ի կենդանութեան Պ. Ձանշեանցի, ինքնին յղացած խոստումնս է, որ այսօր պիտի կատարեմ, թէ և շատ ուշ։ Բայց թէ պիտի յաջողիմ արդեօք պսակել այն վստահութիւնն, որ ունեցած է երջանիկն Հանշեանց իմ կենսագրական փափարին վրայ և որուն համար ասում է նամակագիրն։ «Երբ յայտնեցի իրեն, անսահման ուրախութիւն նկատեցի իւր դէմքին վրայ»։

Ես պիտի գրեմ, ինչ որ տեսած եմ, ինչ որ զգացած եմ, ինչ որ յաճախ այլոց պատմած եմ և ինչ որ, իրու օրինակելի պատկեր, երբէք աչքս, սրտէս, մտքս և յիշողութենիս հեռացած չէ։ Պիտի գրեմ այն օրէն, երբ իբրի Տեսուչ և ուսուցիչ տեսած եմ ներսիսեան ուսումնարանում։ Զեմ կարող գրել ոչ մի անսույն բան։ Չեմ զիտեմ թէ նա ատում էր ստութիւնն, ատում էր չուայլ գովինստն, որ գարձեալ ստութիւն է այլ պատրուակի տակ։ Համոզուած եմ թէ՝ նորա ոսկերքն անզամ կը բողոքեն ինձ դէմ, եթէ ստութեան ամենադոյզն ստուեր սպրդած լինի նորա կենաց չընալ, ամբիծ, վեհ, անայլայլելի պատկերին, որոյ վրայ չնորհք, իմաստութիւն և ոէր միանվամայն էին ցոլանում։

Հատերն արդէն գրած են Պ. Հանշեանցի կենաց վըրայ և ես ամենէն յետինն եմ, թէ և ամենէն առաջ յղա-

պատասխան կը տայ, եթէ մի օր փոշէթաթախ ոսկիները գողցուին։ (Այդ ժամանակ Գանձարանն ստացել էր մի քանի պարկ նոր ձուլուած ոսկիներ)։ — Ես, զու, կամ փողերը համրով պէտք է գողանանք, պատասխանում է նրան Սաամ Գիվիչն, ուրիշ ոչի կարելի չէ մեղադրել։

Եւ արդարեւ շատ չի քաշում, Սաամ Գիվիչն առանց վրդովմունքի յայտնում է իշխանութեան գանձարանի դրամարկղից նոր ստացած ոսկիների մի պարկի անհետանալը և հետն էլ աւելացնում է, որ ինքը վըստահ է թէ մի օր կորուստն անթերի կգտնուի։

Իշխանութիւնն ոչինչ կասկած չտանելով Գիվիչի հաւատարմութեան մասին, թողնում է նրան հանգիստ շարունակելու իւր գործը։

Սաամ Գիվիչն, իբրև ջերմեռանդն քրիստոնեայ և առաքինի մարդ, մոռացման տալով կորուստն, իւր սովորութեան համեմատ կարդում է Սատուածաշունչը իւր գերդաստանի մէջ և բացատրութիւններ է տալիս։ Մի անգամ, երբ առանձնացած իւր սենեկի մէջ պարապում էր ս. Գրքի ընթերցմունքով, բացւում է դուռը մեծ բազիսիւնով և ներս է մտնում նիկողայոս Արդութեան իշխանը և ոսկու պարկը ցած ձգելով յատակին «Ա՛ռ Սաամ Գիվիչ քո կորուստդ» ասելով՝ անմիջապէս գուրս է գնում։

Սաամ Գիվիչն, պարկը գետնին թողած, վազում է Արդութեանի ետևից՝ կոչելով նրա անունը, բայց արդէն ուշ էր. իշխանը անհետացել էր։ Նրա հարց ու փորձին՝ ընտանիքը, նրա ծառաները յայտնում են, որ իշխան Արդութեանին չեն տեսել. նա ամենեին տուն չէ եկել, որ գուրս գնար։ Սաամը գարմացած վերադառնում է սենեակը և պարկը չէ դտնում յատակի վրայ ընկած։ Սաամի երեակալութիւնն ստեղծած է լի-

նում այդ գէպքը, նրան երեում է իրողութիւն այն, ինչպէս իսկապէս չէ եղած։

— Վստահ եմ, ասում է Սաամ Գիվիչը, որ շատ չի քաշիլ և կորած ոսկիները կը յայտնուին։ Այդպէս էլ լինում է։ Նոյն օրը փողցում վերոլիշեալ դատախազի ձեռքում գտնում են կորած ոսկիները անթերի, որով Սաամի վարկը բազմապատկում է։

Սաամի կամ Սամուէլի մահից յետոյ ոուս կառավարութիւնը առաջարկում է նրա անդրանիկ որդի նիկողայոսին, բայց նա զինուորական լինելով մերժում է. այդպիսով դադարում է Շանշեան տոհմական գանձապետութեան արտօնութիւնը։

Սաամի կրտսեր որդին՝ փոքրիկ Պետրոսը վեց տարեկան է լինում, երբ ծառայի ուսին նստած ամեն օր գալիս է լինում Ներսիսեան նորաբաց դպրանոցում ուսանելու։ 1830-ին նրան տեղափոխում են Թիֆլիսի գիմնազիոնը, իսկ 1833-ին նա գնում է Մոսկուա և շարունակում է ուսումն Լազարեան ճեմարանում։ 1837-ին աւարտում է ուսումն և մտնում է Մոսկուայի Համալսարանի բժշկական բաժինն. բայց բժշկութեան ուսման հետ կապուած դժուարութիւններն իւր բնութեան հակառակ լինելով, թողնում է բժշկական գիտութիւնն և մտնում է լեզուագիտութեան բաժինը։

Այնուհետև նա շուտով ձգում է Մոսկուան և գնում է Պետերբուրգ՝ Արևելեան Ինստիտուտ մտնելու համար, մի տարի գեգերելուց յետոյ, անյաջողութեան հանգիպելով, վերադառնում է Մոսկուա և կրկին մըտնում է Համալսարանի իրաւագիտական բաժինը։ Վասն զի Արևելեան Ինստիտուտում Հայերն չէին ընդունւում։

1843-ին Պ. Շանշեանց Պետերբուրգի Համալսարանը թողլով և այնուհետև եւրոպա ուղևորելով՝ լինում է Վիէննա, Վենետիկ և Պարիզի Համալսարանում

լսում է դասախոսութիւններ և մասնակցում է 1848-ին յեղափոխական կուրեների ժողովներին։ Իսկ 1849-ին գնում է Նէապօլ, Հռովմ և այդ տեղի Համալսարաններին էլ այցելելով վերադառնում է Պետերբուրգ, որտեղից 1849-ի վերջերում գալիս է Թիֆլիս և Ներսէս կաթողիկոսի բերանացի հրամանով Տեսչութեան պաշտօն յանձն առնում։ Բայց կաթողիկոսի կողմից գրաւոր հրաւերը ուշանալու պատճառով՝ (լաւ է ասել՝ Հոգաբարձութեան մէջ անհամաձայնութիւն տեսնելով) երկու ամսից թողնում է պաշտօնը և կրկին դնում Պետերբուրգ։ 1851-ի վերջումը Ներսէս կաթողիկոս և Հոգաբարձութիւնն նորից գրաւոր կերպով հրաւերում են նրան Թիֆլիս տեսչական պաշտօնով և Պետրոս վարում է այդ պաշտօնը մինչև 1858 թուականը։

Արծագանքէն։ — Արծագանք, վերոյգրեալ կենսագրական տեղեկութիւններն պարունակելով հանդերձ, յայտնում է թէ՝ Պ. Շանշեանցի մալրն շառաւիլ է Սմատունի իշխանական տան, թէ՝ իւր տուած ծանօթութիւններն, մահէն մի շաբաթ առաջ, Պետրոսէն հարցուած և գրուած են և թէ՝ Սամուէլի (հանգուցելոյն հօր) Աստուածաշունչ կարդալու սովորութիւնն ազդեցութիւն ունեցած է որդւոյն վրայ, որ այնքան վառուած էր ո. Գրոց հոգւով¹⁾։

1) Բարի հօր օրինակն շատ կերպերով ազդեցութիւն ունեցած է որդւոյն վրայ։ Պետրոսի հայրն յատուկ սենեակ ունեցած է, յատակն աղիւսների մանրուած կոտրտանքով ցանուած, ուր սովորութիւն ունեցած է չորած աղօթել առաւօտ և երեկոյ։ Պ. Շանշեանց պահում էր այս գեղեցիկ սովորութիւնն։ Իւր տեսչութեան ժամանակ պատահած էր աշակերտներէն, որ և իցէ ևնդրոյ համար, սենեակն մատած են և տեղի կատարելագործելու համար նա գնաց Պարիզ, ուր Համալսարանումը մի քանի տարի լսում էր Փիլիսոփայական և աստուածաբան դասախոսութիւններ։ Իմ ծանօթութեան առաջին րոպէից մինչև մահը ես տեսած չեմ և իցէ շատերը ձեզանից նոյնպէս տեսած չը չինին այնպիսի մի անշփոթ, խաղաղ, անվրդով բնաւորութեան տէր, ինչպէս էր հանգուցեալն։ Բամբասանք, հայուանք, զրպարտութիւն, կեղծաւորութիւն, սուտ խօսիլ և անարդարութիւն նրա հայեցուածքով կարծես թէ՝ մարդկային բնաւորութիւնից դուրս մի բան էր և զարմանալով զարմանումէր, երբ լսում էր մէկի բերանից այդպիսի մի բան . . . երբ նա դեռ ձեմարանումն էր, երբէք տղայական չարութեանց չէր մասնակցում, պարապելով միշտ առանձնապէս իւր գասերով և գործով. . . Աւետարանն նրա ամենօրեայ Գիրքն էր, իւր ազդեցութեամբ նոյն ժամանակն իսկ նա գրաւած էր մի քանի ընկերներ, որոնք թեամբ յետ դարձած են, որովհետև աղօթաւորն և ոչ իսկ յետ նայած է։ Այսպէս պատահած է ինձ այն օրուան երեկոյն, երբ Պ. Շանշեանցի քըոջ յուղարկաւորութեան տիսուր հանդէսն կատարուած էր։

Պ. հզմիրեանցի խօսած դամբանականէն։ — «Ես ճանաչում եմ սրան (ակնարկելով հանգուցելոյն, որ ամփոփուած է դադաղի մէջ) գուցէ աւելի քան ուրիշները, որովհետև մենք միասին ենք եղել սկիզբը Ներսիսեան Դպրանցում, յետոյ 1835 թուականներում ընկեր էինք Լազարեանց ձեմարանում։ միասին աւարտել ենք մեր ուսման ընթացքը։ միասին մտել ենք Բարձրագոյն ուսումնարան և մի և նոյն տարին, այն է 1843 թուին լրացրել ենք մեր իրաւագիտական ուսումը Պետերբուրգի Համալսարանում, ընակուելով միասին տարիներ և անկեղծ բարեկամ մնալով մինչև վերջին օրը։ Իւր ուսումը աւելի կատարելագործելու համար նա գնաց Պարիզ, ուր Համալսարանումը մի քանի տարի լսում էր Փիլիսոփայական և աստուածաբան դասախոսութիւններ։ Իմ ծանօթութեան առաջին րոպէից մինչև մահը ես տեսած չեմ և իցէ շատերը ձեզանից նոյնպէս տեսած չը չինին այնպիսի մի անշփոթ, խաղաղ, անվրդով բնաւորութեան տէր, ինչպէս էր հանգուցեալն։ Բամբասանք, հայուանք, զրպարտութիւն, կեղծաւորութիւն, սուտ խօսիլ և անարդարութիւն նրա հայեցուածքով կարծես թէ՝ մարդկային բնաւորութիւնից դուրս մի բան էր և զարմանալով զարմանումէր, երբ լսում էր մէկի բերանից այդպիսի մի բան . . . երբ նա դեռ ձեմարանումն էր, երբէք տղայական չարութեանց չէր մասնակցում, պարապելով միշտ առանձնապէս իւր գասերով և գործով. . . Աւետարանն նրա ամենօրեայ Գիրքն էր, իւր ազդեցութեամբ նոյն ժամանակն իսկ նա գրաւած էր մի քանի ընկերներ, որոնք թեամբ յետ դարձած են, որովհետև աղօթաւորն և ոչ իսկ յետ նայած է։ Այսպէս պատահած է ինձ այն օրուան երեկոյն, երբ Պ. Շանշեանցի քըոջ յուղարկաւորութեան տիսուր հանդէսն կատարուած էր։

նոյնակէս, կուսակրօն եկեղեցական պաշտօնեայ էին կամենում լինիլ Ազգին ծառայելու նպատակով: . . . նա ունէր իւր բարձր գաղափարներն և լի էր Հայրենիքի, Ազգի սիրով:

Պ. Գ. Եւանգուլեանցի ոռուսերէն հրատարակած կենսագրականէն.—«Պ. Շանշեանցն, 40 թուականներում Պետերբուրգի Համալսարանի մէջ իւր իրաւաբան ուսումն աւարտելէն զկնի՝ ուղեորդում է՝ ՚ի Պարիզ աստուածաբանութիւն ուսանելու: 1848-ին ունկընդիր է լինում Սորբոնի Համալսարանին մէջ հընչուած հայրենասիրական դասախոսութեանց և իւր առջև կատարում են Հասարակապետութիւնն փրկելու ջանքերն: Պ. Շանշեանց վերադառնալով Պետերբուրգ, զինուորական նախարար իշխան Զերնիշովի թախանձանօք յանձն է առնում դաստիարակել նրա զաւակներն: 1851-ին երջանկայիշատակ ներսէս կաթողիկոսն հրաւիրում է Թիֆլիս՝ Դպրանոցի Տեսչութեան պաշտօննվարելու Համար»:

Մեր Համառօտագրած կենսագրականաց մէջ Պ. Շանշեանցի կենաց մասին կան ընտիր գնահատութիւններ, որոնք պիտի ունենան իրենց պատշաճ տեղն մեր երկին լաջորդ գլուխներուն մէջ:

Բ.

ԱՌԱՋԻՆ ԽՈՉՈՒՄՆ Պ. ՇԱՆՇԵԱՆՑԻ ՚Ի ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՆԵՐՄԻՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ. — ԱՆԱԿԱՆԱԼ ՎԵՐԱԴԱՐՁՆ ՚Ի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — ԹՈՂԱԾ ՏՊԱԼՈՐՈՒԹԻՒՆՆ:

Աշնան առաւօտ էր. դասերն սկսուելու գանգակն արգէն հնչած էր և մի անսովոր լուսութիւն տիրում էր ներսիւան վարժարանի մէջ: Լուր հասած էր, որ նոր

Տեսուչն պիտի այցելէ Պալրանոցն: Աշակերտաց անհամբերութիւնն անպատմելի էր, որովհետեւ մի քանի անգամ արգէն տեսած էին Տեսուչն անցնելու ժամանակ՝ վեհ ընթացքով, կոնաձև փեղուրով և ուսանողական երկայն աղաբողոնով (մանտոյով), մի ծալրն կուրծքէն դարձուած և ձախ ուսէն կախուած: Նախապատրաստականն և առաջին դասարանն այցելելէն զկնի՝ մտաւ մեր դասարանն, որ երկրորդն էր¹⁾.

Աշակերտք ոտքի կանգնեցան և բարեն ընդունելէն զկնի՝ նստան. իսկ ինքն չը նստաւ, ինչպէս տեսանք յետոյ, իւր Տեսչութեան բովանդակ զրջանին մէջ, որ միշտ ոտքի վրայ ունկնդրում էր դասախոսութեանց, իւր գիտողութիւններն վերջը առանձինն հաղորդելով դասախոսին:

Կրօնագիտութեան դասի ժամն էր, ուսուցիչն բա-

1) Եօթն ամիս հազիւ կար, որ ես մտած էի վարժարան (Մեծ պահոց մէջ 1849), որոյ Տեսուչն էր այն ժամանակ կարապետ վարդապետ Շահնաղարեան: Հարցուց, տեղեկացաւ, որ ուսած եմ Սանահնի վանքում, գիտեմ Զամշեան Քերականութեան առաջին մասն, կարող եմ թարգմանել նոր Կտակարանէն՝ չորս Աւետարաններն, Գործք Առաքելոցն. իսկ Հին Կտակարանէն՝ Ծննդոց և Ելից Գրքերն և ուղղագրութիւնս փորձելու համար ինքն թելադրեց որ գրեմ, զոյս ՚ի լուսոյ զմեզ լուսաւորեա» և տեսաւ որ լոյսն անսխալ հոլովեցի (՚ի լուսոյ և ոչ ՚ի լոյսոյ), անունս արձանագրեց և երկրորդ դասարան մտնելու թուղթ տուաւ, յսյանելով միանգամայն թէ՝ Հայերէնին Համար երրորդ դասարանի արժանի էի, իսկ ոռուսերէն չիմանալուս Համար՝ առաջին դասարանի, բայց յուսալով թէ՝ ոռուսերէնն շուտով յառաջ կը առնես, երկրորդ դասարան նշանակեցի:

Մի բանի օրէն զկնի լուր տարածուեցաւ վարժարանի մէջ՝ թէ Շահնաղարեան վարդապետն արտասահման գնացած է:

ցակայ էր տկարութեան պատճառաւ: Տեսուչն մի ուշ
շադիր ակնարկ ձգեց աշակերտաց վրայ և պատուիրեց
ուղիղ նախիլ և ոչ գլուխն կախ: Երևի, նշամարեց թէ
աշակերտներէն ոմանք իրենց առջևն էին նայում և
ոչ ուղիղ:

Կարող ես Հայր մեր ասել, հարցուց Տեսուչն ա-
ռաջին գրասեղանի վրայ գտնուող մի աշակերտի: Այս՝
պատասխանեց, բայց ոտքի կանգնելով՝ չկարաց անսխալ
ասել: Ո՞ի քանի աշակերտք ևս հետզհետէ կրկնեցին
Հայր մերն, բայց ոչ անսխալ: Երկու աշակերտք շա-
րայարութիւննանց և Խարազնանց (այժմ Տ. Ղեռնդ)
որ միանգամայն փոխասաց դպիր էին Վանքի Մալը
կեղեցում, ուղիղ արտասանեցին: Ես ևս գիտէի, բայց
չը համաձակեցայ ոտքի կանգնել և յայտնել՝ թէ գի-
տեմ: Պատուէր տուաւ երկու աշակերտներուն, որ Հայր
մերն անսխալ ուսուցանեն միւսներուն և ինքն մեկ-
նեցաւ:

Աննկարագրելի էր իւր թողած տպաւորութիւնն—
հասակն վայելուչ, կեցուածն վեհ, քաջալանջ, գանգ-
րահեր, տեսքն պայծառ, նայուածքն հեղու թափան-
ցիկ, արտասանութիւնն քաղցրալուր, խօսքելն հոգե-
բոյր: Այս հրեշտակատեսիլ անձն էր Պետրոս Շանշեանց,
նոր Տեսուչն վարժարանին:

Սոռաջին վայրկենէն աշակերտք գրաւուած էին, ա-
ռաջին տեսութենէն քաջալերուած էին յառաջդիմելու:
Բնաւ ծանը եկած չէր, որ Հայր մեր հարցուցած էր,
վասն զի զգացած էին իրենց սխալն. զգացած էին որ
ամեն բան պէտք է անսխալ ուսանիլ, ուղիղ հասկնալ,
ուղիղ արտասանել, մանաւանդ Աղօթքն, որոյ մէջ մեր
բերանն ու սիրտն պէտք է որ իրարու հետ կապուած
լինին:

Դպրանոցի մէջ ճաշելու սովորութիւն չը կար, եր-

կու ժամ միջոց տրուած էր երթալ ճաշելու և դառնա-
լու համար: Աշակերտք սոյն օրն գրեթէ ամենքն ժա-
մանակէն առաջ գարձած էին և իրարու պատմում էին
թէ՝ որ գասարանի մէջ ինչ հարցուցած է Տեսուչն, ինչ
խօսած է, ինչ պատասխանած են և այն և այն:

Համակրութիւնն ու ցնծութիւնն ընդհանուր էր.
խօսակցութիւնք գուարթախառն: Մեր գասարանի աշա-
կերտք մասնաւորապէս հաւաքուած կրկնում էին Հայր
մերն: Լուր եկաւ թէ Տեսուչն եկած է և խորհրդա-
րանումն է: Ուսուցիչներն տակաւին եկած չէին և մի-
այն օրապահ վերակացուն էր, որ վազվզում էր դասա-
րանէ դասարան և պատուիրում էր լուռ և հանդարտ
լինել:

Յանկարծ Տեսուչն մեր գասարանն մտաւ. թաշկի-
նակի մէջէն երեք խոշոր տանձ հանեց, գրասեղանի
վրայ դրաւ, իւր մօտ կոչեց Ղարայարութիւննանցն
ու Խարազեանցն, մի մի հատ իրենց տուաւ, իսկ եր-
րորդն նոցա վկայութեամբ ինձ տուաւ, որովհետև ոչ
միայն արդէն գիտէի Հայր մերն, այլ և Հայերէն դա-
սերու սերտողութեան ժամանակ շատերուն օգնում էի,
մինչեւ անգամ երրորդ դասարանէն դիմողներուն:

Նոյն օրն ս. Հայրապետի մօտ ճաշած էր Տեսուչն
և նորա սեղանէն բերած էր տանձերն՝ Հայր մերն ան-
սխալ և հասկնալի մտադրութեամբ արտասանողներու
համար, ինչպէս որ ինքն յայտնեց:

Մի քանի շաբաթ այսպէս շարունակեց իւր ալցե-
լութիւններն, ամեն անգամին, իւր վարմունքով ու
խօսքերով, անցնչելի տպաւորութիւն թողլով աշակեր-
տաց սրտին մէջ: Բայց ուսուցչական փոփութիւն կամ
նոր կարգադրութիւն բնաւ տեղի չունեցաւ, մինչդեռ
խօսւում և սպասւում էր:

Տեսչի այցելութիւններն զադրեցան, թէև Հոգա-

բարձուաց և վերակացուաց կողմէն անընդհատ յուսա-
գրութիւն կար, որ պիտի շարունակուին: Երբեմն, եր-
թեկութեան ժամանակ, Տեսուչն հանդիպում էր մեզ
ճանապարհին, շարքով կանգնում էինք և նա բարեռում
էր գորովալիր նայուածքով և անցնում: Ի՞նչ անպա-
տում ուրախութիւն էին մեզ համար այս պատահում-
ներն: Յանկարծ լուր տարածուեցաւ դպրանոցի մէջ,
որ Տեսուչն վերադարձած է՝ Պետերբուրգ: Գոգցես
կայծակնահար եղանք բոլոր աշակերտներս: Գոգցես մի
աւետառը հրեշտակի տեսութենէն ու բարբառէն զըր-
կուեցանք: Ապա յայտնուեցաւ, որ Տեսուչն ինդրած է
ս. Հայրապետէն բաժնել Տեսչի և Հոգաբարձութեան
պարտաւորութիւններն, այն է Տեսչին յանձնել ուսում-
նական մասն, ինչպէս են նոր ծրագրի պատրաստու-
թիւն, ուսմանց բաշխումն, դասագրեանց ընտրութիւն,
ուսուցաց փոփոխութիւն, աշակերտաց ընդունելութիւն
և արձակումն, բարոյական և ուղիղ ընթացից հսկողու-
թիւն և այլն: Իսկ Հոգաբարձութեան թողուլ նիւթա-
կանն, ինչպէս են կալուածոց ու հասութից վերահսկո-
ղութիւն, դպրոցական ծախուց մատակարարութիւն,
կանոնաւոր հաշուապահութիւն և այլն, որով իւրաքան-
չիւրն ուղղակի իւր պարտուց կատարման պատասխանա-
տուն լինելով, հարկն պահանջած ժամանակ դարձեալ
կարող են միասին ժողով կազմել և խորհրդակցիլ կա-
րեսոր դատուած խնդրոց նկատմամբ, ինչպէս են նոր
դասարան բանալ և այլն: Աշխատանաց բաժանմամբ
կը մնար անբաժան ուսումնարանի նպատակն, որ էր
պարզել դաստիարակութեան դրօշն—մարդն հասցնել
իւր կոչման, կետանքն կատարելագործելով:

Սոյն ժամանակի Հոգաբարձուքն, ինքնին բարի
մարդիկ, պատուաւոր քաղաքացիք, բայց դժբաղդաբար
յօժարած չէին համակերպիլ Տեսչի առաջարկութեան,

ցանկալով մանաւանդ միշտ իրաւունք ունենալ պաշ-
տօնէից փոփոխութեան մէջ, որ սակայն իրենց ձեռնհա-
սութենէն վեր էր:

Ս. Հայրապետն քաջ ճանաչելով Տեսչի առաջարկին
օրինաւորութիւնն, բայց չը կամելով վշտացնել Հոգա-
բարձուներն, որ իւր վաղածանօթներն էին ու ընտրած-
ներն, չէ աճապարում իրագործել Տեսչի առաջարկն,
թերևս փափաքելով, որ Հոգաբարձուք ինքնին համո-
զուին և գործադրեն: Իսկ Տեսուչն համոզուած լինելով
թէ առանց իւր առաջարկն ընդունուելու՝ անհնարին է
հիմնովին բարեկարգել դպրանոցն և խուսելով այն
գժտութենէն ու վէճերէն, որ ապագայում կարող են
ծագիլ Հոգաբարձութեան և Տեսչութեան մէջ, բարբոք
է համարում հրաժեշտ տալ ս. Հայրապետին և դառ-
նալ՝ Պետերբուրգ:

Գ.

Վեճակ ԴՊԲՆՈՑԻՆ ՏԵՍՉԻ ՀՐԱԺԱՐՈՒՄԻՆ ԶԿՆԻ

Տեսչի պաշտօնավարութիւնն երկար չը տեսեց, բայց
մեծ ազդեցութիւն ունեցաւ: Բացուեցաւ վարժարանի
մէջ, յատկապէս հեռաւոր քաղաքներէ կամ գիշերէ
եկած աշակերտներուն համար, զիշերօթիկ բաժինն, ո-
րոյ խորհուրդն լզացած էր ինքն Տեսուչն և հաղորդած
ս. Հայրապետին ¹⁾:

¹⁾ Երանաշնորհ Հայրապետն, ինքն Դպրանոց գալով
որոշեց տասն աշակերտներ, որպէս գիշերօթիկ որդեգիր սա-
ներ, որոց մէջ ես էի ամենէն կրտսերն, և պատուիրեց եր-
թալ իմաց տալ այն բարեկամ ընտանեաց, որոց մօտ բնա-
կում էինք և գալ գիշերելու՝ ի Դպրանոցն, ուր ամեն ինչ
արդէն պատրաստուած է՝ ննջարան, մահճակալ ամեն կա-

Կարգեցաւ նոր Տեսուչ Տ. Գաբրիէլ քահանայ Պատկանեանց, որոյ տեսչութիւնն զատ ըլ տեղ և երկու աւագ—ուսուցիչներ, Յակոբ Կարենեանց և Միքայէլ Պատկանեանց (Եղբայր քահանային) ստանձնեցին տեսչութեան պաշտօնն՝ միասին վարելու. Բայց բարոյապէս պ. Շանշեանցի տեղն միշտ բաց էր, ոչ մի կարգադրութեամբ չը լցուեցաւ այդ բացն, այդ պակասն։ Միշտ հառաջանօք ու խանդաղատանօք էին լիշտում վարժարանի մէջ Շանշեանցի անունն ու լիշտակն։ Հոգաբարձուք ինքնին պարտաւորեցան վերստին Տեսչութեան հրաւիրել հետեւեալ գրով։

«Ողորմած Տէր,

Պետրոս Սամուէլեան։

Սրանից մի քանի ամիս առաջ մենք պատիւ ունեցանք գրել առ Աղաթօն Դաւթեանն, նրա Պետերուրդ եղած ժամանակ, որ նա աշխատութիւն լանձն առնէր՝ առաջարկել Զեղ այստեղ Հոգեոր Դպրոցի տեսչութիւնն։ Այժմ Աղաթօն Դաւթեանն հաղորդեց մեզ Զեր համաձայնութիւնն, որի համար և մենք պատիւ ունեցանք իսկոյն առաջարկել կաթողիկոսի բարեհաճութեանը։ Նորին Վեհափառութեան հաճելի եղաւ յայտնել իւր համաձայնութիւնն, լի գովասանութիւններով։

Քաջ ճանաչելով Զեղ, մենք հաւաստի ենք, որ Դուք չէք դադարիլ աշխատիլ այս Դպրոցը ծաղկեցնե-

հաւորութեամբ՝ և նոր հագուստներ ևս պիտի ձեռւին և կարուին անմիջապէս։ Մի քանի շաբաթ՝ մեր կերակուրն մատակարարում էր նոյն իսկ կաթողիկոսական խոհարանէն։ Զեմ մոոցած սյն սուրբ ձեռն, երբ սաներու ընտրութեան ժամանակ, գլխիս վրայ դրաւ ս. Հայրապետն և ասաց. «Թի՞ այս մանուկն» և առաջին անգամ իմ անունս արձա. Նագրեցին։

լու, Դպրոցն, որ մինչև ց'այժմ պահում է մի քաղցր լիշտակ այն յառաջադիմութեան համար, որ Դուք մեծ յաջողութեամբ ցոյց տուիք կարճ միջոցում Զեր այստեղ գտնուած ժամանակը։ Դուք շատ լաւ գիտէք, որ ուսումնախնդիր պատահիքը ամենայն կերպով պատրաստ են արժանի լինել Զեր անխոնջ հոգացողութեանը։ Դովելի ջանասիրութիւն, մեծ ընդունակութիւն և կատարելագործուելու ցանկութիւն, այս ամեն կատարելու թիւներն գտնուում են այս եռանդուն պատանեաց մէջ. պակաս է միայն մի արժանաւոր գաստիարակ, որ կարողանար այն պատանեկաց ջանասիրութիւնն և յառաջադիմութիւնն իւր իսկական նսպատակին հասցնել։ Մեր Հոգաբարձուացս կողմանէ Դուք կը գտնէք ամենաջերմեռանդօրէն գործակցութիւն։ Մենք երբէք մտադիր չենք արգելք լինել Զեղ և Զեղ կ'առաջարկուի լիակատար արտօնութիւն գործելոյ ըստ ուսումնական մասին, ինչպէս Դուք բարեհանձիք։ Մենք չենք կասկածում այս ազատութիւնն տալ Զեղ. լինելով վստահ Զեր բարի նպատակի վրայ։ Զեր այստեղ գալու ճանապարհի ծախուց համար, ըստ չափու կարողութեան, մենք գումար ենք նշանակում 300 ռուբլի, իսկ տարեկան ռոճիկը կը մնայ նոյնը, այսինքն 500 ռուբլի, բացի սրանից, Դուք կունենաք օրինաւոր սենեակ՝ իրեն վառելիքով։

Պատիւ ունինք մնալ մտերիմ յարգանօք և խորին անձնանութրութեամբ»

Զեր խոնարհ ծառալք

18 Նոյեմ. 1851 ամի

Դասիթ Ժմամալշեանց

Տիկիսիս

Դասիթ Խերոդինեանց

Եագոր Մանդինեանց

դերագ մի չ նուշաբ ներաց մասմի դու մըսցով
ծնե գում դու յանաշ մատ Պ. բանական մատ մասմաշ
Դոթքն ինչ խորհուն ծզոյ գլեցա ուսո դասի առաջան
ընսի եր ծանկան ՎԱՐԺԱՐԵՆԱՅ. — ԾՐԱԳԻՐ ՈՒՍՈՒՄՆԱ-
ՐԱՆԻ Պ. Ը. Տ. ՏԵՍՉՈՒԹԵՆԿՆ ԱՌԱԶ:

Դաստիարակութեան մէջ հաստատուն համոզումն,
սկզբունքի ուղղութիւնն և պարտուց ճանաչումն այն
կատարելութիւններն են, որոնք ոչ միայն ազգում են
ուսանողներու, այլ առհասարակ վարժարանի հետ ա-
մեն կապ ունեցողներու վրայ, ինչպէս են Հոգաբար-
ձուք, Խամամակալք, Բարերարք, Ծնողք և այլն: Մեծ
դաստիարակներն, նոր սերնդի հետ, կերպիւ իւիք կըր-
թում են նաև ժողովուրդն, զարթուցանելով նորա մէջ
փափաք ազնուանալու, փափաք կատարելագործուելու:
Ա. Հայրապետն արդէն քաջ ճանաչած էր պ. Շան-
շեանցն. Հոգաբարձուաց վրայ ևս անշուշտ տպաւորու-
թիւն ունեցած էր նորա վարմունքն և լուս ու մունջ
հեռանալն աւելի սաստկացուցած էր այդ տպաւորու-
թիւնն և ահա ինքնին խոնարհելով հաստատ սկզբուն-
քի և հեղինակութեան առջև գրում են, «կ'առաջար-
կուի Զեզ լիակատար արտօնութիւն գործելոյ ըստ ու-
սումնական մասին» և այլն:

Պ. Շանշեանցի խնդրածն ևս այս վստահութիւնն,
արտօնութիւնն և գործելու աղատութիւնն էր: Վասն
զի առանց ազատ գործելու՝ ըլ կար Պ. Շանշեանցի հա-
մար դաստիարակութեան պաշտօն: Միտքն ու սիրտն
զարգացնելու, ազնուացնելու, մոլորութեան ու տգի-
տութեան կապերէն արձակելու և լուսոյ ու ճշմարտու-
թեան հետ կապելու համար, պէտք է որ ինքն դաս-
տիարակն ազատ լինի այս կապերէն: Պ. Շանշեանց այս
դաստիարակն էր, այս բարձրութեան հասած մարդն էր,

որ ընդունեց Հոգաբարձուաց հրաւերն, ս. Հայրապետի
հրամանաւ և գովեստներով գրուած, և եկաւ Թիֆլիս:
Հոգաբարձուաց ցնծութիւնն անշափէ էր, որովհետեւ Պ.
Շանշեանց՝ ոչ միայն մի լեզուագէտ և բարեհամբաւ
գիտնական էր, այլ նաև իրենց քաղաքացին, ազնուա-
տոհմ, Սամ Գիվիչի, Արաց թագաւորի գանձապետի
որդին էր: Շատերուն հրաշք էր թուում, որ Ազնուա-
կան Շանշեանցն խոնարհում է ներսիսեան վարժարանի
տեսչութեան պաշտօնն վարել մինչդեռ իւր առջև շատ
բաց ասպարէզներ կային: Ի հարկէ, նոքա շէին կարող
ըմբռնել, չէին կարող հասկնալ՝ թէ Քրիստոնէութեան
հոգին, լոյս տարածելու մէրն, ճշմարտութիւն ծաւա-
լելու եռանդն, Աստուծոյ գործակցիլն իւր թագաւորու-
թիւնն հաստատելու համար աշխարհիս վրայ, մարդուն
առաջնորդելն 'ի ճանաչումն անձին և 'ի գիտութիւն
աստուծացին կամաց և 'ի կատարումն պարտուց, չէին
կարող, ասացինք, տեսնել՝ թէ դաստիարակութեան սոյն
հիմունքն ինչպէս գրաւած էին Պ. Շանշեանցի սիրտն,
և թէ ինչպէս ներշնչուած էր նա այս ճանապարհաւ
իւր Ազգին և մարդկութեան ծառայելու համար: Նա
կոչուած էր Տեսուչ լինիլ, բայց ըլ կար նորա համար
այդ Դպրոցն. նա նոր պիտի ծրագրէր, նոր պիտի հիմ-
նէր, նոր պիտի բարձրացնէր այդ բարոյական շէնքն և
այս մեծ ճարտարաբետութեան համար էր, որ նա լիա-
կատար ազատութիւն էր պահանջում ըստ ուսումնա-
կան մասին: Նա այս անդժմ նախ ծրագրեց իւր յա-
տակագիծն, հաղորդեց ս. Հայրապետին և ապա մկան
գործել:

Յառաջ բերենք նախ այդ սուրբ յատակագիծն, ո-
րոյ վրայ դաստիարակութեան շէնքն հիմնեցաւ և ապա
անցնինք նկարագրել շինուածապետն, գործն ու գործ
ծաւորներն:

Եղանակ այժմեան դասատուութեան յամենալին ու-
սումնարանս Հայոց ունի զբազում թերութիւնս՝ ի դաս-
տիարակութեան։ Զէ նա յատկացեալ ոչ ըստ չափու կա-
րևութեան գիտութեան, ոչ ըստ օգտի և ոչ ըստ չա-
փու ընդունակութեան մանկանց, որոց կրթութիւնք
յոյժ կարևորք են իբրև զգրաւական ապառնի յուսոյ
ծնողաց և Հայրենեաց։

Իրաւամբ ասաց մի ոմն՝ ի փիլիսոփայից թէ՝ ներ-
կայն յղացեալ է ապառնեաւ¹⁾), վասնորոյ և դաստիա-
րակութիւն մանկանց յոյժ վսեմ է ըստ ամենայն հե-
տեանաց իւրոց։ ՚ի մանկութեան զարգանան և կազ-
դուրին միտք, զգացմունք, հասողութիւնք և տպաւո-
րութիւնք։ ՚ի մանկական տիոց կարողութիւնք հոգւոյ
մշակեալք՝ արգասաւոր կացուցանեն զկենացն համայն
ապագայ։

Եղանակ այժմեան դասատուութեան չունի զէական
մասունս. տայ զմեծ առաւելութիւն՝ փոքու արժանա-
ւորութեան և զփոքը արժանաւորութիւն այնմ՝ որ զա-
ռաջինն պարտի ունիլ զտեղի։ ՚ի զուը յօրինակ տան
զարգիւնս վաստակոց ոմանց ՚ի դաստիարակաց, որք ու-
նին զքանի մի գովանի աշակերտա. քանզի բացառութիւնք
են նոքա և ՚ի վերայ բացառութեան ոչ հիմնի երբէք
բարւոք դաստիարակութիւն։ Ուստի առանց ինչ պարս-
ւագիր լինելոյ ալլոց, որք արարին զոր կարացինն, քըն-
նողական ընտրութեամբ ասեմ զիմ կարծիս—Դաստիա-
րակութիւն եւ կրծութիւն պարտին գոյ առաջին վսեմ
պէտք վասն մարդոյ, վասն կառավարութեան և վասն
ազգի։ Իսկ ընդհակառակն՝ ՚ի տիրել մոլորութեան՝ ա-
ռաւել քան զառաւել մեկնի մարդն իսպառ ՚ի ճշմարիտն
յուսոյ և անկրթութիւն յակիտեան ծածկէ զգործս Աս-
տուծոյ և զբնութիւն՝ անթափանցելի խաւարաւ։

¹⁾ Լէյնից։

Հիմն կրթութեան մարդոյ պարտին լինել կարեոր
և էական գիտութիւնք, որք հարկաւորին յամենայն վի-
ճակի և յամենալին ժամանակի։ Էական գիտութիւնք
պարունակեն յինքեանս զայն ամենալին, որ ինչ միան-
գամ կարևոր է մարդոյ գիտել անցուշտ և ՚ի գործ գը-
նել, զի մարթասցի պահպանել զիւրն արժանաւորու-
թիւն և ոչ լինել ապարազդ։ Այսոքիկ գիտութիւնք են
յետագալք. — նախ՝ կրօնն, որով հարկէ սկսանիլ, շարու-
նակել և աւարտել զկրթութիւն մարդոյ, վասն զի մարդն
է Աստուծոյ, Աստուծով և վասն Աստուծոյ։ Երկրորդ՝
Բարոյագիտութիւն, որ տայ մարդոյ ճանաչել զանձն և
զայլս։ Բարոյագիտութիւնն ուսուցանէ մեզ զպարտաւո-
րութիւն մեր առ Աստուած, առ մարդ, առ Հայրենիս,
առ Եկեղեցին և առ Ֆողովուրդն և ահա այսոքիկ պար-
տաւորութիւնք են խարիսխք ընկերական և հասարա-
կական կենաց։ Երրորդ՝ Բնագիտութիւն, որով իմանամք
զկազմ աշխարհի, բնագիտութիւն՝ որ ըստ գեղեցիկ ա-
սից Առաքելոյն Պողոսի՝ յետ Աստուածաշնչի երկրորդ իմն
Գիրք, յօրում ակներև տեսանին մեծութիւն, ամենա-
կարողութիւն և նախախնամութիւն Աստուծոյ, զի ան-
երեսոյթքն Աստուծոյ արարածովքս իմացեալ տեսանին,
այսինքն է մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աս-
տուածութիւն նորա։ Ընդ բնագիտութեան հարկ է ու-
սանիլ անցուշտ և զկազմութիւն մարդոյ, այն է իմա-
նալ զայն ամենալին, զորմէ կախի առողջութիւն մար-
դոյ, որ ամուր և ամբիծ պահպանելով զմարմին՝ պահ-
պանէ և զհոգին առողջ և զուարթ, որպէս ասաց ոմն
՚ի նախնի իմաստասիրաց—Առողջ հոգի յառողջ մարմնի։
Մարդ կոչեալ է յաշխարհ ազնուացուցանել և կա-
տարելագործել զհոգի իւր, կատարել զպարտաւորու-
թիւնսն և որոնել զկեանսն, որոյ անանցն և խաղաղ
լոյս աջով Բարձրելոյն տպաւորեալ ՚ի մարդիկ քաղցրա-

ցուցանէ զընկերականութիւն մարդկան և պարարէ գսիրտսն սիրով անմահութեան։ Վասն այսորիկ՝ առաջին պատուիրանն, զոր աւանդեաց Տէրն՝ է—սիրել զԱստուած և ծառայել նմա յամենայն զօրութենէ հոգւոյ, գործելով ընդ նախախնամութեամբ նորա։ Իսկ երկրորդ պատուիրանն Աստուծոյ և ամենայն հասարակութեան է լինիլ շահաբեր մարդկութեան ամենայն ձրիւք, զորս եղ Աստուած՝ ի մարդումն և այսու կատարելութեամբ պաշտել զԱստուած, սիրել զընկերն և աշխատիլ վասն ժամանակաւոր և յաւիտենական երջանկութեան։ Ուրեմն հիմն և առարկայ կրթութեան են երեքին սոքա—Աստուած, Մարդ և Բնութիւն։ Ճանաչումն Աստուծոյ է հիմն ճանաչման մարդոյ. իսկ ճանաչումն մարդոյ է հիմն ճանաչման բնութեան։ Դիտութիւնք այսոցիկ երից առարկաից առաջնորդեն զմարդն՝ ի ճանապարհ երջանկութեան. ուստի և մատակարարութիւնք սոցին պարտին լինիլ հիմն ուսման՝ ի ներսիսեան Հոգեոր Դպրոցի Հայոց Տիխիսայ այսու յետագայ եղանակաւ։ ՆԱԽ՝ կրօն։ Կրօնն ունի զառանձին պատմութիւն, որ բաժանի յերկուս մասունս, յորոց մին է Պատմութիւն Հրէից, որ սկսանի ի ստեղծմանէ աշխարհի. իսկ միւսն՝ Պատմութիւն Եկեղեցական. որ ոչ առնու զվախճան նախքան զկատարած աշխարհի։ Առաջինն, այն է Պատմութիւն Հրէից, պարունակէ յինքեանս զօրէնս Աստուծոյ, զարարչագործութիւն և զմարդարէութիւն, որք պատրաստէին զաշխարհ վասն զալստեան Քրիստոսի։ Իսկ երկրորդն՝ այն է Եկեղեցական պատմութիւնն ցուցանէ զյաւիտենական զանփոփխելի օրէնս, պարգեւեալս մեզ՝ ի Փրկչէն, զորս և տարածեցին Առաքեալք նորա քարոզութեամբ, զկնի որոց և Քահանայութիւնն պահպանէ։ Աղբիւր պատմութեան կրօնի է Աստուածաշունչն,

այն է Հին և Նոր կտակարանն և մասսամբ վճիռք երից Տիեզերական ծողովոց, աւանդութիւնք Հարց սրբոց, կանոնագրութիւնք և ծէսք և այլն։ Զէ պարտ լիշել՝ ի պատմութեան կրօնի զպատմութիւն անքրիստոնեայ ազգաց, քանզի կրօնք նոցա չեն պատմութիւն Աստուծոյ, այլ մարդոյ։ Որովհետեւ Ս. Գիրք լայտնի ցուցանեն մեզ զարարչագործութիւն Աստուծոյ և զմշմարտութիւնն, որք պարտին լինել հիմն Հաւատոյս մերոյ և պարտաւորութեան, զոր պատուիրեաց Աստուած։ ուստի զիտութիւնք Ս. Գրոց բաժանին ախպէս, —

Ա. Պատմութիւն Արարչագործութեան, այն է սըրբազան պատմութիւն։

Բ. Քրիստոնէականութիւն, որ պատմէ զմշմարտութիւնսն, որք են հիմն Հաւատոյ։

Գ. Բարոյականութիւն, այն է պարտաւորութիւն մարդկան առ Աստուած, առ մարդ և առ այլս։

Յախմ տեղւոց ուր եզերի ս. պատմութիւն, այսինքն ցՀամբարձումն Քրիստոսի և ցիշումն Հոգւոյն սրբոյ, սկսանի, —

Դ. Պատմութիւն Եկեղեցւոյ։

Ե. Պատմութիւն Եկեղեցական կարգաց, տօնից և ծիսից։

Զ. Քահանայական Աստուածաբանութիւն, այն է պարտաւորութիւն քահանայի, որպէս քարոզչի Աւետարանի և արուեստ քարոզութեան։

ԵՐՐՈՐԴ՝ Բարոյագիտութիւն։ Յայս առարկայ ամփոփին այն ամենայն զիտութիւնք, որք ուսուցանեն մարդոյ ճանաչել զանձն և զալլս։ Առ ի ճանաչել մարդոյ զինքն, որպէս զմարդ բանական՝ հարկաւոր է։ —

Է. Պատմութիւն Մարդաբանութեան (Անթրօպոլօգիա), մէ զիարդ զարգանան և կատարելագործին զօրութիւնք հոգւոյ։

Մարդ առ ՚ի ճանաչել զինքն իբրև գանդամ ազգի կամ շառաւիղ նորուն պարտի իմանալ. —

Ը. Զայտամութիւն համարիւն ազգի իւրոյ:

Թ. Զօտարազգի պատմութիւն, որպէս սերտ կապակից ազգային պատմութեան: Իսկ ընդ պատմութեան շաղկապեալ ՚է նաև գիտութիւն լեզուի. —

Ժ. Վասն պատմութեան Հայոց՝ հարկաւոր է լեզու հայերէն:

ԺԱ. Վասն պատմութեան Ոուսաց՝ լեզու Ոուսերէն:

ԺԲ. Վասն պատմութեան Եւրոպացւոց և օտարազգեաց՝ լեզու Գաղղիարէն:

ԺԳ. Բարեգիտութիւն կամ Բնախօսութիւն (Գիզիօլոգիա) որ խօսի զառողջ կազմութենէ մարդոյ, զպահպանութենէ, զվնասուց առողջութեան և զայլոց հարկաւոր գիւտոց, զծաղկապատուաստութենէ երեխայից ՚ի պահպանութիւն առողջութեան իւրոյ և առհասարակ ժողովրդականաց:

ԶՈՐՌՈՐԴ՝ Բնագիտութիւն. Առ ՚ի ճանաչել զբնութիւնն՝ հարկաւոր է. —

ԺԴ. Բնական Պատմութիւն, յորում պարունակի և մասնաւոր աշխարհագրութիւն:

ԺԵ. Բնական գիտութիւն, որով և ծանօթութիւն հարստութեան և շահաւետութեան թէ ՚ի բուսականաց մասին և թէ ՚ի լեռնային հանքագործութեանց:

ԺԶ. Թուաբանութիւն (մաթեմաթիք), որ բնաւ ոչ պատշաճի և ոչ միում ՚ի վերոյիշեալ գիտութեանց, սակայն կանոնօք իւրովք թեթեացուցանէ զհաշուական գործողութիւնս:

Բայց որովհետեւ յախմ դաստիարակական ծրագրութեան ոչ լիշեցի զնախապատրաստական գիտութիւնսն, առ այն հարկաւոր համարիմ խօսիլ զինչ ինչ զնոցունց՝ թէ ուր և զիարդ պարտ է պատրաստել զցանկացողս

մտանել ՚ի Հոգեոր Թալլոցն Հայոց: Ուստի յոյժ օգտաւէտ համարիմ միաւորել զմասնաւոր եկեղեցական կամ ծխական վարժարանս ընդ Հոգեոր Թալլանոցի Հայոց, իբրև զնախակրթարան դասարանս:

✓ Մասնաւոր եկեղեցական վարժարանը.

Յախսոսիկ վարժարանս ընդունին մանկունք ՚ի վեցամեայ հասակէ սկսեալ և մնան անդանօր մինչեցտասնամեայ հասակ իւրեանց: Առարկայք կրթութեան նոցա պարտին ընդարձակել զմիտս և զգգացմունս, որք նախընթաց են մտածութեան: Ուստի հրահանգութիւն գիտութեանց յառաջին երկուս ամս պարտի ընդարձակել հետևեալ եղանակաւ—ընթերցանութեամբ, վայելչագրութեամբ, գծագրութեամբք թուանշանից և չորիւք նախադրամբք թուաբանութեան: Իսկ ՚ի յետին երկուս ամս կատարելագործին վերոգրեալ առարկայք և հայեցեալ ՚ի չափ ընդարձակութեան մտաց մանկանց՝ աւանդի նոցա համառօտ բարոյական քրիստոնէականութիւն. և պատրաստի գտանին աշխարհագրական քարտեսք, որովք ցուցանէ ուսուցիչն զհարկաւոր տեղիս հայրենի երկրին, զտեղիս մեծամեծ անցից երևելի անձանց և պատմելով զայնոցիկ՝ զարթուցանէ ՚ի մանկունս զուսումնասիրութիւն ազգային պատմութեան:

Կարևոր է անհրաժեշտ, զի մանկունք ընդ դասուց բարոյական քրիստոնէականութեան տեսցեն զառաքինութիւնս դաստիարակաց ՚ի գործ եղեալս վերաբերութեամբ առ նոսա: Վասնորոյ հարկ է իսպառ մերժել ՚ի պատժոց զին չարաչար խստութիւնսն, որք արլակերպէին զպատկեր ուսուցչի, և փոխանակել զայն պատիմ՝ ՚ի հեզ կառավարութիւն մտաց: Մանկունք սիրեն առհաւարակ, զի ալլք խորհեսցին ընդ նոսա և այս բանայ զնոցայն աշխալժ՝ լինել մեծ: Ապա ուրեմն դիւ-

ըին է յուժ ուզգել գերեխայական թերութիւնսն և զանկարդութիւնն՝ հանճարաւոր և զգալի եղանակաւ և պատիժք պարտին լինել ոչ ներգործութիւնք վիզիքականք, այլ բարոյականք: Այսու եղանակաւ հասեալ մանկանց՝ ի տասնամեալ չափ հասակի իւրեանց (առանց որոյ չէ հնար թոյլ տալ նոցա լսել զհրահանգս Հայոց Հոգեոր Դպրանոցի) և կարացեալ մաքուր զրել, ուղիղ կարդալ, գիտելով ընդ նմին զշորեսին նախադրունո թուաբանութեան, զլուսաւոր և զկենդանի գիտութիւն Հաւտոյ իւրեանց և զքանի մի ականաւոր տեղեաց և զկողմանց և զՊատմութիւն Ազգին, լետ հարցաքննութեան, կարեն մտանել ՚ի ներսիսեան Հոգեոր Դպրանոցն Հայոց ՚ի շարունակել զուսումն իւրեանց¹⁾:

Պետրոս Շանշեանց:

Աւելի լաւ բացատրելու համար այն հոգին, որով ոգեստեցաւ ներսիսեան ուսումնարանն, կարեոր եմ համարում, որչափ լիշողութիւնս ներում է, համառօտիւնկարագրել՝ թէ ինչ վիճակի մէջ էր զպրոցն:

Տեսչութեան պաշտօն էին վարում պ. պ. Կարենեանց և Պատկանեանց. ձրիաբար գասախօսում էին բարձրագոյն դասարաններուն մէջ՝ պ. Սունդուկեանց՝ Երկրաշափութիւն. պ. Պուրինեանց՝ Աշխարհագրութիւն.

¹⁾ Սուրբ պարտք եմ համարում յիշել այստեղ, թէ, իմ շուրջ տասնամեայ Տեսչութեան շրջանին մէջ ՚ի ժառանդաւաց վարժարանի ս. Երուսաղէմի, պ. Շանշեանցի ծրագրի գործադրութեամբ, մեծ արդիւնքներ յառաջ եկած են, պարգևուելով թէ Միաբանութեան և թէ Աղդին՝ ճշմարիտ աստուածապաշտ և բանիբուն եկեղեցականներ, թէ հմուտ ուսուցիչներ և թէ Հայ հասարակութեան՝ գործունի անդամներ:

պ. Հեջուբեանց՝ Պատմութիւն ոռուաց. վարձաւոր էին պ. պ. Պատկանեան և Զմշկեան՝ Ծուսերէն լեզու. Արամէլիքեան՝ Ծուսաբանութիւն. Կարենեանց և Յարութիւն վարժապետ՝ Հայերէն լեզու. Տ. Ս. Սահառունի և Տ. Մկրտիչ՝ Կոսնագիտութիւն, Տ. Ղազար՝ Երաժշտութիւն. Երեմիա Խսահակեանց՝ Վերակացու եւ ատենադպիր Հոգաբարձութեան: Բացի Հայերէն լեզուէն, կրօնագիտութենէն և Երաժշտութենէն՝ ամեն ուսմունք և գիտութիւնք աւանդում էին ուսւերէն:

Ապակել, քանոնով ձեռքը ծեծել, մազերն քաշել, չոքեցնել, անարգական խօսքեր կրկնել, մակդիր, ներ տալ՝ սովորական էին ոմանց ուսուցչաց համար, իսկ ձաղկելն (ուզգի) վերապահուած էր միայն տեսչաց: Ծեծն կախուած էր ուսուցչի քմահաճոյքէն, շատ անգամ մի պարզ բանի համար կամ բոլորովին անմեղ տեղն ծեծւում էր աշակերտն¹⁾:

¹⁾ Իբրև օրինակ, բաւական եմ համարում պատմել միայն ինձ պատահածն, որ Երբէք մոռցած չեմ: Ես աշխատասէրներէն էի. ինչե՞ր կրած են միւսներն: Ուսւերէն ընթերցանութեան ուսուցիչն՝ փոխանակ առաջին՝ Երկրորդ վանկին վրայ շեշտելու համար, միշտ ձեռքն գտնուած հաստ քանոնովի այնպէս հարուածեց ձեռքիս ափն, որ մի ժամէն աւելի մղկացի: Տ. Սահառունին պատուէր տուած էր դասի ժամանակ Երբէք ուրիշ բանով չը պարապիլ և իրաւունք ունէր: Ես մի Եղիշէ գնած էի Էնֆիաճեանց նոր գրատունէն, սիրուն տուփի մէջ. սկսած էի յափշտակուած կարդալ, Հետո դասարան տարած էի և երբ ուսուցիչ քահանայն սկսաւ Հաւատավըն կրկնել տալ աշակերտաց, գրասեղանի բաց գարանի մէջ գնելով շարունակեցի ընթերցումս: Ուսուցիչն նշմարեց և հրամայեց Հաւատավըն ասել. փոխանակ զԱռաքեալն ասելու զառաքեալն ասացի. բայց ինքնին անմիջապէս ուղեցի. չը գոհացաւ, կոչեց ատեան և հրամայեց Զաւրեանց անուն հասակաւոր աշակերտին ափս

Նոր Տեսուչն մի շաբաթ ունկնդիր եղաւ բոլոր դասախոսութեանց՝ առանց դիտողութեան։ Յաջորդ շաբաթուն այլ ևս չեկան ձրիաբար դասախոսողներն, ընդ որս և Տ. Սահառունին, Տ. Մկրտիչն և Յարութիւն վարժապետն։ Առաջիններն արձակուած էին, որովհետև Տէրութեան պաշտօնեալք էին և ոչ ուսուցչական դասէն, թէ և պատուաւոր և հմուտ անձինք, մանաւանդոր ուսումունք և գիտութիւնք հայերէն պիտի աւանդուէին և ոչ ուսերէն։ Երկրորդներն արձակուած էին իրենց ուսուցչական ապարդիւն եղանակին համար։ Առաջիններն գոհ էին, քաջ ճանաչում էին Շանշեանցն և գնահատող էին նորա նպատակին. իսկ երկրորդներն գժգոհ մնացած էին։ Սակայն այդպիսի գժգոհութիւններն բնաւնշանակութիւն չունէին՝ Պ. Շանշեանցի համար։ Նա պատրաստ էր դաստիարակութեան անընդունակ ուսուցչի համար այլ անհատական պաշտօն գտնել, քան թէ խաթեր համար աշակերտաց հանրական օգուտն զոհել մասնաւորին, լաւ է ասել—հոգին զոհել նիւթին։ Օրինակի համար. Տ. Սահակ Սահառունին պահանջում էր աշակերտներէն, իբրև մեծ գիտութիւն, անսխալ կրկնել

ծեծել բանոնով։ Նա չը հպատակեցաւ բանիցս կրկնուած սպառնալից հրամանին և քահանայն ինքն, իմ փոխարէն, զայրացմամբ ծեծեց ընկերակցիս երկու ձեռքն։ Զաւրեանց համոզուած էր, որ ես Հաւատամըն շատ լաւ գիտեմ, զի դասարանին մէջ միշտ օգնում էի ամենուն՝ կրօնական և հայերէն դասերու սերտողութեան ժամանակ։ Բայց անշուշտ անտեղեակ էր, որ ուսուցիչն ծածուկ կարդալու համար է, որ բորբոքուած է պատժելու և ոչ թէ Հաւատամըն։ Որչափ բարեսիրտ էիր, սիրելի Զաւրեանց, որ ինքդ ծեծ կերար և չկամեցար ձեռքովդ ընկերդ ծեծել։ Եթէ ննջած ես դու, թող այս տողերն կենդանի յիշատակ ման ազնիւ կամքիդ ու վարմանցդ։

Հրեշտակաց, սատանալից, Քրիստոսի բևեռաց անուններն և այսպիսի բաներ։ Երե ի ներկալութեանՊ. Շանշեանցի աշակերտն չը կարողացաւ սատանալից կամ գիւտաց անուններն ամբողջ ասել, ուսուցիչն սաստիկ բարեկացաւ. իսկ Շանշեանց հեզօրէն ասաց—Տէր-հայր, տէր հայր, սատանալից անուններն չիմանալն աւելի լաւ է քան թէ իմանալն։ Ընդհակառակն խեղճ քահանայն մեծ պարծանք էր համարում, որ շատ գրքեր կարդացած է և այսպիսի բաներ գիտէ, չը խնայելովիաննախանձաբար ուսուցանել նաև աշակերտաց։

Ծրագրին համեմատ նոր դասախոսութիւններն այսպիս սկսան—Ուսումն Քրիստոնէական կրօնի եւ բարոյագիտութեան՝ Պ. Շանշեանց, Եկեղեցական պատմութիւն և Քրանսերէն լեզու՝ Փափազեան (նախ քահանայ և ապա Գալուստ վարդապետ), Ընդհանուր պատմութիւն և Աշխարհազրութիւն՝ Պ. Սիմօնեանց. Բնապատմութիւն և Բնական գիտութիւն՝ Գ. Խատիսեանց (սոյն երեքն Դորլատի համալսարանէն)։ Հայերէն՝ Յ. Կարենեանց և Երեմիա Խստհակեանց. Ռուսերէն՝ Մ. Պատկանեանց, Ա. Զմշկեանց. Թուազրանութիւն և Գեղուզրութիւն՝ Աբամելիքեանց. Երաժշտութիւն՝ Գէորգ քահանայ Արամեանց (ապա վարդապետ և յետ ժամանակաց Առաջնորդ Ղարաբաղի)։

Երբ ուսմունք և գիտութիւնք սկսան աւանդուիլ մայրենի լեզուաւ՝ մի նոր ոգեսրութիւն և զուարթութիւն զգեցան աշակերտք։ Ընդարձակ դասախոսութիւններն ոչ միայն գիւրութեամբ հասկացում էին, այլ և գրում էին աշակերտաց ձեռքով, ապա սրբագրում և դասատետր պատրաստում։ Առաջ պէտք էր միենոյն ժամանակ թէ ուսերէն լեզուն ուսանիլ և թէ աւանդուած գիտութիւնն. իսկ հայերէն դասախոսուած ժամանակ՝ լեզուի դժուարութիւնն վերցուած էր և 2—3

ամսուան մէջ ուսանելիքներն մի ամսուան մէջ էին ուսանում և այս ևս կենդանի եղանակաւ, առանց դաստիքէն ի բերան ուսանելու, երբեմն նոյն իսկ անհասկանալի ատամնասերտութեամբ։ Այս մի նոր հոգի էր, որ շնչում էր, վասն զի դպրանոցի հիմնադրութենէն՝ի վեր ուսմունք և գիտութիւնք միշտ աւարդուած էին օտար յեղուաւ։ Գիտութեան անունն միայն կար. ինքն չը կար. որովհետև զոհուած էր լեզուի ուսման. գիտութիւնն լեզու ուսանելու միջոց դարձած էր։

Արդէն ուսերէն լեզուն աւանդում էր դրական բոլոր ճիւղերով, իբրև պետական լեզու. Մայրենի լեզուաւ աւանդութիւնն այն մեծ գիւրութիւնն էր ընծայում, որ ուսուցչաց մատնանիշ արած՝ կրօնական, պատմական, աշխարհագրական, բնապատմական, բնագիտական և այլ գրչերն, որոնք ցայն վայր հրատարակուած էին, կարողանում էինք կարդալ. որովհետև նախնեաց ամբողջ մատենագրութենէն զատ՝ այդպիսի ընդարձակ հաւաքածոյ ևս, 2—3 ական օրինակներով պատրաստուած էր Տեսչի կանխահոգութեամբ և հետզհետէ աւելանում էին նորանոր հրատարակութիւնքն ևս։

Դասախոսութիւնք ևս աւանդում էին շատ ընդարձակ, իւրաքանչիոր դասի համար $1\frac{1}{2}$ ժամ. պ. Շանշեանց շաբաթն երկու անգամ դաս ունէր, իսկ մնացած ժամանակն այցելում էր դասարաններն և լուսութեամբ ունկնդիր լինում։ Իւր գիտողութիւններն, ինչպէս յիշած ենք, հաղորդում էր ուսուցչաց, դասարանէն արտաքոյ տեսչական խորհրդարանի մէջ և ոչ երբէք աշակերտաց առջև։ Ուսուցիչներէն ոմանք երբեմն կրկնում էին մեզ. «Երջանիկ էք, որ ուսանում էք այսպիսի առաքինի և իմաստուն Տեսչի օրով. մենք, ուսուցիչ լինելով հանդերձ, իրմէն շատ նոր բաներ ենք սովորում»։ Մենք աշակերտքս արդէն դգում էինք, ար-

դէն գիտէինք, որ երջանիկ ենք, գիտէինք, որ այն յոյժ սակաւաթիւ և ընտիր դաստիարակներէն է Պ. Շանշեանց, որոյ համար կալելի է համարձակ ասել—Այր մի՛ առաքեալ յԱստուծոյ։

Նորա ազդեցութիւնն այնքան մեծ էր, որ իբրև կենսագիր, շուարած եմ այժմ, թէ ինչպէս պիտի պատկերեմ այն չքնաղ կեանքն, որոյ վրայ զմայլում էինք միայն, առանց կարենալու բացատրել մեր զմայլումն։ Այդ կեանքն մի անապակ բիւրեղ, մի պրիզմ էր, որոյ վրայ ցոլացած էր եօթնարփեան շնորհաց լոյսն՝ իւր բոլոր երանգներով։ Այդ անթերի ամբողջութիւնն անթերի ցոյց տալու համար՝ անհրաժեշտ եմ համարում ուրոյն ուրոյն պատկերել գլխաւոր գծերն, այն է Պ. Շանշեանց՝ որպէս ուսուցիչ, որպէս տեսուչ, որպէս ընկերական մարդ և քաղաքացի, որպէս աստուածային եւ մարդկային սիրով վառուած քրիստոնեայ, որպէս չիմնադիր քարոյական մի նոր Դպրոցի, Դիստիարակութեան մի նոր եղանակի Հայոց մէջ, համաձայն Ներսէս Հայրապետի նպատակին, որ տակաւին իրագործուած չէր, թէև Դպրանոցի հոյակապ շենքն գոյութիւն ունէր բաւական տարիներէ՝ ի վեր։

Ե.

ՈՐԳԵՍ ՈՒՍՈՒՅԻ 2

Պ. Շանշեանց ուսուցչութեան համար ծնուած մարդ էր։ Նա ներշնչուած էր Ա. Գրոց հոգւով, ուսումնասիրած էր նախնի եկեղեցական Հարց բոլոր գլուխածներն։ Ա. Գրոց վկայութիւններէն զատ՝ նորա յաճախ լեզված անուններն էին։ Ա. Խղնատիս, Աթանաս, Ոսկեբերան, Հերոնիմոս, Օգոստինոս, որոյ խօս-

Քերն նոյն իսկ իւր լեզուաւ և բառերով էր յառաջ բերում¹⁾: Զը մոռնանք յիշել, որ լիովին ուսումնասիւրած էր նախնի իմաստասիրաց, կամ, լաւ է ասել, մարդկային վիճակի վրայ խորհող գիտնոց գրուածներն, ուրոնք իրենց մտածութեամբ և բնական լուսով աւելի վեր բարձրացած էին հասարակ ժողովրդէն, մինչև հոգւոյ անմահութեան ծանօթութիւնն, մինչև գուշակութիւն թէ՝ մարդն իւր ընկած վիճակէն բարձրանալու համար կարօտ է գերմարդկային զօրութեան, երկնալին զօրութեան: Այս մասին նոյն իսկ բանաստեղծներէն հատուածներ էր յառաջ բերում և իւր շեշտած անուններն էին մանաւանդ Պղատոն, Սոկրատ, Մարկոս Ալելիոս, Սենեկայ, Կիկերոն, Հոմերոս, Ովուատիոս և այլն: Նա յիշում էր այս անուններն, բայց չէր մոռանում կրկնել թէ՝ այս նշանաւոր խորհողներուն համար տակաւին լոյսն՝ ի խաւարի էր: Զէր մոռանում լիշել, որ քրիստոնէութեան մանուկն աւելի բան գիտէ, քան թէ այս իմաստասէրներն: «Գոհանամ զիէն, Հայր, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՚ի գիտնոց և յայտ-

1) 'Ի դէպ է այստեղ յիշել թէ՝ զարմանալի սուր յիշողութեամբ օժտուած էր Պ. Շանշեանց: Ղարաբաղում գտնուած ժամանակ՝ դէմ յանդիման սենեակներու մէջ էինք բնակում: Սովորութիւն արած էի կարդացած գրքիս մէջ նշան գնել, որպէս զի այն տեղէն շարունակեմ, ուր թողած եմ: Շատ անդամ նշանն վերցուած էի տեսնում: Մի օր սաստիկ բարկացած էի, կարծելով թէ՝ սպասաւորն է վերցնողն: յանկարծ Պ. Շանշեանց ներս մտաւ: Ի՞նչ զարմանալի բան, ասացի, կարդացած գրքիս նշանն վերցնում են և չեմ կարողանում տեղն գտնել: — Ո՞րն է զարմանալի, պատասխանեց, նշանն վերցնելն, թէ կարդացածի շարունակութեան տեղն չը գտնելն. ի՞նչ տեսակ կարդալ է այդ»: Ապա պատմեց, որ ինքն է վերցնողն, ուշի ուշով ընթերցման իւրատ տալու համար:

Նեցեր տղայոց: Այն, Հայր, այսպէս հաճոյ եղեւ առաջի քո»: Պ. Շանշեանց, սրտի և մտքի այսպիսի պաշարով պատրաստուած և աստուածային հոգւով սպասագինուած, ստանձնած էր ուսումնարանի բարձրագոյն դասարանի քրիստոնէական բովանդակ ուսմանց և բարոյագիտութեան դասախոսութիւնն: Պ. Շանշեանցի շաբաթական երկու դասերն ուրախութեան և ցնծութեան ժամեր էինք աշակերտաց համար: Անհամբեր սպասում էինք նորա դասարան մտնելուն: Ամեն դասախոսութեան ժամանակ միշտ բերում էր իւր ֆրանսերէն մանրատիպ և փոքրադիր Աստուածաշունչն, ինչպէս որ աշակերտաց ևս պատուէր տուած էր դասարանի մէջ ունենալ Հայերէն Աստուածաշունչն, հարկ եղած ժամանակ վկայութիւններն բանալ, կարդալ և գլուխն ու համարն նըշանակել:

Պ. Շանշեանցի յիշողութիւնն, 'ի սկզբան, մի հրաշք համարուած էր աշակերտաց համար, վասն զի, հարկ եղած ժամանակ, իսկոյն բաց էր անում իւր Աստուածաշունչն և մեզ պատուիրում բանալ այս ինչ գլուխն կամ այն ինչ համարն: Երբ տակաւ առ տակաւ մենք ևս ընտելացանք ս. Գրոց, նշմարեցինք, որ ո՞չ թէ գլուխներն ու համարներն է, որ յիշողութեան մէջ պահած է ուսուցիչն, այլ իմաստն: Այնքան կարդացած է, այնքան իւրացուցած է ս. Գրոց հոգին, որ իսկոյն միտն է բերում, թէ ուր է գտնւում այս ինչ իմաստով խօսքն: Մեր սոյն յառաջ բերածներն դասախոսութեան արտաքին ձևն է, գանք էականին:

Պ. Շանշեանցի դասախոսութիւնն ամեն կերպիւնոր էր աշակերտաց համար: Դասագիրք չունէինք. դասախոսութիւնն աւարտելէն զկնի միայն՝ ամեն աշակերտ գրում էր իրեն համար իւր յիշողութեան մէջ մնացածն: Նա խօսում էր և շատ սակաւ էր պատահում, որ մի

աշակերտի հարցումն ուղղէ։ Խօսում էր երկիւղածութեամբ, խօսում էր զգացմամբ, խօսում էր պարզ եղանակաւ, պարզ լեզուաւ, առանց պերճաբանութեան, առանց ձեւաբանութեան։ Սակայն իւր խօսքերն բարձր էին ամեն պերճախօսութենէ, հզօր ամեն յուզմունքէ։ Ա. Գրոց քաղցրութիւնն մեղրի պէս ծորում էր իւր բերանէն. այդ ծորանք հաղորդում էր աշակերտաց սըրտերուն. անուշում էր նոցա քիմքն։ Մի հոգեկան անպատում հաղորդակցութիւն կար, որ ուսուցչն անցնում էր լսողներուն. վասն զի աշակերտներէն զատ լինում էին միշտ այլ ունկնդիրներ ևս, քահանալք, քահանայացուք, աշխարհիկ անձինք։ Եօթն տարի էր, որ դասախօսում էր Շանշեանց և միշտ նոյն թարմութիւնն, նոյն ոյժն, նոյն զօրութիւնն, նոյն հրապուրն ունէին մեզ համար իւր դասերն։

Այն դասագրքերն, որ հրատարակուած են Պ. Շանշեանցի անուամբ—ուսումն Քրիստոնէութեան, ուսումն Պարտուց—նորա դասախօսութեանց համառօտագրութիւններն են և ոչ ամբողջութիւնն։ Այդ դասագրքերն աշակերտաց գրածներն են և նոցա թախանձանօք կանոնաւորուած դասաւորուած են ձեռամբ ուսուցին։

Պ. Շանշեանցի վերջին դասախօսութիւններն մի տեսակ կտակ էին։ Մենք չը գիտէինք բնաւ, թէ նա մտադրած է թողուլ ուսումնարանն, արտաքին պարագաներէն ստիպուած։ վասն զի երբէք չէր խօսում անցած դարձածներու վրայ։ Նա խօսում էր այնքան ոգեւորութեամբ, այնքան զգածուած, որ շատ անգամ տամկանում էին իւր փալլուն աչքերն, թէ և միշտ պահպանում էր քըստոնէական լաղթանակի կորովութիւնն։ Նորա արտասուքներն ու քաջալերութիւններն կը կնութիւն էին Գեթսեմանիի ու Գողգոթալի Նահատակի արտասուաց և քաջալերութեանց։ Մեր սրտերն տրովում

էին, մեր հոգին խոռվում էր։ Դողում էինք, մի գուցէ վերջին հրաժեշտի բառեր պիտի լսէինք։ Նա տեսնում էր մեր վիճակն. նշմարում էր շատերուս ծածուկ արտասուելն։ Վերջին վայրկենին նա արտասանեց հետևեալ խօսքերն, որ օրինակում եմ նոյնութեամբ նոյն օրուայ գրածներէս և իբրև մասունք պահածներէս։ «Մինչև այժմ ինչքան որ սովորեցիք, այսուհետև Զեր վարքումը պէտք է որ տեսնեն, այնպէս որ Էլ չը հարկաւորուի հարցնելու թէ՝ որ տեղ էք սովորել, այլ որ տեսնեն ինչպէս լոյսը։ Գլխաւորն մանաւանդ, որ մեր վարքով ու գործքով գործակից լինենք մեր Փըրկչին, ցոյց տանք մեր Աստուծոյ որդիութիւնն և լինենք նրա արքայութեան տարածող. ցոյց տանք մեր մարդասիրութեամբ և խաղաղութեամբ, որ նա աշխարհ է եկել։ Իսկ փորձանքներից և նեղութիւններից ամենսին պէտք չէ վախենալ, այլ պէտք է ճշմարտութիւնն պահել, պաշտպանել։ Ճշմարտութեան քննութիւնն փորձանքն է ու նեղութիւնն. այս երկու տեղը պէտք է քննուի Զեր ուսած ճշմարտութիւնն։ Եթէ Կեսար, իւր բաղդին ապաւինած մըրիկներին վստահացաւ և սաստեց, մեր նաւումն Քրիստոս ինքն կը լինի նստած, եթէ մենք տանող լինինք նրա ճշմարտութեան և ուրեմն, եթէ մենք ունինք մեզ հետ և ճանաչում ենք այն Աստուածն, որոյ անունն է Հիմանուէլ, այսինքն Աստուած մեզ հետ, էլ ինչից պէտք է վախենանք։ Տեսնում ենք, որ երկինքն ամպում է և դարձեալ պարզում, էսպէս էլ փորձանքներն հեղեղի նման կը թափուին և կանցնին։ Միշտ յոյս պէտք է ունենանք, որ Աստուած միայն բարւոյն լաջողողն է և գիտէ՞թէ մեզ հանդիպածների վերջն էլ պիտի երեկ Աստուծոյ բարութիւնն և պարզուի երկինքն։ Բայց գլխաւորն այն է, թիւնն ու մենք ինքներս նրան (Աստուած) չը թողունք, սուոր մենք ինքներս նրան

Վորցնենք Նրա ցանկացածն և պահենք Նրա պատուի-
րանքն, Նա մեզ հետ է, մենք էլ Նրա հետ լինինք.
Նրան սիրելի և Նրան որդի։

Այս եղան իւր ուսուցչական վերջին բառերն և
մեկնեցաւ։ Մեկնեցաւ այն հրեշտակն, որ աւետեց մեզ
Քրիստոնէութեան հոգին, վառեց նոյն հոգւով, առաջ-
նորդեց, քաջալերեց։ Մեկնեցաւ և մենք սկսանք ապ-
շութեամբ իրարու երես նայիլ, չեինք հաւատում թէ
հրաժեշտի խօսքեր էին իւր արտասանածներն, վասն զի
այդ իմաստով շատ անգամ խօսած էր։ Տակաւին յոյս
ունէինք՝ թէ յաջորդ դասին պիտի գայ և շարունակէ։
Բայց չեկաւ և իմացանք, որ հրաժարած է։ Ո՞վ կարող
է նկարագրել աշակերտաց տիրութիւնն. կարծես թէ
ամայացաւ Ուսումնարանն։

Զ.

ՈՐ ՊԵՍ ՏԵՍՈՒՀ.

Դաստիարակութեան պաշտօնի նկատմամբ՝ գիտու-
թիւնն ու վարուց սրբութիւնն այն երկու մեծ ոյժերն
են, որոց առջև ամեն բան խոնարհում է։ Պ. Նանշեան-
ցի մէջ սերտիւ միացած էին այս երկու ոյժերն։ Ունէր
գիտութիւն Աստուծոյ, ունէր գիտութիւն Բնութեան
և Մարդոյ և այս գիտութիւնն օծուած էր իւր առա-
քինի վարքով ու բարքով։ Կրօնն նորա համար լոկ ուս-
մունք կամ խօսք չեր, այլ կեանք՝ յաւելուած կեանքի
վրայ, լաւ է ասել՝ կեանք կենաց։ Կրօնն նորա համար
մի գորութիւն, մի սնունդ էր՝ տարածուած բոլոր կեան-
քի մէջ։ Ոմանց գիտնականաց նման նա երբէք ընկած
չեր բանապաշտութեան, այս նենդաւոր դրութան Դա-
միլային ծնկաց վրայ, որ անդամալուծած է և անդամա-

լուծում է շատ ըմբիշներ։ Նա շատ անգամ ասում էր՝
մարդու կեանքն պէտք է լինի վառարան ճշմարտու-
թեան և ոչ թէ արձագանք, և այնպէս էր արդարւ
իւր կեանքն։

Պ. Նանշեանց, երբ իբրև Տեսուչ Վարժարան մը-
տաւ, պատուէր տուաւ բոլոր պաշտօնէից, որ իրենց որ
և իցէ գանգատներն ուղղակի Տեսչն յայտնեն, ուստի
և վերացաւ ծեծն, վերացաւ ականջաքաշութիւն, վերա-
ցաւ մազաքաշութիւնն, վերացան անարգական անուա-
նարկութիւններն, որոնք սովորական էին քանի մի ու-
սուցաց համար, վերացաւ նաև աշակերտաց աղմուկն,
իրար ծեծելն, հայհոյելն և ալլն և ալլն։ Խստութիւնն
չէր, որ յառաջ էր բերում այս բարեկարգութիւնն, այլ
Տեսչի իմաստուն վարմունքն՝ առ ուսուցիչս, և սէրն՝
առ աշակերտս։ Նորա մի նալուածն, մի ակնարկն բա-
ւական էր աշակերտին հասկցնելու իւր թերութիւնն,
եթէ շեղած էր ուղղութենէ։ Նորա անվրդով խօս-
քըն աւելի էր ազդում, քան թէ ալլոց գայրովիթն ու-
սպառնալիքն։ Դադրած էին ՚իսպառ աշակերտաց այն
ճարպիկ հնարագիտութիւններն, որով ճգնում էին որ և
իցէ թերութեան մէջ՝ իրենց անձն արդարացնել և ջա-
նալ՝ ընկերն յանցաւոր հանել։ Վերջացած էին ստախօ-
սութիւններն, կեղծիքն, պատրուակն, ուսուցիչներու
հետ թուանշաններու համար վիճելն, շատախօսութիւն-
ներն, խաբէութիւնն և ալլն և ալլն։

Որքան մեծ էր Տեսչի սէրն, այնքան մեծ էր նաև
աշակերտաց երկիւղն, որ մի գուցէ որ և իցէ կերպիւ
վշտացնեն Տեսչի սիրտն։ Այս սուրբ երկիւղն էր, որ
ինքնին ուղղում էր աշակերտաց վարք ու բարքն։ Դա-
նակութեան և պատժոյ սարսափն երբէք չունէր սոյն ազ-
նուացուցիչ արդիւնքն։ Գանակոծութեան ներքոյ սիրտն
ու կամքն դարձեալ անուղղալ էին մնում, մինչդեռ Դաս-

տիտղակութեան բուն նպատակն է կամքն ուղղել՝ համաձայն կամաց Աստուծոյ՝¹⁾։ Գաջի մզմամբ արյան

¹⁾) — Պ. Շանշեանցի տեսչական ազդեցութեան մասին հարկ եմ համարում, յիշողութեանս մէջ մնացած բաղմաթիւ գէպերէն մի բանի հատն յառաջ բերել։ — Նորաշէն եկեղեցւոյ Տ. Սրապիոնի միտք որդին՝ Ստեփանի անուանում (որ բժառ լինելուն համար՝ վրացերէն բառով՝ Պանօ էին անուանում) խոշորանձնեայ ստահակ, մի օր զբօսանքի ժամանակ զարկած էր մի աշակերտի և սա գնալով Տեսչի բնակարանն (որ վարժարանի հանդէպ էր) գանգատած էր և Տեսուչն պատուեր զրկած էր, որ Ստեփան, վարժարանի երկու ոռւս սպասաւորներն առնլով՝ իջնէ ստորին յարկի մի սենեակն և ինքն պառկելով՝ ծեծել (ձաղկե) տայս: Աշակերտք լսելով զարմացան, որովհետև հին դրութեան էր վերաբերում այս պատիժն և ձաղկոցներն անգամ (իրարու հետ կապուած երկայն բարակ ոստեր) վերցածէին և նոր պիտի պատրաստուեին: Ստեփան, որ նախորդ տեսչութեանց օրով՝ դիմադրութեամբ և բռնութեամբ կրած էր սոյն պատիժն, հետն առաւ մի քանի ընկերներ, որ վկայ լինին իւր հոռոմեան, իջաւ նշանակած սենեակն, ուր սպասաւորք պատրաստ էին՝ ձաղկոց՝ ի ձեռին, ինքնին պառկեցաւ, բայց վերակացուն, որ ներկայ էր, գաղտնի պատուէր ստացած էր՝ հնազանդութիւնն տեսած ժամանակ՝ իսկոյն արգելուլ ձաղկելս, վասն զի ինդիրն միայն յանցանքն ճանաչելու և հլու գտնուելու վրայ էր: Գէորգ Աղայիանց, Մողդոկ գաւառ էն, ընկերակցին հետ վէճի բոնուելով անարդական բառ արտասանած էր և այս առթիւ, ընկերակցի գանգատանաց վրայ, կոչուած էր Տեսչէն: Շատ լաւ միտս է, որ նոյն օրն կիւրակի էր. աշակերտներէն ոմանք սերտարանի մէջ էին, ոմանք ձեմում էին ընդարձակ կօրիդորի (միջանցքի) վրայ: Աղայեանց մեծ վրատահութիւն ունէր իւր ճարտարախօսութեան վրայ՝ թէ Տեսչին երթալով՝ պիտի արդարացնէ իւր անձն: Սակայն վերադարձաւ լալով: Բարձր գասարանի ընկերակիցք հետաքրքիր եղան պատճառն իմանալու: Ի՞նչպէս խօսեցար. ի՞նչ ասաց Տեսուչն, միմէ յանդիմաննց. — ոչ, ոչ, երբ սենեակն մտայ և երբ հարցուց բաղցրութեամբ՝ թէ ի՞նչ ունիս, Աղայեանց,

Պ. Շանշեանցի ազդեցութիւնն մեծ էր նաև ուսուցչական դասուն վրայ: ¹⁾ Նորա տեսչութեամբ, ոչ միայն ուսումնարանի համբաւն, այլ և աշակերտաց պատիւն բարձրացաւ: Գիշերօթիկ աշակերտներն կամ որդեգիրներն միաձև սև հագուստ ունեին: Պ. Շանշեանցի տեսչութեանէն առաջ, ամեն անգամ որ խմբովին կամ կարգաւ եկեղեցի, զբօսանքի կամ բաղնիք էինք գնում, քաղաքի, ճանապարհներէն անցնելով՝ անարգական խօսքեր էինք լսում. — ըելեխ (ննջեցելոց հոգեհաց) ուսողի, մոլուքուս (ձբի) հաց ուսողի, և այլն: Խոկ երբ նոր Տեսուչն, իւր պատկառելի կերպարանքով, զայելուչ հագուստով և վեհ ընթացքով, սկսաւ ընկերանալ մեզ, ոչ գուստով և վեհ ընթացքով, սկսաւ լալ և իրարմէ բողութիւն ինդիրեցին:

¹⁾) — Պ. Միք. Պատկանեանց, ուսուերէնի աւագ ուսուցիչն (հմուտ նաև հայերէն և ֆրանսերէն լեզուաց ու բաց թարգմանող) մի օր աթոռէն ելաւ մի աշակերտի մաքերն քաշելու, և սոյն վայրկենին յանկարծ դասարան մտաւ Պ. Շանշեանց: Սկսան իրարու հետ ֆրանսերէն խօսիլ, մենք տակաւին տկար էինք նոյն լեզուի մէջ և Տեսչի նպատակն էր անշուշտ, որ աշակերտք չը համեսն ուսուցչին ուղղած խօսքերն: Սակայն Պատկանեանց չը կարաց զսպել իւր յուղումն, դարձաւ աշակերտներուն — ինդիրեմ, ասացէք, թէ ներկայէս զտա, պ. Տեսչի պաշտօնավարութեան ժամանակ (որ երկու տարիէն աւելի է) ես երբէք աշակերտի մազքաց կամ ծանր խօսք արտասանած եմ: — Ոչ, ոչ, պատասխանեցինք ամենքս. և Տեսուչն աշակերտաց ևս քանի մի խրատական խօսքեր ուղղելէն զկնի, մեկնեցաւ: Ա՞և, Տիգրան, (մաղերն բաշուածի անունն) ասաց Պատկանեանց, պատճառ տուիր, որ թէ ես վշտանամ և թէ ազնիւ Տեսչի սիրուն վշտացնեմ:

նստածներն ոտքի էին կանգնում և անցուդարձ անողներն բացւում ու ճանապարհ էին տալի աշակերտաց ինչու չը լիշեմ նաև շատերու բերնէն լսուած անմոռանալի խօսքերն. «Ձեր հոգուն մատաղ, Հայ տղերք. մեր եկեղեցիներն ու վարժարաններն ձեզմով պիտի պայծառանան»: Այս խօսքերն շատ անգամ վրացերէն էին կրկնում:

Պ. Շանշեանց անբաժան էր մեզմէն: Երբ քաղաքէն դուրս էինք գնում զքօսանաց համար, ինքն էր, որ 'ի գարնան առաջնորդում էր մեզ Վերայի վտակին կանաչազարդ հովիտն: Ինքն էր, որ առաջնորդում էր Թածմինդայի սարահարթն, որոյ բարձունքէն ամբողջ Թիֆլիսն պատկերանում է իւր ամեն գեղեցկութեամբ, իւր բազմազարեան Կուրով, որ քաղաքն երկու բաժնելով հոսում է մերթ հեղասահ, մերթ շառաչաձախ¹⁾:

1) — Այդ սարահարթէն սակաւ ինչ հեռի մի գիւղ կար (անոնն մոռցած եմ), որոյ բնակիչներուն համար մի յարգելի, չասեմ պաշտելի անձնաւորութիւն էր Պ. Շանշեանց: Ամեն անգամ, որ նշմարում էին թէ սարին վրայ խաղում ենք, և շատ անգամ մօտենում էինք իրենց գիւղին, իրարու իմաց էին տալի, բերում էին մեզ համար՝ կաթ, մածուն, հաց, ամեն սպասներով: Կարգ կարգ նստում էինք և ուտում: Ցնծութեան խրախճանի օր էր Լինում մեզ համար, վասն զի որդեգիրներս մեծ մասամբ գիւղացի էինք, սերով, կաթով և մածով մեծցած: Գիւղացիներն զմայլմամբ նայում էին մեզ վրայ. ամենքն մի հագուստ ունին, ասում էին իրարու, ամենքն սիրով են, ամենքն կարծես եղբայր են, զմայլում էին մանաւանդ Տեսչի վրայ, որ պյառան զաւակներն իրեն հնաղանդ են: Այս ծաղկահոտ սեղանէն, այս սուրբ ճաշէն զինի Տեսուչն շնորհակալութիւն էր մատուցանում (անշուշտ և պարգև էր տալիս) վրացերէն լեզուաւ, քանզի վրացախօս էին: Լսած էինք, որ ինքն իբրև նախնի Ազնուականի զաւակ՝ սեպհական գիւղ ունի, բայց թէ այս

Նա ինքն էր, որ ամրան արձակուրդին առաջնորդում էր մեղ՝ լողալու¹⁾ Կուր գետի մէջ և վարժեցնում էր: Նա ինքն էր, որ աշնան ալգեկութին երբեմն առաջնորդում էր 'ի Կրծանիս (Ծիրանաւոր)²⁾, ուր շատ

գիւղն էր կամ մի այլն՝ չը գիտէինք, զի ինքն իւր անձին կամ ունեցածին վրայ երբէք չէր խօսում:

✓ Պ¹⁾ — Պ. Շանշեանց բաջ լուղորդ էր. ինքն գետի Խոր կողմէն լողալով՝ ընկերանում էր աշակերտներին, որ չը վախան և քանի փորձերէն զինի պատուիրում էր որ վախկոտներն՝ խոր կողմն չերթան: Դժբաղդաբար՝ ես ջրասուզութեան երկուտներէն էի, մինչդեռ ընկերակիցներէս շատերն բաջ վարժեցան լողալու: Պ. Տեսչի բոյն գետի միւս ափն էր բնակում, մեր լողալու աւարտումէն զինի, երբեմն իւր հագուստներու ծրաբն գլխի վրայ դնելով, առանց թըրցելու, անցնում էր միւս ափն, հագնում և բրոցն այցելում: Այս առթիւ յիշեմ մի դէպք, թէ մինչև ո՞ր աստիճան կարող է աղդել առաքինութեան մարմացումն: Մի օր, Տեսուչն առաջնորդեց մեզ դէպի գետն, իսկ ինքն մնաց Վորոնցովիեան կամրջի վրայ, որուն մօտ էր մեր լուացուելու տեղին: Քանի մի ստահակներ բռնած էին այդ տեղն և առ ոչինչ էին համարում վերակացուի սպառնալիքներն՝ հեռուն երթալու և այնտեղ լուացուելու: Աշակերտներն չէին հանում, և Տեսուչն կամրջի վրայէն նշմարելով՝ եկաւ հասաւ և իւր սովորական անվրդով վեհութեամբ ասաց. «Ապէտք է որ հեռուն երթարձակ է»: եթէ չերթաբ, ձեզ հետ չեմ խօսիլու: — Մի բարկանար, աղա ջան, հոգուդ մատաղ, գոչեցին ամենքն և իսկոյն իրենց հագուստներն ժողովելով գնացին բաւական հեռի: Ապա Տեսուչն դառնալով վերակացուին՝ ասաց. «Երեմիա, պէտք չէ որ կոռարարի պէս խօսիս մարդիկներու հետ»:

2) — Ինչպէս սոյն ուխտատեղւոյն, նոյնպէս Թէլէլթի, Շահնալըաթի, Ծվինդիսի և այլ քանի մի ուխտատեղւաց արդիւնքներն, Ներսէս ս. Հայրապետի տնօրինութեամբ,

անդամ կանուխ հասնելով՝ մասնակցում էինք ժամերգութեան. հայն ու պանիրն, գեղձն ու խաղողն ճաշակում էինք իբրև համադամ, զբօսնում էինք, երգում էինք, և ապա ցնծութեամբ դառնում էինք 'ի վարժարան:

Ա. իս, չեմ կարող պատմել՝ թէ ինչ մեծ ազդեցութիւն ունէր Տեսչի ընկերակցութիւնն աշակերտաց վըրայ: Իւր խօսքերն՝ զբօսանաց ժամանակ, ուտելու ժամանակ, քաղցրու ժամանակ՝ սքանչելի դասեր էին: Կային աշակերտներ, որ ետևէն քայլելով՝ կոխում էին նորա ոտնատեղիներն, կարծելով թէ կը վարժին նորա պէս վեհ քալուած ունենալ, նորա պէս շնորհալի ձեռնենալ:

Միայն զբօսանքներն, խաղերն, լոգանքն, մաքրութիւնն չէին աշակերտաց ողջպահիկ միջոցներն: Բազմահմուտ Տեսուչն մարմնաւոր առողջութիւնն, հիմն էր համարում հոգւոյ առողջութիւնն, բարոյական առողջութիւնն: Բաց յախանհէ, նա քաջ օմէօպատ էր: Թէև ուսումնարանն յատուկ բժիշկ ունէր, որ միշտ այցելում էր Դպրանոցն, բայց գլխաւորապէս Տեսուչն ինքն էր, որ իւր օմէօպատ հրահանգներով ու դեղերով առաջն էր առնում ցրտէ, տաքէ և այլ պատճառներէ պատահած հիւանդութեանց: Ո՛չ միայն աշակերտներն էին, որ օգտում էին նորա բժշկական խրատներէն և օմէօպատիկ դեղերէն, այլ և շատ չքաւոր ընտանիքներ, որոց համար Պ. Շանշեանցի բնակարանն մի սփոփանաց վայր էր: Նորա տեսչութեան շրջանին մէջ երկու աշակերտ միայն զոհ եղան մահուան—Հայազարնանց Ղզլարեցի և Զերքեզահայ Խաչատուր՝ Ար-

Դպրանոցին յատկացուած էին, Հոգաբարձութեան հսկողութեան և պատախանատութեան ներքոյ:

մաւիրցի. առաջինն արդէն հիւճախտաւոր եկած երկրէն, որուն առջևն չը կարացին առնուլ ոչ միայն ամենօրեայ բժշկի, այլ նոյն իսկ բժշկապետ Հախվերդիւնցի մասնաւոր խնամքներն. իսկ երկրորդն վախճանեցաւ քոլերալէն:

Ս. Վարդանանց տօնն և Աւագ Հինգշաբթին, մեզ համար ցնծութեան օրեր էին: Վարդանանց տօնին՝ ինքն Տեսուչն յատուկ պատարագ էր մատուցանել տալի ՚ի յիշատակ մեռելոց. իսկ Աւագ Հինգշաբթին՝ Տեսուչ և աշակերտք՝ ընդունում էին Ս. Հաղորդութիւն: Ալդ երկու օրերն՝ Տեսուչն սեղանակից էր լինում մեզ և իւր կողմէն պատրաստում էր մի մի բաժակ գինի աշակերտաց համար: Այնքան անջինջ տպաւորութիւն է ունեցած սրտիս վրայ (անշուշտ նոյն շրջանի բոլոր աշակերտաց) այդ օրերու յիշատակն, որ այսօր իսկ, ծերունի հասակիս մէջ, կարծում եմ թէ՝ Պ. Շանշեանց բազմած է սեղանի գլուխն և մենք ճաշում ենք իրեն հետ, այս տարբերութեամբ միայն, որ այն ճաշերուն ժամանակ՝ ուրախութիւն ու զուարթութիւն էր փալատակում մեր դէմքերուն վրայ: Իսկ այսօր գրելու պահում՝ արտասուաց շիթերն ինքնին թորում են աչքերէս և կաթկաթում գրածիս վրայ: Ա. իս, քաղցը յիշատակներ, ախ երջանկութեան օրեր...:

Է.

ՈՐՊԵՍ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄԱՐԴ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻ

Պ. Պ. Իզմիրեանց ասում է դամբանականին մէջ՝ «Նա ամեն համախմբութեանց զարդն էր և իւր բազմակողմանի հայեցուածքով ու նկատողութիւններով օգտակար անդամ ամեն հասարակին հարցերի մէջ»:

Նրա առաջարկութիւններն միշտ յարգւում էին և ընդունում իբր անկեղծ հոգւոյ ներշնչումներ»: (Նորդիալ 1889. № 39):

Պ. Եւանգոլեանց գրում է կենսազրականին մէջ— «Պ. Շանշեանց տեսչութենէն հրաժարելով և 'ի Պետերբուրգ վերադառնալով բնակում էր իւր Նիկողայոս եղբօր գերդաստանին մէջ, որ կեդրոն էր դարձած երիտասարդներուն, որոնք նոյն ժամանակ ուսանում էին Պետերբուրգի կրթական բարձրագոյն հաստատութեանց մէջ: Նոյն ժամանակի ուսանողներն մինչև ցայսօր զմայլմամբ են խօսում այն քաղցր ժամերուն վրայ, որ անցնում էին նոքա հեղինակներու, նկարիչներու և գեղարուեստասիրաց ակմբին մէջ 'ի տան Շանշեանց: Ի. Ի. Փանային, Նեկրասով, Գրիգորովիչ, Սիկէշին, Սօկոլով, Տամբերլիկ, Կալցոլարի, ահա այն ընկերական շրջանակն, ուր շնորհիւ պ. Շանշեանցի խայտում էր Կովկասեան համալսարանական երիտասարդութիւնն...: Պ. Շանշեանց պատկանում էր այն մարդկանց դասուն, որոնք մեծ ազգեցութիւն ունին շրջապատողաց վրայ, ոչ թէ իրենց երկասիրութեանց բազմաթիւ հատորներով, այլ իրենց զօրաւոր ու խորին համոզմունքով և իրենց գաղափարներու սրբութեամբ: Այս բանիս մէջն էր նորագրաւիչ զօրութիւնն, որ զգալի էր իւր ամեն աստիճանի և ամեն կարգի բազմաթիւ բարեկամաց, որոնք ինչպէս անկեղծ ակնածանօք յարգած էին 'ի կենդանութեան, նոյնպէս և անջինջ պիտի պահեն անշուշտ նորա յիշատակն իրենց սրտերուն մէջ նորա մահէն զկնի»: (Նոր. Օքոզ. 1889. մարտ 14):

Պ. Մարկոս Աղաքէզեան գրում է.—«Ես իմ կեանքում միայն մի անձն ճանաչեցի, որ իր կեանք՝ իր դաւանած վարդապետութեան հետ միացած լինի: Դա, այդ մարդն էր պ. Շանշեանց, որ իրան ճանաչողներն իր

վրալ հիացնելէ և սքանչացնելէն ուրիշ ազդեցութիւն չէր աներ: 1853-ին, երկու անգամ իւր դասախոսութեանց ներկայ գտնուեցայ Ներսիսեան Ուսումնարանում: Դասախոսում էր հեղինակելով և կենդանի բարբառով: Իոլոր ուսանողք՝ ականջ ու միտք էին եղած լսելու և ըմբռնելու իւր դասերն:... Պ. Շանշեանց, ոչ միայն յարգուած ու սիրուած էր իր աշակերտներէն, իր ընկերներէն ու բարեկամներէն, հապա նաև երևելի վարչական պաշտօնեայներէ, զինուորական մեծ աստիճանաւորներէ, մեծանուն քաղաքացիներէ: Ես իմ աչքովս տեսայ, որ Ներսէս Կաթողիկոս անձամբ հիւանդաս գնաց անոր խոնարհ յարկին մէջ: Այդ անձնաւորութիւն, ոգեգորդուած ու կենդանացած քրիստոնէական ուսմունքով ու վարքով, ոգեգորդում ու կենդանացնում էր իր խօսքով ու բարքով իրան մօտեցողներուն ու խօսակիցներուն: Հայրենիք, 1892 յունիս 16:

Ինչպէս որ նկարագրում են պ. պ. Իզմիլեանց, Եւանգուլեանց և Աղաբէգեան, արդարե սքանչելի էր պ. Շանշեանցի ընկերական կեանքն: Մենք ևս պատմենք մեր տեսածն:

Ներսիսեան ուսումնարանի հանդէպ կար մի երկայն շարք (թերևս կայ մինչև ցայժմ) միայարկ, կամարաւոր խանութներու¹⁾, որոց կեդրոնին մէջ միայն բարձրանում էր մի աշտարակաձև շէնք քանի մի սենեկաներով: Մեր տեսուչն այստեղ ընտրած էր իրեն համար բնակարան, որ մի տեսակ դիտարան էր, որոյ առջև կանգնած էր Դպրանոցն իւր մտից բարձրակամար գռներով, գեղեցիկ պատշտամներով և լուսաւետ դասարաններով: Եթէ մենք, բոլոր

¹⁾ — Պատմում էին թէ՝ ս. Հայրապեան, իւր վիճակաւոր առաջնորդութեան ժամանակ՝ նաև սոյն հասութաբեր կրպակներն շինել տուած է և ապա Դպրանոցն:

մեր վարմունքով ու շարժմունքով, Տեսչի աշաց առջևն էինք, նոյնպէս մեր հանդէպ էր նաև ինքն Տեսուչն: Նատ անգամ, երբ մենք ճեմելով իրարու պատմում էինք մեր դասերն, տեսնում էինք, որ Տեսուչն ևս առանձինն, կամ որ և իցէ ուսուցչի կամ բարեկամի հետ, ճեմում է երկայնաձիգ խանութներու տանեաց վրայ, որ թանձր հողով ծածկուած ճեմավալը էր, ինչպէս որ և Թալրանոցի տանիքն զբօսավալը մեզ համար:

Նատ հազիւ էր պատահում, որ Տեսուչն բացակայ լինի կամ վարժարանէն, կամ իւր բնակարանէն, և դիտուած էր որ այդ բացակայութեան միջոցին իսկ կոչուած է ո. Հայրապետէն Թիֆլիսում գտնուած տարիներում: Սակայն իւր այցելուներն անպակաս էին, մասնաւանդ երեկոյեան ժամանակ, և մեր նշանած այցելուքն (բաց ՚ի ուսուցիչներէն) էին գլխաւորապէս պլ. պլ. Դաւիթ Մելիքեան, Ստեփ. Սարգսեան, Յ. Մարկոսեան, Գ. Իզմիրեան, Հայսվերդեան եղբարք, և այլն, որոնք Կովկասիոյ Փոխարքայական Կառավարութեան զանազան ճիւղերու մէջ նշանաւոր պաշտօններ ունէին, իրենց լուրջ բնաւորութեամբ և հաւատարիմ պաշտօնավարութեամբ վայելում էին Տէրութեան վստահութիւնն, բայց էին միանգամայն խօհեմ և շրջահայեաց ազդամէրներ, յարած էին Պ. Նանշեանցի բարձրագույն գործառնութեան առաջնորդ աշխատական: Նանշեանցի բարձր գաղափարներուն:

Այդ պետական պաշտօնեայքն շատ անգամ ժողովւում էին Պ. Նանշեանցի բնակարանն, մեծ ուշադրութեամբ լսում էին կանխաւ մեր սաներում պատրաստած քարոզներն, որ պիտի կարդայինք եկեղեցեաց մէջ, իւրաքանչիւրն յայտնում էր իւր դիտութիւնն և ապա միայն այն քարոզներն էին որոշուում ՚ի լուր ժողովրդեան խօսելու, որոնք հաւանութիւն էին ստացած Տեսչի այցելուներէն:

Այցելուք աւելի բազմաթիւ էին լինում, երբ մեր գրածներն կարդում էինք ուսումնարանի հոյաշէն դահլիճն մէջ պատրաստուած ամբիոնէն: Ունկնդիրներն ելնում էին Դպրանոցէն իրենց սիրտն այնտեղ թողլով: Տեսուչն դաստիարակութեան վսեմ խորհրդով և ընկերական բարձր գաղափարներով կապում էր ժողովուրդն վարժարանին հետ: Կապ կրթական, կապ ընկերական ահա ազդեցութիւն ճշմարիտ դաստիարակութեան¹⁾: Պ. Նանշեանց ծանօթ անձնաւորութիւն էր ո՛չ միայն Հայոց, այլ նաև Վրացւոց իշխանական դասուն համար: Զէին ծածկում նրամէն իրենց խորհրդներն, ճանաչելով որպէս ամենախոհեմ և բարի քաղաքացի:

Երբ Աղէքսանդր Նիկոլայէվիչ, իբրև թագաժառանգ, այցելութեան ելած էր ի Կովկաս, Թիֆլիսի Քաղաքագլուխն, լուսավառութեան առթիւ, յատկապէս գիմած էր Նանշեանցին թէ Բնէ խորհրդանշանով պէտք է զարդարել փոխարքայական պալատին հանդէպ պատրաստած վենգելական պաստառն: Նանշեանց յանձնաբարած էր հայերէն և ուսուերէն գրել այս Սաղմոսն: «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեցին»: Լուսոյ Կոհակներուն մէջ ցոլացած այս խօսքերն ոչ միայն բազմախուռն հանդիսատեսներու հիացումն, այլ նաև ժագագառաւանդին ուշադրութիւնն գրաւած էին:

Զեմ կարող մոռնալ և միշտ արտասուօք պիտի լիշեմ այն տխուր օրն, երբ Պ. Նանշեանց քանի մի

¹⁾ — Զէնք կարող ասել արդեօք թէ սոյն աղդեցութեան արդիւնքն էին ժողովրդի մէջ տարածուած ազգային երգերն, ապա պատմական, թատերական ներկայացումներն, որոնք դժբաղդաբար յետ ժամանակաց շեղելով իրենց նպատակէն՝ կորուսին իրենց նշանակութիւնն:

ամսէն ի վեր հրաժարած էր տեսչական պաշտօնէն (որոց վրայ յետոյ պիտի խօսիմ, մեկնում էր Թիֆլիսէն ի Պետերբուրգ, բազմաթիւ ուղևորաց մէջ գտնւում էր նաև վրացի Հերակլ արքայազունն (ի մօրէ Հայ): Սա իւր մէջքը կապած թանկագին դաշոյնն փոխանակեց Պ. Շանշեանցի դաշոյնին հետ ի լիշտառակ անմուացութեան: Ուղևորողը յարտասուս շարժեցան, Շանշեանց տատանեցաւ, բայց Հերակլ ջերմ համբոյներով պարտաւորեց անպատճառ ընդունիլ:

Պ. Շանշեանց արդէն ճանապարհորդութեան լատուկ իւր ընտիւր չէրքէզի հոգուստն հագած էր. տուաւիւրն և Հերակլի դաշոյնն կախեց մէջքը կապած կամարէն: Շատ գոհ եղաւ արքայազունն և քանից համբուրեց գգուանօք:

Ի՞նչ խօսքեր անցան այս բաժանման պահուն, չեմ կարող մի առ մի գրել: Ընթերցողաց խորհրդածութեան եմ յանձնում՝ այս վսեմ դէպքն, թէ ի՞նչ էր խորհրդաւոր շարժառիթն, որ արքայազունն իւր դաշոյնն փոխանակում էր մի առաքինի քաղաքացու, մարդկութեան մի աննման դաստիարակի դաշոյնին հետ....: Արդեօք կամենում էք հասկացնել՝ թէ ընկած ազգերու կանգնումն կախուած է բարոյական սպառազինութենէն և ոչ լռկ նիւթականէն....:

Պ. Շանշեանց, իբրև ընկերական մարդ և ճշմարիտ քաղաքացի ունէր իւր յատուկ դաւանութիւնն, ըստ ամենայնի ս. Գրոց հոգւոյն վրայ հիմնուած, որ ամեն հայրենասէրներու համար կարող է նշաբաբան լինիլ. «սիլել հայրենիքը և ազգը, որուն անձամբ օրինակ տուած են, ոչ միայն Մովսէս, Դաւիթ և ալլք, այլ և մեր Փրկիչն: Հնազանդիլ հայրենեաց օրէնքին, եթէ հակառակ չեն աստուածալին օրինաց: Եթէ վնասակար և ընդդէմ են անձնական օգտի, դարձեալ պէտք

է սիրով ընդունիլ: Տալ հարկ ճշտութեամբ՝ Տէրութիւնն պահպանելու և բարելաւելու համար: Հեռանալ ամեն չարագրդիու պատահմունքներէ և ամեն բանէ, ինչ որ կարող է երկրի խաղաղութիւնը վրդովել. իսկ ընդհակառակն՝ աշխատիլ, որ բարենորդումն ամեն բանի մէջ՝ լինի խաղաղ և օրինաւոր ճանապարհաւ: Վերջապէս պարտինք աշխատիլ ընդհանուրի համար. աշխատիլ մեզմէն կախեալ ամեն տեսակ զոհաբերութեամբ, եթէ անշուշտ կարեոր է անձնազոհութիւն, որոյ գեղեցիկ օրինակներն խիստ շատ են պատմութեան մէջ»¹⁾:

Պ. Շանշեանց, իբրև ընկերական մարդ և մանաւանդ իբրև ազնուականի զաւակ, ունէր քաջ մարդու պատրաստականութիւն: Իւր ճոխ և ընտիր մատենադարանի դիմահայեաց պատէն կախուած ընձու մորթին վրայ՝ ճաշակաւ զետեղուած կային իւր դաշոյնն ու կամարն, իւր ատրճանակն ու վառօդարանն, ամենքն ևս չերքեզական ընտիր կերտուածով: Ունէր նաև չերքեզական հոգուստ, ինչպէս իշշած ենք, ճերմակ գլխարկով և մուշտակով՝ ազնուականաց յատուկ տարագէն: Ունէր նոյնպէս յատուկ թամբ և հեծելութեան ամեն կարեոր հանդերձանք. քանզի ինքն ևս քաջ ձիավարներէն էր:

Զատկական օրերուն մէջ, Վէճիս գիւղի, իւր հօրենական կալուածի, նշանաւորներն իւրաքանչիւր տարի գալիս էին գառներու նուէրներով և մասնաւոր ձիէին բերում՝ գիւղատէրն իւր գիւղացւոց այցելութեան տանելու համար: Պ. Շանշեանց գառնուկներն նուիրում էր աշակերտաց և ինքն հեծած իւր նժոյգն, աջու ձախ և ի լետուստ ունենալով գիւղացի ձիաւոր-

¹⁾) — Ուսումն պարտուց. Տպագր. Երուս. եր. 132.

Ներն։ Սոլոլակի քաղաքամիջէն անցնելով գնում էր ի Վէճիս, ուր մի օր մնալէն և շինականներն մխիթարէլէն զկնի, նոյն հանդիսաւորութեամբ դառնում էր իւր բնակարանն։

Ը.

ՈՐՊԵՍ ԱՍՏՈՒԱԾՍՅԻՆ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԻՐՈՎ ՎԱՌՈՒԱԾ-ՔՐԻՍՏՈՆԵԱՑ

Պ. Շանշեանց, ինչպէս որ մի գեղատիպար էր մարդկային ընկերականութեան, նոյնպէս մի հոգեշունչ ներկայացուցիչ քրիստոնէական բարեպաշտութեան։ Արտաքին աստուածպաշտութիւնն, առանց ներքին հոգեկանին, փարիսականութիւն էր, յորմէ սոսկում էր; Նախ հոգեկանն, տպա արտաքինն իբրև ծնունդ։ Նա շատ անգամ լեզեղում էր Օգոստինոսի խօսքն։ «մարդոց սիրտն ստեղծուած է Աստուծոյ համար», և կը հանգըստանայ միայն Աստուծոյ մէջ կեանքի պատերազմէն զկնի, եթք պատերազմած է արդարութեան համար՝ անարդարութեան դէմ, միրոյ համար՝ ատելութեան դէմ, ճշմարտութեան համար՝ ստութեան և մոլորութեան դէմ։ Պատերազմով է, կրկնում էր նա, որ մարդ կը մեծանայ և կը գործակցի իւր Արարչին՝ իւր հոգւոյ նորոգութեամբ։

Ներսիսեան դպրանոցի սանուց լաճախած եկեղեցին Քամոլէնց կոչուած եկեղեցին էր, որ միայն մի քահանաց ունէր, որովհետեւ լատուկ ծուխ կամ ժամուռ չունէր։ Աշակերտաց լաճախելով բազմացաւ ժողովուրդն։ Աշակերտք մասնակից էին բովանդակ ժամերգութեան—իրենք էին դպրապետն ու դպիրն, իրենք

էին սարկաւագն ու բուրվառակիրն, իրենք էին մինչեւ անգամ քահանայի գանձանակն շրջեցնողն։ Կարգաւորութիւն ու պատկառանքն տիրում էր գասերուն մէջ, սեղանին վրայ, թափորի ժամանակ։ Շարական երգողներն սակաւաթիւ էին, բայց ս. Պատարագի արարողութեան ժամանակ երգակցութիւնն ընդհանուր էր։

Աղնիւ Տեսչի ներկայութիւնն մի մեծ քաջալերութիւն էր աշակերտաց աղօթասիրութեան։ Նա կանգնում էր ժողովրդեան մէջ, աչքերն յառած սեղանին։ Ս. պատարագին յատուկ սովորականներէն զատ՝ չոքում էր նոյնպէս ամեն ասուրը Աստուսած» երգուած ժամանակ։ Հարկ չկայ բացատրել թէ՝ Տեսչի քրիստոնէական օրինակելի կեանքն և աշակերտաց եկեղեցամէր ու բարեպաշտ կրթութիւնն խոր տպաւորութիւն ունեցան ժողովրդեան վրայ։ Սկսան հետզհետէ հնչել ամեն բերանէ, հոչակուիլ ամեն գրչէ այս սուրբ բառերն—Ազգեւ եւ եկեղեցի։ Այսպէս, Ներսէս Հայրապետի հիմնած նիւթական Դպրանոցէն հիմնեցաւ այն բարոյական մեծ դպրանոցն, որ կարելի է անուանել քրիստոնէական հոգւույ զարթուցման, ազգային հոգւույ սթափութեան դպրանոց և սորա հիմնադիրն եղաւ մի մեծախորհուրդ դպատիարակ, մի ամբիծ հայրենասէր, մի ճշմարիտ քրիստոնեայ՝ խօսքով ու կեանքով—Պետրոս Շանշեանց։

Այս ամեն կրթական բարիքներու հանդէպ չարութեան ոգին քնացած չէր, տակաւին Ս. Հայրապետի կենդանութեան ժամանակ սկսած էր որոմներ սերմանել՝ իբր թէ դպրանոցի մէջ ազատութեան երգեր են երգւում։ իբր թէ կառավարութեան հակառակ դասեր են աւանդւում ևալլն ևալլն։¹⁾ Բայց վերադիտող սրա-

¹⁾ Մի գիշեր ուսումնարան գալով երեք հոգաբարութերն և բարձրագոյն դասարանի սաներն 'ի խորհրդարան

տես Հայրապետն դիտում էր ամեն բան և իրմէն սար. սափում էր չար ոգին: Միայն Ս. Հայրապետի մահն էր ուրեմն չար ոգեոյն փափաքն, որպէս զի ազատ գործէ: Եւ արդարեւ այսպէս իսկ եղաւ. Երանաշնորհի յանկալծական մահէն զկնի, չար ոգին կրօնասիրութեան կերպարան մտաւ, սկսաւ կասկած սփռել ուսումնարանի կրօնական դասուց նկատմամբ: Բայց ժողովուրդն ճանաչում էր իւր ուսումնարանն և բնաւ կասկած չ'ունէր:

Ս. Հիմնադրի մահէն զկնի՝ Զալալեանց Սարգս Արքեպիսկոպոսն, մի կողմէն փափաքում է 'ի սրտէ համակերպիլ Տեսչի հրաժարականին, միւս կողմէն երկնչում է ժողովրդէն: Հոգաբարձուաց և աւագ ուսուցչաց հետ խորհուրդ կազմելով մի գրաւոր յայտարարութիւն է զբկում պ. Շանշեանցին, ըստ այնմ շարունակել իւր պաշտօնն, յախտնելով թէ Ս. Հայրապետի կենդանութեան ունեցած կամքն է, որ հազորդում է: Պ. Շանշեանց նկատելով որ շատ հեռի է այդ յայտարարութիւնն Ս. Կաթողիկոսի կամքէն՝ չէ ընդունում, մանաւանդ նշմարելով՝ որ մի անյայտ անձն պիտի ներկայ գտնուի ամեն դպրոցական խորդակցութեան և գիտութեանց դասախոսութիւններն, փոխանակ հայերէն լեզուաւ աւանդուելու, կիսով չափ պիտի աւանդուին ուռսերէն և Փրանսերէն: Իսկոյն մի այլ յայտարարու-

կոչելով՝ սկսան հարցաբննել թէ՝ ի՞նչ երգեր են երգում: Երբ տեղեկացան ամեն բանի, ուրախութեամբ վերադարձան: Յետոյ իմացանք, որ գաղտնի ոստիկանութիւնն, մի չար ոգւոյ մատնութեան վրայ հիմնուելով՝ ազգարարութիւն արած է Հայրապետին և նա Տեսչի դիւրազգածութեանն ըստ դիպչելու համար՝ ուղղակի հոգաբարձուաց հրամայած է քննել և տեղեկութիւն հաղորդել իրեն:

թիմ¹⁾ է զրկում իրեն, իւր նկատած կէտերն փոխուած և ըստ այնմ շարունակում է իւր պաշտօնն մինչև նոյն տարուայ (1857) 7-ն դեկ.:

Սակայն Ս. Զալալեանց միջտ անհանգիստ է լինում և հնար է որոնում տեսուչն հեռացնելու: Մի օր խորհուրդ է կազմում իւր մօտ, ուր հոգաբարձուներէն զատ գտնուում են Եջմիածնի պղոկուրօր Յովհաննէս Միքայեանցն, ինքն տեսուչն, աւագ ուսուցիչներն կարիսնեանց և Պատկանեանց, և յայտնում է, որ դպրոցի տնօրէնութիւնն իրեն է պատկանում իրեւ Առաջնորդի և մտադիր է նոր կարգադրութիւններ մուծանել: Պ. Տեսուչն իսկոյն գլխարկն առնլով և հրաժեշտ տալով, իւր հրաժարագիրն ուղղակի դրկում է յանուն Տեղապահին Ս. Եջմիածնի:

Նատ անցքեր են անցնում թէ դպրանոցի և թէ ժողովրդեան մէջ ընդ. ս. Արքեպիսկոպոսի: Պ. Շանշեանց արդէն Պետերբուրդ գնացած է: Ս. Զակերտներն զեանց արդէն Պետերբուրդ գնացած է: Ս. Զակերտներն զանով են ս. Առաջնորդին իւր կարգած Տեսուչն (Արդարանով) փոխելու. լուսադրուում դպրանոցն են զանում և սակայն գիշերուան ժամանակ ոստիկաններու միջոցաւ բանտն են տարւում: Առաւօտեան քաղաքն դըրքաւ գում է սոյն լրոյն վրայ, խռնւում են Առաջնորդարան և իսկոյն ազատել տալի բանտարկուածներն: Ժողովը գեան դժգոհութիւնն ու զայրոյթն հետզհետէ աւելանում է Զալալեանի դէմ. Տ. Մատթէոս ս. կաթողիկոսի ընտրութիւնն կատարուում է և հազարաւոր ստորագրութիւն կրող բողոքագրով Առաջնորդն հանւում է պաշտօնէ, այլևս պաշտպանութիւն չըդառնելով նուև կառա-

¹⁾ Երկու իրար հերքող Յայտարարութիւններն կը բում են միւնցն թուական. 16 Յուն. 1856:

վարութեան կողմէն, որուն վրայ դրած էր իւր բոլոր
յուսն և այնպէս էր գործում:

Տ. Սարգիս Արքեպիսկոպոս մի գիր է գրում ՎԵՀ.
կաթողիկոսին, ջանալով արդարացնել իւր արարքն և
իւր գէմ եղած ժողովրդային յուղումն վերագրել Պ. Շան-
շեանցին, որոյ ձեռքն է անցնում այդ գիրն և պար-
տաւորւում է ուղղել ս. կաթողիկոսին իւր սքանչելի պա-
տասխանն, որ արժան եմ համարում ամբողջովին յա-
ռաջ բերել այստեղ, իբրև մի պատմական ճշգրիտ և
սրտաշարժ համառօտագրութիւն, որուն մէջ պատկե-
րացած է թէ դպրոցի նկարագիրն, և թէ թշնամեաց
սևաթոյը խորհրդներն:

«Զերդ վեհափառութիւն.

Ես հաստատ հաւատում եմ, որ ճշմարտութիւնն
աւելի զօրաւոր է քան ստութիւնն: Ահա երեք տարի
է, որ հեռու հայրենիքից, հանգիստ մնում եմ խորին
լուսութեան մէջ, թոյլ տալով, որ անցնին ձայոց ուսում-
նարանի վրայ բարձրացած կրքերի մըրթիկներն: Եւ այժմ
ես չէի ընդհատիլ այս իմ լուսութիւնը, եթէ ձեռս չը-
հասնէր Սարգիս Արքեպիսկոպոսի նամակի պատճէնը,
որ ուղարկած էր Զերդ Վեհափառութեան ի 4-ն յուլի-
սի 1861 ամի, ընդ համարաւ 133, որոյ մէջ նազար-
եանցի գրեանց արդիլման պատճառն էջմիածնի Սինօ-
դից, գրում է ս. եպիսկոպոսն այս հետեւեալ խօսքերով.
«Նանշեանցի տեսչութեան ժամանակ, նա ինքը տեսուչը
դաս էր տալի կրօնագիտութիւն և աստուածաբանու-
թիւն: Եօ հաւատալով, որ այս առարկայի դասաւութիւ-
նը վնասակար է ի ձեռն Շանշեանցի, եւ աշակերտները
մոլորվել են և մոլորվում են, իսկոյն շտապեցի դադա-
րեցնել նորա դասաւութիւնները, որոց պատճառաւ
առաջարկեցի նրան միայն տեսուչ լինել. իսկ այս առար-
կալի դասաւութիւնը ես ինձ վերայ առալ: Իմ այս-

աիսի բարենպատակ առաջարկութիւնը, համաձայն չը-
գտնելով իրան ցանկութեանը և նպատակին, չը կամե-
ցաւ տեսուչ մնալ և թողեց ուսումնարանը: Այն ժա-
մանակ սկսան յարձակիլ ինձ վերայ զանազան անստորա-
գիր նամակներով նորա խորհրդակիցները զանազան տե-
ղերից, ինչպէս և Զեզ վերայ, նեղացնելով Զերդ Վե-
հափառութիւնը: Սորանից դուք կարող եք եզրակացնել,
որ ես չը դադարեցայ հոգալուց և վերջացնելուց այս
օտար հոգւով վարդապետութիւնը, և որ ես հազիւ հազ
կարողացալ ցըել Շանշեանցի աշակերտացը, որոց նա
դաստիարակել էր մոլորութեան հոգւով: Սրանից ահա
ծագեցան այսչափ անհամաձայնութիւններ, ապա թէ
ոչ ուրիշ պատճառ չկար բացի Շանշեանցից»:

Այս նամակի մէջ, բոլորովին առանց պատճառի,
ս. եպիսկոպոսը լիշում է իմ անունը. անուանելով իմ
դասերը և կրօնագիտութիւնը հերետիկոսութիւն, և հա-
ստրակութեան դատողութիւնն իրան դէմ՝ անուանում
է Շանշիական կուսակցութիւն, և այս բանս ամենի
վերջումը յաւելացնելով ուղիղ չէ պատմում իմ ուսում-
նարանը թողնելու պատճառը: Այս նամակը զրաբար-
տում է իմ դուրս գալը ուսումնարանից, հասարակաց
կարծիքը, որ ծուգել էր նորին սրբազնութեան դէմ,
ներսիսի լանկարծական մահուանից յետոյ, և իմ կրօ-
նագիտութեան դասերը, ուստի ճշմարտութիւնը պարտք
է դնում ինձ վերայ և հրամայում ձայն բառնալ հա-
սարակաց դատաստանի առաջ, վասն զի այս նամակը
շատ սաստիկ է տարածուել Ոսկվայի մէջ, որից պէտք
է եզրակացնել, որ Ծփխիսումը և ուրիշ կովկասեան Հա-
յերի մէջ վազուց արդէն դարձել է մի հասարակաց
խօսք:

Ես չեմ կամենում խօսիլ, նորին բարձր սրբազնու-
թեան և իմ գործերի մասին ձայոց ուսումնարանի լու-

ըւանցի ասածներին ուսումնարանի փոփոխութեանց մասին, հոկտեմբեր 7-ին խորհրդակցութեան կոչեց իր մօտ յալտարարութեամբ Եջմիածնայ սինօդի պրօկուրօք պատուելի Միրաքեանցին, ինձ, հոգաբարձուաց և աւագ վարժապետաց: Այս խորհրդի մէջ ուսումնարանի նախասահմանեալ կարգաց փոփոխութեանց համար, ես նրան յայտնեցի, որ իմ կարծիքով պէտք է հետեւ ուսումնարանի մէջ եղած կանոններին, որ տուել էին ինձ հոգաբարձութեան օրագրութեան պատճէնով, որպէս վերջին կամք հանգուցեալ կաթողիկոսի՝ մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը: Նա կարծես թէ, մոռացել էր, ինչ որ ասել էր ինձ այս բանի համար: Չէ, նորին բարձր սրբազնութիւնը չէ կարող մոռանալ, ինչ որ ինձ պատասխանեց պրօկուրօքի, հոգաբարձուաց և աւագ վարժապետաց ներկայութեանը, այնպիսի խօսքերը չեն մոռացուիլ, որպէս մէկ քար ընկած են նորա հոգւոյ վերայ: Նա ինձ ասաց «այն կարգադրութիւնները, որ նա հոգաբարձուաց հետ, օրագրութեան պատճէնի մէջ տուել է ինձ, որպէս վերջին կամք հանգուցեալ կաթողիկոսի, ոչ թէ նրա կամքն է, այլ սուտ»: Չը աւատալով իմ ականջներիս՝ նրան հարցրի. Սարգիս եպիսկոպոս, միթէ այն թուղթը, որ տուիք ինձ հոգաբարձուաց հետ՝ որպէս վերջին կամք կաթողիկոսի, սուտ էր. Այո՛, պատասխանեց նա սաստիկ գունափոխուելով. «Այո՛. նա ոչ թէ կաթողիկոսի կամքն էր, այլ սուտ»: Յետոյ նա յանդիմանութեամբ դարձաւ դէպի հոգաբարձուքը. «Ահա ի՞նչ կընշանակէ առանց հեռատեսութեան բան բռնել»: Ի հարկէ, նա նրանցից պատասխան չըստացաւ, ինչպէս պատից: Բայց թէ եպիսկոպոսի խօսքերը յանդիմանեցին արդեօք հոգաբարձուներին, թէ հոգաբարձուաց լուութիւնը եպիսկոպոսին. այս բանի քննութիւնը ինձ չէ վերաբերում: Սրանից յետոյ առա-

ջարկեցի ես նորին բարձր սրբազնութեան՝ առնել ուսումնարանի մէջ, ինչ որ իրա կամքը կըտալ, ինչպիսի կարգադրութիւն էլ կամենալ թող մտցնէ, և մնաս բարի ասելով, դուրս եկալ նրա մօտիցը: Իմ դուրս գալուց յետոյ, միւս օրը, պրօկուրօրն ինձ ասաց, որ նորին բարձր սրբազնութեան սիրտը շատ նեղացաւ՝ ձեր դուրս գալուց յետոյ: Ի հարկէ պէտք է երկաթէ մարդ լինէր, որ չըկոտրուէր այս խօսքերը ասելուց յետոյ— հանգուցեալ կաթողիկոսի կամքը սուտ էր:

Ս.յապիսի ծանր խօսքերից յետոյ, ինձ համար մէկ միջոց էր մնում միայն, այսինքն թողնել ուսումնարանը, որտեղ իմ երկար մնալը ոչ թէ օգտակար կը լինէր, այլ վնասակար, վասն զի կը ծածկէր Սարգիս եպիսկոպոսի արած փոփոխութիւնները:

Միւս օրը պատուելի աւագ վարժապետ Պատկանեանցին յանձնեցի յայտնել նորին սրբազնութեանը, որ ես մեր երեկեան խորհրդի մէջ արած խօսակցութիւնից յետոյ, թողնում եմ ուսումնարանը Մեր խօսակցութեան միւս օրը ես փոխուցայ իմ վարձած տունը, և երեք ամսից յետոյ ցաւելով թողեցի իմ Հայրենիքը, որ աւելի արձակ իրաւունք տամ նորին բարձր սրբազնութեան գործ գնել իր նոր գաղափարները, Հայոց մանուկների լուսաւորութեան համար և հասարակութեանը կարողութիւն տալ, Ճանաչել իր հոգեոր և բարոյական օգուտների բարեկամներին և թշնամիներին: Նախ քան իմ Թիֆլիսից դուրս գնալը ես գրեցի Եջմիածնալ Սինօդին այս հետեւալ յալտարարութիւնը¹⁾:

1) «Ի Սինօդն Հայոց Ա. Եջմիածնի նախկին Տեսչէն Տիկինայ Հայոց Հոգեոր ուսումնարանի Յայտարարութիւն Տիկինայ Հայոց Հոգեոր ուսումնարանի Հոգաբարձուաց լուութիւնը եպիսկոպոսին».

Տիկինայ Հայոց Հոգեոր ուսումնարանի Հոգաբարձուաց լուութիւնը եպիսկոպոսին».

Նորին բարձր սրբազնութիւնն կարող էր տեսնել,
որ ես չեմ լիշել այն խօսքերը, որ նա ինձ ասաց խոր-
հրդի մէջ 7 Հոկտեմբերի: Այժմ ես չէի գրելու, եթէ

Ճուքն 1851-ին ինձ նամակով յայտնեցին, որ Նորին Վեհա-
փառութիւն, Կաթողիկոսն ամենայն Հայոց Ներսէս, Հրամա-
յել էր իրանց, Հրաւիրել ինձ Պետրուրդից և յանձնել
Տեսչութիւնը, տալով ինձ լիովին իշխանութիւն ուսումնա-
րանի ուսումնական մասին մէջ, և այս պատճառաւ իսկ
Հրաւիրեցին ինձ գուլ Տիեզիս և կատարել Տեսչի պաշտօն:
1853 և 1854 թուի ուսումնական հարցաբնութեանց մէջ
Ն. Վեհափառութիւնը ներկայ գտնուեցաւ և ցոյց տուաւ
իր լիովին բաւականութիւնը:

Սրանից յետոյ Ն. Վեհափառութիւնը կամցաւ աւելա-
ցնել դաս տալու առարկաները. բայց Նրա կամքը մնաց
անկատար մինչև իրան մահը: Նորին Վեհափառութեան
մահուանից յետոյ, ես կամեցայ թողնել Տեսչութեան պաշ-
տօնը, բայց Հոգաբարձուքը ուղարկեցին ինձ իրանց օրա-
գրութեան պատճենը, փետրվար ամսին 1857 ամի, որոյ
մէջ նշանակել էին դաս տալու առարկաները և Տեսչի ի-
րաւունքը, և յիշած էր, որ սորա մէջն էր կայանում կա-
թողիկոսի վերջին կամքը, որն որ Նորին Վեհափառութիւ-
նը անձամբ յայտնեց ինձ ՚ի ներկայութեան Ն. Բարձր
Սրբազնութեան Սարգիս Արքեպիսկոպոսի: Տեսնելով որ այս
վերջին կարգադրութիւնը համաձայն է վերցիշեալ Հոգա-
բարձուաց ժամանակի հետ և օգտաւէտ ուսումնարանի հա-
մար, կրկին սկսեցի շարունակել իմ աշխատանքները և նոյն
իսկ օրից կատարում էի Տեսչի պաշտօն, մինչև Հոկտեմբեր
7-ը նոյն տարուայ: Աարգիս եպիսկոպոսը կազմեց իր մօտ
Խորհուրդ, Հրաւիրեց Հոգաբարձուաց, աւագ ուսուցչաց,
Եղիշածնայ պրօկուրօր պատուելի Յովհաննէս Խառուեան Մի-
րաբեանցին, և ինձ, և յայտնեց, որ ներկայ ժամանակումս
ուսումնարանի տէրն ինքն է, վասնորոյ ցանկանում է մըտ-
ցնել նրա մէջ նոր կարգ: Ն. բարձր սրբազնութեան առա-
ջարկութեանը ես պատասխանեցի ասելով, ինչ որ վերաբե-
քերում է ուսումնական մասին, դրա համար արդէն կանոն

որ նրա նամակը ուղիղ պատմել էր իմ Հրաժարումն
ուսումնարանից, և չոտիպէր ինձ պատասխանել: Ահա
այս է ճշմարիտ պատճառ իմ Հրաժարման ուսումնա-
րանից և ոչ թէ ս. Եպիսկոպոսի առաջարկութիւնը, որ
պէս թէ նու ինքն է կամեցել կրօնագիտութիւնն ու-
սուցանել, և ես այս բանին չը համաձայնելով, թողել
եմ ուսումնարանը. նորին բարձր սրբազնութիւնը սխալ-
վել է, կարելի է նա այս բանս ուրիշին է ասել, բայց
ինձ բան չէ ասած: Ն. Բարձր Սրբազնութիւնը ձեռքը
սրտին դրած՝ չէ կարող շանշիական կուսակցութիւն
անուանել հասարակութեան ընդդիմութիւնն իր դէմ,
որ բարձրացաւ Ներսէս կաթողիկոսի լանկարծահաս մա-
հուամբ: Իրաւունք չունի Ս. Եպիսկոպոսն հասարակու-
թեան ընդդիմութիւնը և տրունջը այսպէս մեկնել,
ասելով Շուրիշ պատճառ չը կար, բացի Շանշեանցից»:

Կայ սահմանած, որն որ ինչպէս յայտնի է Ն. բարձր սըր-
բազնութեանը, նոյնպէս և Հոգաբարձուաց. բայց նա չը
համաձայնեցաւ և սկսեց կարգաւ իրա գրած նոր կարգա-
գրութիւնը: Որովհետև ինձ յայտնի էր հոգին և ուղղու-
թիւնն նոր կարգագրութեան, ես այլ ևս օգտաւէտ չը
համարելով իմ Տեսչութիւնն ուսումնարանին, միւս օրը ա-
ւագ ուսուցիչ Միքայէլ Պատկանեանցի միջնորդութեամբ
յայտնեցի նրան, որ ես թողնում եմ ուսումնարանը:

Որովհետև վախճանած է կաթողիկոսն, որի հետ ես
ունեի հաղորդակցութիւն ուսումնական մասին վերաբերուած
գործերի համար, վասն որոյ պատիւ ունիմ այս ամենը ի
գիտութիւն Սինօդիդ հասուցանել և սրա հետ ուղարկելով
մի պատճեն¹⁾ որ տրուած է ինձ հոգաբարձութիւնից, Խընդ-
րում եմ ստանալուց յետոյ վերաբարձնել ինձ ի Տիեզիս
իմ բնակած տեղը:

1857 ամի.

Պ. Շանշեանց

1). — Ակնարկութիւն է առաջին Հրաւիրագրին, որ ար-
դէն զետեղուած է իւր պատշաճ տեղն:

Վերցնենք, օրինակի համար, նոյն իսկ նրա վար-
մունքը թիֆլիզու հասարակութեան հետ, որն որ ներ-
կայացաւ նրան ինչպէս մէկ թեմական վիճակաւորի,
խնդրելով նրանից՝ հաշիւ պահանջել ուսումնարանի
Հոգաբարձութենէն: Ի՞նչպէս վարուեցաւ նա այս գոր-
ծի մէջ: Նա փոխանակ վարուելու ինչպէս Հովիւ բոլոր
ժողովրդեան, ինչպէս մէկ ծշմարտասէր անձն, ըստ
պահանջման հասարակութեան, սկսեց վարուիլ իբրև մի
կուսակցութեան անդամ: Նա պէտք էր համաձայն օրի-
նաց և կամաց հասարակութեան, պահանջէր, ժողովր-
դից ընտրած մարդկանց հետ, Հոգաբարձուներից կա-
տարեալ հաշիւ նրանց կառավարութեան համեմատ, և
ոչ թէ զանազան պատճառներով պաշտպանէր նրանց
իշխանութիւնը, որն որ, բոլոր աշխարհքի օրէնքով
պէտք էր վերջանար մահուամբ իրանց յանձնող ներ-
սէս Կաթողիկոսի: Հոգաբարձուները իրանց կողմից պար-
տական էին հաշիւ տալ նրան, և հասարակութիւնից
ընտրեալ մարդկերանց, իրանց կառավարութեան հա-
մար, և ինչպէս պատուաւոր քաղաքացիք, վերցնել ի-
րանցից այն կոչումը և յանձնել ժողովրդեան միւս ան-
դամներին, և այս կերպով ազգային անվարձ ծառայու-
թեան ծանրութիւնը չէր ընկնիլ միայն մի քանիսի վե-
րայ, այլ բոլորեցունց: Եւ այսպէս իր Հոգաբարձուաց
հետ ունեցած սաստիկ կողմնապահութեամբը, ոչ հա-
սարակութեան ձայնին ուշ դարձրեց և ոչ օրինաց: Ն.
սրբազնութիւնը ամենաստեսակ խորամանկութեամբ աշ-
խատեց յարատելու Հոգաբարձուաց իշխանութիւնը,
ընդէմ էջմիածնայ Սինօդի շարունակ հրամաններին,
որ պահանջում էր, առնել նրանից կատարեալ հաշիւ
կառավարութեան և հրաժարեցնել Հոգաբարձութենէ:
Ի՞նչպէս չը հասկցաւ, որ հասարակութիւնը չէր կարող
չը նեղանալ նրա կողմնասէր վարմունքից և ցոլց տալ

իրան անբաւականութիւնը, որն որ իզուր անուանում
է շանշիական կուսակցութիւն:

Քաւ լիցի մեկնել նրա այս արարմունքը շահասի-
րութեամբ. ոչ. այսպիսի միտքը շատ հեռի է թէ ին-
ձանից, թէ նորանից. ոչ. ն. սրբազնութիւնը կարօտա-
նում էր հասարակաց կարծիքին, որն որ, վեր կացաւ
նրա դէմ ներսի յտնկարձական մահուանից յետոյ
զարհուրելի տեսլեամբ: Նա կամենում էր Հոգաբար-
ձուաց միջոցաւ գրաւել հասարակութեան սիրտը, բայց
սաստիկ սխալվեցաւ. նորա կողմնասիրութիւնը առ Հո-
գաբարձուս, իրան առաւել ցածրցին հասարակաց կար-
ծեաց մէջ: Նատ կարելի է, որ իմ ուսումնարանից
դուրս գալս ևս ազդեցութիւն ունեցաւ հասարակաց
կարծեաց վերայ, որ յարուցուած էր նրա դէմ. բայց
միայն դրա մէջ չէր պատճառը, այդ պատճառը շատ
հեռի տեղ պէտք է որոնած, խորը պէտք է թափան-
ցած ներսէս կաթողիկոսի կենաց վերջին օրերի փոփո-
խութեան մէջ առ Սարդիս եպիսկոպոսն:

Այժմ ներեցէք հարցնելու ն. բարձր սրբազնու-
թեան, թէ այդ ում անուանով է թեթեամտաբար ա-
նուանում իմ կրօնագիտութեան դասերը հերետիկոսու-
թիւն: Աւետարանի անուամբ արդեօք, նա չի կարող
գտնել նրա մէջ և ոչ մի խօսք, որ չը քարոզէ մեր
Փրկչին Աստուածալին յաւիտենականութիւնը և սրբու-
թիւնը: Հայոց եկեղեցւոյ անուամբ արդեօք, ինչո՞ւ է
կարծում ինքն իրան աւելի հարազատ քան ինձ և ու-
րիշներին: Ինչպէս հոգևոր անձն արդեօք: Նա պէտք
է լիշէ այն լատինացւոց իմաստալից առածը, թէ «վեղարը
վարդապետ չէ շինում»: Իմ դասախոսութիւններս յայտ-
նի էին և բացարձակ, նրանց ունկնդիր էին ոչ թէ
միայն աշակերտները, այլ և ուրիշ աշխարհական և հո-
գևորական այցելու անձինք, իմ դասախոսութիւններս

յայտնի էին և ներսէս կաթողիկոսին, որ երկու անդամ ներկայ գտնուեցաւ հրապարակական հարցաքննութեանց և ծանօթացաւ նրանց բովանդակութեանցը։ Այս դասախոսութեանց հոգւով դաստիարակուած էին այն աշակերտները, որոնք իւրեանց քարոզներով ուրախացնուամ էին ներսէս կաթողիկոսին և Ազգին։ Այս աշակերտաց կենաց և յառաջդիմութեան համար էր, որ ներսէս կաթողիկոսը բարձրացրեց շամպանեայ գինւոյ լի բաժակը և օրհնեց նրանց ի ներկայութեան հոգաբարձուաց, աւագ ուսուցչաց և օտար անձանց ասելով։ «Ազգի համար շատ մեծ մարդիկ կը լինին»։ Միւս անդամին երբ լսեց այս աշակերտաց քարոզները, ասաց Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսին։ «Չուրը թափուենք, Գէնրգ եպիսկոպոս, ինչ են ասում այս փոքրիկ տղերքը»։ «Ա.ի, Պետրէ, ասաց նա նոյնպէս ինձ, աշակերտաց քարոզը վերջանալից լետոյ, եթէ երեսուն տարի առաջ սկսել էինք այս բանս, որչափ յառաջ գնացած պէտք է լինէր մեր Ազգը»։ Ահա այս աշակերտաց և սրանց նմանների համար է, որ Սարգիս Արքեպիսկոպոսը ասում է իր նամակի մէջ, «Հազիւ հազ կարողացայ ցըել նրանց»։

Քրիստոնէական ճշմարտութիւնն էր միշտ հիմն այն դաստիարակութեան, որ ես մտցրի ուսումնարանի մէջ։ Դաստիարակութեան դրօշն է մարդոյն հասցնել իր կոչմանը և կատարելագործել նրա կեանքը։ Սրա համար էլ և իմ բոլոր ուշադրութիւնս դարձած էր դէպի աշակերտաց հոգեոր բարոյական կողմը, միտք բերելով այն ասածը, թէ «Առողջ դատողութիւնը՝ առողջ մարմնոյ մէջ»։ Այս բարձր նպատակին հասնելու համար ես ընտրեցի այն ճանապարհը, որն որ միայն տանում է դէպի մէր Փրկիչը։ Այս այն սիրոյ ճանապարհն էր, որ հաւասարում էր ինձ նրանց հետ, և ես, որպէս ընկեր, որպէս նրանց մեծ եղբայր, գնում էր

նրանց հետ դէպի լոյսը, դէպի ճշմարտութիւնը և յաւիտենական կեանքը, ունելով միշտ իմ աչքիս առջև այն Խաչը, որոյ վերայ մեր Փրկիչը՝ մօտ 19 դար է, գիրկը բացած, կանչում է աշխարհիս որդւոցը գրկելու, ինչպէս Աստուածալին որդւոցը։ Այս աշակերտաց համար է, որոնք կրթուած էին մեր Փրկիչ ուսման հոգւուց գօրութեամբ, որ Սարգիս եպիսկոպոսն ատում է, «մոլորեալ և խմորեալ են և որորնց հազիւ հազ կարողացայ ցըել»։ Հայոց եկեղեցին, որպէս Քրիստոսի եկեղեցի, ազատ է և սուրբ, ու պահպանում է և պահպանում այդ խղճի ազատութեամբ և իր որդւոց կենաց սրբութեամբ։ Եթէ մէկը, որկիցէ կողմից, կարողանայ սպառնալ մեր եկեղեցւոյն վտանգ, այս այն մարդկանց կողմից կարող է լինիլ, որոնք կամենում են նրան իրանց կարճմտութեանը մասնակից առնել։ Եթէ կարողանայ սպառնալ մեր եկեղեցւոյն վտանգ, այս այն մարդկանց կողմիցն է, որոնք փառքերի պատճառաւ մոռանում են նրա ազատ հոգին, նրանք ոչ տեսնում են, ոչ լսում Պօղոս Առաքելոյ փրկարար խօսքերը։ «Գիրն սպանանէ և հոգին կեցուցանէ»։ Իրաւ, որ մեր եկեցեցւոյն սպառնում է վտանգ այսպիսի մարդկանցից, որոնք լուսոյ, ճշմարտութեան և գիտութեան ամեն մէկ ճառագալթները թափանցելիս ժողովրդեան կեանքի մէջ, վեր են կենում նրա դէմ, և առանց խղճմտանաց, մեր եկեղեցւոյ անուամբ հալածում են լոյսը, համարելով իրանց կարճամտութիւնը հաւասար յաւիտենական ճշմարտութեան, որ հաստատուած է Աստուածային յայտնութեան վերայ։ Զէ, Հայոց եկեղեցին, այս մեր Ազգի հոգեւոր Հայրենիքը, պահվել է և պահպանվել ազգովին, հոգեորականք և աշխարհականք կանգնել են մէկի մօտ, ուսուցել են

իրանց փոքրիկ եղբարցը, և մեռել են եկեղեցւոյ յաւիտենական ճշմարտութեան համար։ Վարդանները և Ղևոնզները մէկտեղ են մխիթարել և քաջալերել ժողովրդեան Աստուածային բանիւ և պատմել նրա յաւիտենական և սուրբ փառքը։ Թողնենք անցեալները, նայեցէք, լսեցէք, ինչ աղաղակ է վեր կացել ամենայն կողմից, Եւրոպիոյ և Ասիոյ քաղաքներից, գիւղերից և Խրճիթներից։ Տարածուեցաւ սարսափելի ձայն այս մօտիկ ժամանակներս, որ մեր եկեղեցւոյ անկախութիւնը վտանգի մէջ է։ Այս աղաղակը ցոյց է տալիս, որ ժողովրդեան մէջ կալ մի բարձր բան, փողոցի շահից թանկագին, նրա շահասէր նպատակիցը բարձր, նրա կեանքից փեմ, այս նրա համոզմունքն է, նրա եկեղեցին։ Ի՞նչպէս գեղեցիկ է ժողովրդեան այս արթննալը։ Ի՞նչպէս մեծ է այս տեսարանը, որ բոլոր ժողովուրդը թըրթում է մի պարզ կրօնական հարցման համար։ Ի՞նչքան բաղդաւոր է այն ժողովուրդը, որոյ համար այսքան թանկ է կրօնական համոզմունքը, որ ըստ բանի Փրկչին, չէ ապրում միայն հացով։ Ժողովրդեան այս հսկողութիւնը ցոյց է տալի, որ Հայաստանումը ամենայն փորձ, ամենայն ցոյց ի վնաս եկեղեցւոյն՝ սաստիկ կըլանդիմանուի մեր բոլոր Ազգէն։ Մինչդեռ օրագիրները կանչում են զգուշացնելով, լսիր, վտանգ է գալի եկեղեցւոյ անկախութեան համար, կարծես թէ մեր հոգևորականութիւնը ուխտ է գրել լուռ մնալու. սուսէ կենում։ Բայց եթէ հաւատանք Փարիզի և Տաճկաստանի լրագիրներին, մեր հոգեւորականութիւնը, ոչ առանց երկելի բացառութեան, օգնում է եկեղեցւոյ թշնամեաց, այս կրօնական լեզափոփութեանց մէջ։ Թողն լուն։ բարձր սրբազնութիւնը՝ այս սեպհական իրաւունքը, այս արտօնութիւնը պաշտպանելու համար։ Եկեղեցին, ժողովրդինն է. Ազգն է պաշտպանել միշտ եկեղեցին,

թէ անցեալումը և թէ ներկայումս, և միշտ պատրաստ է նա պահպանել իր բանիւ և կեանքով նորա սրբութիւնը և ազատութիւնը։ Եկեղեցւոյ պաշտպան կարծեցեալները լաւ կ'անէին, եթէ ընտելացնէին իրանց աչքերը լուսոյ հետ, և ըլլինէին ամենայն ժամանակ արգելք մեր Ազգի լուսաւորութեամբ։ Թողնենք այս չնչին հարցմունքը, թէ ովք պէտք է պաշտպանէ եկեղեցին, ովք պէտք է լուսաւորէ ժողովուրդը. այս իմ կարծիքով քոլոր հասարակութեան գործն է, և ոչ թէ մէկ որևէ հոգեւորական կամ աշխարհական դասի։ Միայն գիտութեան և ճշմարտութեան լոյսը. գիտութիւն և ճշմարտութիւն տարածելու իրաւունք տուողը նրանք են, որոնք ունին այն լոյսը, որք միայն կանչուած են լուսաւորելու և իրանց չորս կողմը տարածելու ճշմարտութեան և գիտութեան բարութիւնը։ Այս պատճառաւ էլ վէճերը, որ բացվել են մեր օրագիրների մէջ, թէ ումն է պատկանում ժողովուրդը լուսաւորելու իրաւունքը, հոգեւորականին, թէ աշխարհականին, այո՛. կարծեմ, օտար վէճ է, և ոչ հայկական։ Այս վէճը մեր վէճ չէ, նա ծնած է Արևմուտքումը պատմական անցքերի զօրութեամբ, որն որ բաժանեց հոգեւորական օգուտը աշխարհական օգտից։ Այսպիսի հոգեւորականաց և հասարակաց շահերի միմեանց հակառակութիւնը, ի պատիւ մեր Ազգի, երբէք չէ պատահած մեր պատմութեան մէջ։

Դատ գեղեցիկ կ'անէ Սարգիս Արքեպիսկոպոսը, եթէ թողնի այս անարժան ճանապարհը, բամբասանքը, անաթէման և անէճքը. այդ մեր եկեղեցւոյ հոգին չէ, հապա ուրիշ հեռու եկեղեցւոյ, որն որ բաժանեց իր շահը ազգի շահից և թշնամացաւ նորա հետ։ Այս անաթէմանները և անէճքները մեր ժողովրդի ձայնի պատասխանը չեն, որ խնդրում է գիտութեան և ճշմար-

տութեան լոյս, մեր Փրկչի ձայնի պատասխանը չեն, որ
խնդրում է սիրել իւր թշնամեացը, օրհնել անիծողնե-
րին. բարի առնել ատելեաց, և աղօթք առնել նեղացնող-
ների և հալածողների համար. լինիլ կատարեալ որպէս
կատարեալ է Հայրն մեր երկնաւոր: Հոգեորականու-
թիւնը պէտք է լցուի մեր Փրկչի հոգւով, ապրի նորա-
կեանքով, տարածէ նորա սիրոյ խօսքը: Ահա ճշմարիտ
ճանապարհը, որով գնացել է և պէտք է գնալ հոգե-
որականութիւնը, որ կարողանալ հաստատել մեր Փրկ-
չի հետ աշխարհումս Աստուածալին թագաւորութիւնը:
Եւ այսպէս, կ'ասեմ իմ դատաւորիս, Պօղոս Առա-
քելոյ խօսքերը. «Այլ ինձ և այս անարգանք են, եթէ
ի ձենջ դատեցաց կամ բնաւ իսկ ի մարդկանէ, նաև
զանձն իմ ոչ քննեմ: Զի ոչինչ գիտեմ անձին իմոյ, այլ
ոչ եթէ այսու արդարանամ, զի որ քննէ զիս՝ Տէր է,
որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և յալտնիցէ
զխորհուրդս սրտից, և ապա իւրաքանչիւրոյ գոհութիւն
եղիցի յԱստուծոյ»:

Ձերում Վեհափառ Հայութեան
ամ ոչ եթի զմն շնչի ով. Խորնարհ որդիի
ուղոյ հանգըլու մայ Պետրոս Սամուելեան Շանշեանց
21 հոկտ. 1861 ամի բայ ըմբանաց յո մյու պատմ
Ս. Պետերբուրգ: յարո զայրակը ուղար մարա
զմն այսաբ ի ցայդի այսուախճ ըմանեցն զիշտաց

շնն մաժիւնուար զմն ծածուար չէ գնչյա պրը
շնիլ ցոյսուայրեցիլ սպրյամ խոյթ թիւնը ուամ
ու զդմասայնաց ցցիսուամուժ մածուամ ոյս զմրոնի
ոչ միջուշ լուրդըթ զմն քրա ցգնման և մանչեամ
ոչ ըմբանաց յո մյու ըստըթըթ ուամը չից-ու այսա-
ւա ով. ուուշ այս առանամշի և ընչաշ զրբա ցեաց
այս զմուա կցիսուրեն զմն զդմոց ծիւն և զդմանշեամ
շանչ և մանելուայք չ նույրմոյ յո մմէ ըմայսաւ

միմանցաւ պէտք զմն մէջեցի միա մանիւապիսոր
ուայնը առաջ զմն պատու խանչուալիմ մանիւանի

• 200 միա 21 միա ու ուղու յուրու մանիւ
մանիւա միմանցէ ու մանիւա մանիւա մանիւա մանիւա
մանիւա մանիւա մանիւա մանիւա մանիւա մանիւա մանիւա

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

Պ. ՇԱՆՇԵԱՆՑ ԴԱՐԲԵԱԴ. — ՄԱՐԻԱՄԵԱՆ ՎԱՐԺԵՐԱ.
ՆԻ ԲԱՑՈՒՄՆ. ՎԱՐՄԲԱՂՑԻՈՅ ՈԳԵՒՈՐՈՒԹԻՒՆՆ. — ԻՄ
ՊԱՇՏՈՆԱԿՑՈՒԹԻՒՆՆ Պ. ՇԱՆՇԵԱՆՑԻՆ. ԿՈՆԴՐԱԿ ԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆ:

Պ. Շանշեանց, ինչպէս տեսնում ենք իւր գրու-
թիւններէն առ ս. սինօդն և առ Վ.Ե. Կաթողիկոսն,
արդէն հրաժարուած Տեսչութեան պաշտօնէն, հեռացած
Թիֆլիսէն, բնակում էր 1861 ին ի ս. Պետերբուրգ:

Այս ժամանակն էր, որ Վարաբաղի Հայերն գի-
մում են Մատթէոս կաթողիկոսին և Պ. Շանշեանցն
իրենց եղիշեան վարժարանի համար Տեսուչ են խընդ-
րում: Ս. Կաթողիկոսն պսակում է նոցա փափաքն և
Պ. Շանշեանց հրաւիրում է ի պաշտօն տեսչութեան
և հաստատում կաթողիկոսական յատուկ կոնդակաւ,
յորում, ի միջի այլոց, կան սոյն խօսքերն. — Թէև ի լրոյ
և եթ հաւաստի եղեալ էաք ազգասիրական և հոգեկան
ազնուութեան Յարգելոյն Պետրոսի Շանշեանց, որ եր-
բեմն բաւական ամօք, ի միջոցս կենդանութեան ար-
ժանայիշատակ Նախորդին մերոյ Տեառն ներպիսի, ծա-
ռայեալ է ազգասիրական եռանդուն անձնանուիրու-
թեամբ, որ յետ կենազրաւ լինելոյ հանգուցելոյն ի Տէր,
ելեալ ի պաշտամանէն բնակէր ի Պետերբուրգ լի ազ-

գասիրութեան ոգւով, սոյն սիրելին մեր ի Տէր, արժանին գովութեան, ներկայացեալ առաջի մեր՝ հասու ազնուութեան հոգւոյ նորա] եղաք», ևայլն: 19 սեպ. 1863. թուահամար 452. ի ս. Էջմիածին:

Պ. Նանշեանց հպատակելով եղած հրաւերին, Պետերբուրգէն Թիֆլիս գալով և աստէն ուղեորելով ի ս. Էջմիածին և անտի լիշեալ հաստատութեան կոնդակաւ ուղղակի գնում է ի Շուշի իւր պաշտօնն վարելու:

Պետերբուրգէն համալսարանի իրաւագէտ ուսանողն, Փարիզեան Սորբոնի աստուածաբանական և փիլիսոփայական մասնաճիւղի հետևողն, Հելուետեան և Բատալեան կրթական բարձրագոյն հաստատութեանց ուսումնասիրողն և Ներսիսեան դպրանոցի մեծահամբաւ Տեսուչն այժմ գտնում է Ղարաբաղի լերանց վերայ: Ղարաբաղիք մնացած են յափշտակուած, մնացած են զմայլած, տեսնելով ամեն շնորհքներով զարդարուած մի Հայ, որ եկած է իրենց վարժարանին Տեսուչ լինելու, իրենց զաւակներն դաստիարակելու: Իրենց դպրոցին, իրենց խօսեքոնց (մանկանց) համար շատ բարձր էր երեւում եկած Տեսուչն: Ի հարկէ նոքա չէին կարող ըմբռնել՝ թէ սէրն, մատաղ սերնդի կրթութեան սէրն, ինչ հրաշքներ կարող է գործել, ինչ բարձրութիւններ կարող է խոնարհեցնել, ինչ գիտնականներ կարող է մօտեցնել մանուկներուն և հրապուրել դէպի անշուշ վարժարաններն:

Ղարաբաղիք վերջը տեսան (ինչպէս որ իւր տեղն պիտի պատմեմ) որ ալդ Մելիքներու երկրին մէջ, ոչ միայն ամենէն իմաստունն, ալլ և ամենէն հեղն ու խոնարհն է իրենց Տեսուչն: Տեսան որ փափկակեաց չէ, անձնասէր չէ, իրենցմէն աւելի քաջասիրտ է, իրենցմէն աւելի վարժ է ոտքով քայլելու, ձի հեծնելու: Տեսան որ սիրում է իրենց մանուկներն, որոց շատերն երկրա-

գործներու և խաշնարածներու զաւակներ էին, հոտազութենէ, գառնարածութենէ ու հորդարածութենէ եւ կած: Աստուած զրկած է, ասացին, ալս մարդն մեր երկրին համար և սկսոն սիրով կատարել իւր բոլոր առաջարկներն, գպրոցի հասոյթներն բազմապատկել իւր խորհրդով, և ի տօնի Աւետման ս. Աստուածածնի, աղջկանց վարժարան իսկ բանալ Մարիամեան անուամբ:

Սոյն վարժարանի բացման յաջողութեան մէջ յալտնապէս բացափայլում է այն հզօր ազգեցութիւնն, որ յատուկ է միայն Նանշեանցի պէս Աստուածսիրութեան և ժողովրդասիրութեան բարձր հոգւով զինուած գործիչներուն: Իւր կինն տակաւին ծածկութիւ տակ պահպանող Ղարաբաղցին, իւր աղջիկն իւր ընտանեկան սեմէն չըհեռացնող Ղարաբաղցին, ուսումն՝ կանանց սեռին վնասակար համարող Ղարաբաղցին՝ հպատակում է Շանշեանցի աւետարանահնչիւն ձայնին, կնոջ կոչումն բացատրող ու բարձրացնող բարբառոյն:

Քառասուն ազնիւ տիկիններ մի մի աղջիկներ են որդեգրում չքաւոր ընտանիքներէն, հագուստի և դասական պիտոյից ամեն ծախքերն հոգալու խնամակալութեամբ, ինչպէս որ երկու աղջիկն ևս որդեգրում է նոյն ժամանակի Առաջնորդ Ստեփաննոս Արքեպիսկոպոս: Պ. Համբ. Հախումեանց և իւր տիկին Մարիամ, դուստը Մելիք Շահնազարեանի, այս հայրենանուէր ամոլքն, իրենց ընդարձակ տունն իբր վարժարան դնում են Տեսչի և խնամակալուհեաց տրամադրութեան ներքոյ: Ամեն ինչ կազմ և պատրաստ, ոգեսորութիւնն ընդհանուր և խանդավառ և ահա բացման հանդիսի նշանաւոր օրն, առաջի բազմաթիւ հանդիսականաց, հնչում է այն քաղցրալուր և աւետաւոր բարբառն, այն սքանչելի Ատենախոսութիւնն, որ ոչ միայն Ղարաբաղի, ալլ ամեն երկրի Հայոց աղջկանց համար կարող է լի-

նիւ յաւերժական հիմն և աստուածազդեցիկ ծրագիր
կըթութեան՝¹⁾:

Մի տարի էր որ Պ. Շանշեանց ի Շուշի էր և ես
ի Թիֆլիս՝ Տեսչի պաշտօնակատար Ներսիսեան դպրա-
նոցին։ Պ. Շանշեանց, Թիֆլիսէն անցնելու և ի Ղարա-
բաղ երթալու ժամանակ քանի մի ուսուցիչներ տարաւ
իրեն հետ։ Նա չըկամեցաւ ինձ ևս առաջարկել իրեն
հետ երթալու վասնզի հոգաբարձութիւնն արդէն յայտ-
նած էր իրեն թէ։ Մուրատեանց կարեոր է դպրանոցին,
ոչ միայն իբր Տեսչի պաշտօնակատար, այլև իբրև ու-
սուցիչ։

Սակայն, չընայելով իմ պաշտօնական և նիւթական
նախանձելի կացութեանս, մեծ փափաքս էր Շանշեանցի
մօտ լինիլ և սպասում էի պատեհ ժամուն։ 1864 թուա-
կանի արձակուրդին էր, որ կանխաւ լուր տալով Պ.
Շանշեանցին, համոզելով նաև հոգաբարձուներն, որ
մեծ մասամբ Շանշեանցի բարեկամներն էին, հրաժա-
րեցայ պաշտօններէս և մեկնեցայ Թիֆլիսէն Շուշի եր-
թալու համար։ Ուղևորութեանս երկրորդ օրն, դաշ-
տային ճանապարհէն նշմարում էի իմ ծննդավայրի՝
Շամշադինի սքանչելի լեռներն, ուր ամառներն ան-
ցած էին մանկական օրերս անուշաբոյր ծաղիկներու և
գեղուղէշ անտառներու մէջ, սառնորակ աղբիւրներու
և կարկաչուն առուակներու ցողաւէտ ափանց վրայ։
Սիրտս թըռթուում էր ամեն նայելով, աչքերս տամկա-
նում էին արտասուրքով, բայց ժամանակ չըկար ճանա-

¹⁾ — Այս Ատենախօսութիւնն նոյն թուականին հրա-
տարակուած է Մեղու Հայաստանի լրագրում և ապա՝
Երուսաղէմի Սիօն Ամսագրում (1871 դեկ.). և այժմ վեր-
ջինէն առնլով պիտի արտատպեմ կենսագրականիս վերջն։
Այսպիսի կենսական գրուածներն պէտք չ'է որ մոռ-
ցուին. պէտք է միշտ ի յուշ ածել, միշտ կրկնել ժողովրդին։

պարհս փոխելու դէպի հայրենի գիւղս և գէթ քանի մի
օր մնալու։ Աճապարում էի օր առաջ նուշի հասնիլ,
որպէսզի յառաջ քան դպրանոցի վերաբացումն կատա-
րուին ամեն նոր կարգադրութիւնք։

Հասայ պաշտօնատեղիս, ուրախութիւնս անպատում
էր։ Շանշեանցի հետ պիտի բնակէի. նորան օգնական
պիտի լինէի. նորա հետ պաշտօն պիտի վարէի. նորա
խորհրդէն պիտի օգտէի. Ամեն նոր կարգադրութիւնք
շուտով և խնամով պատրաստուեցան. երջանկայլշատակ
Բաղդասար մետրոպոլիտի կառուցած ընդարձակ և պար-
տիզաշատ. Առաջնորդարանն գպրանոցի վերածուեցաւ.
իսկ Թոփխանէի իբր վարժարան վարձուած շէնքն՝ Ա-
ռաջնորդարանի։ Դասախոսութիւնք սկսան, աշակերտաց
և աշակերտուհեաց թիւն բազմանում էր օր աւուրի:
Բովանդակ Ղարաբաղ ցնծում էր և իւր դպրոցաց համ-
բաւն հոչակում էր բոլոր Կովկասի մէջ, չասեմ հե-
ռաւոր տեղեր։ Պ. Շանշեանց ոչ միայն ուսուցչական
մարմնոյ հոգին էր, այլև Շուշեցւոց ամենէն սիրելի
անձնաւորութիւնն՝ իւր պատկառանքով, իւր առաքինի
կեանքով, իւր եկեղեցասիրութեամբ։

Երբ պ. Շանշեանց, ուսուցչական խմբով, հրաւիր-
ւում էր հացկերութներու և հարսանեկան հանդէսնե-
րու, չէր մերժում և այս կերպիւ շատերն առիթ էին
ունենում՝ իլեն հետ տեսնուելու, իրեն հետ խօսելու։
Խոր տպատութեան տակ էին մնում ամեն տեսակցող-
ներն և զարմանալով ասում էին իրարու—Այս մարդը
միս ու ոսկր չունի. այս մարդը հոգի է¹⁾։

Այս աղդեցութիւնն այնքան խօսքէն չէր, որքան

¹⁾ — Դպրանոցի հոգաբարձուներէն մին (Կեափի ա-
պերն) մի օր սենեակս գալով ասաց. «Վարժապետ, Տեսուչն
մի հոգեսէր մարդ է. ծեծն վերցրած է, Աստուած սիրէր,
դուք այնպէս մի՝ վարուիք, մեր Ղարաբաղի խօսէքն, առանց

իւր բարի կեանքէն, որով միշտ զարթուցանում էր իւր շըջապատղներուն մէջ Աստուծոյ ներկայութեան զգացումն։ Գոգես բարձունքէն իջած մաքուր օդ էր սրիում իւր շուրջ։ Կոյր և ծեր նահապետն Խաչակ ճանաչում էր իւր Եսաւ որդին դաշտալին հոտէն¹⁾, որով թաթաւուած էր լինում նորա հագուստն։ Շանշեանց ևս հրաշապէս ազդուած ու թաթաւուած Աստուծոյ ներկայութեամբ, ազդում էր ամենուն վրայ, ինչպէս ազդում են առհասարակ Աստուծոյ օծուած և առաջ նորդուած քրիստոնեալք։

Կարճ ասեմ, Ղարաբաղի Հայութիւնն ոգեսրուած էր իւր ներկայի և ապագայի համար։ Ամեն մարդ ջառագիր էր որ և իցէ կերպիւ աջակցիլ վարժարաններու յառաջադիմութեան, թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Համբաւաւոր նկարիչն պ. Ներսէս Ներսիսեանց, այն ազնիւ Հայն, Խանքէնտիէն, 2 ժամ հեռաւորութենէ, առանց տաքի և ցրտի նայելու, ոտքով գալիս էր Շու-

ծեծելու, առանց թխելու (զարկելու) մարդ չեն դառնայ։
Պ. Շանշեանց, առանց սակարկելու, մի դերձակի հագուստ ապսպրած էր։ Երբ դերձակին պատրաստած հագուստըն բերաւ, ինչ որ պահանջեց, Շանշեանց տսւաւ հաճութեամբ։ Դերձակն կանգ առաւ, վրան նայեցաւ և առաց—վարժապետ, ներեցէր, շատ ուղեցի, այս մի բանի ոռութին աւելի է, յետ առէք։ — Ոչ, ոչ պատասխաննց Շանշեանց, այդ աւելին էլ թող քեզ լինի այժմ ճշմարիտ խօսելուդ համար։ — Դէ, ինչ ասեմ, Աստծու մարդ ես էլի, ամօթմել, որ փչացած ենք, սուտ խօսիլը փեշակ (արուեստ) է դառել մեզանում։

Այսպիսի դէպքեր խիստ շատ եմ յիշում Շանշեանցի կենաց մէջ, բայց մի բանի հատն իսկ բաւ է խելամտութեան համար։

1) Հոտ որդեսյ իմոյ, իբրև զհոտ անդոյ լիս, զոր օրհնեաց Տէր։ Ծննդոց Իէ. 28։

շի և ձրիաբար գծագրութիւն էր ուսուցանում աշակերտուհիներուն, և ծախք չը պատճառելու համար, ձեռագործութեան օրինակներն իսկ ինքն էր գծագրում իրենց երկրի բնական ծաղիկներէն, ծառերէն, տերեներէն և կամ՝ գեղեցիկ տեսարաններէն։

Ոչ ազնիւ Տեսուչն և ոչ ես քնաւ տեղեկութիւն չունէինք թէ՝ չար ոգին ևս, ոսոխն ճշմարտութեան, խաւարի մէջ անքուն աշխատած է և պատրելով Ա. Կաթողիկոսն յաջողած է կոնդակ կորզել առ Հոգաբարձութիւն վարժարանաց՝ հեռացնել Տեսուչն իբրև վնասակար ազգային կրթութեան։ Հոգաբարձուք պատկառելով յերեան հանել կոնդակն, պատասխանում են այնպիսի ընդարձակ և բացարձակ զրով, որ պատիւ է Ղարաբաղցւոց, ինչպէս պիտի նշմարեն ընթերցողք մեր յառաջ բերած ինչ ինչ քաղուածներէն։

«Ո՞չ կարեմք թաքուցանել, աղաղակում են Հոգաբարձուք, 'ի Զերդ Վեհափառութենէ թէ՝ յընթեռնուլ մեր զսուրբ կոնդակն զայն՝ սիրտք մեր վիրաւորեցան 'ի խոր խոցեալ և լցան յիրաւի դժգոհութեամբ առ այն անձինս, որք ոտնակոխեալ զսպատիւ ազգային և զխճմտանս և մոռանալով իսպառ զՀայ անուն՝ համարձակեցան զրպարտել զանձն, որոյ նմանն, 'ի դժբաղդութենէ մերմէ, կամ բոլորովին չիք յազգի մերում, և կամ են, ալլ յոլժ սակառք, այն է զպարոն Շանշեանց և այս ոչ միայն ուղղակի ստգտանք առ այնպիսի անձն յանբարեմտութիւն, այլ և զմտաւ ածելն, կամ սակաւիւք երկմտելն վասն նորա է միանգամայն սրբաւալողծութիւն։ Նոյնպէս և մեծ անիրաւութիւն առ մարդ, զարդարեալ ճշմարիտ քրիստոնէական բարոյականութեամբ և առաքինութեամբ, որպիսի է Շանշեանց, վասնորոյ մեք հարկադրեալ գտաք զայս թափծեալ անցս մեղադրանաց նորա սլահնել 'ի խորին զանիլութեան,

վասն զի յայտ ածումն այդպիսի զրպարտութեան (իբր բողոքականամիտ) կարէ բերել միայն ամօթևանպահ տուութիւն բոլոր բարեմիտ Հայոց, նա մանաւանդ Ղարաբաղցւոց, ուսումնամէր Ղարաբաղցւոց:

«Մեք պարտ անձին համարիմք ներկայացուցանել առաջի Զերդ Վեհափառութեան թէ բոլոր հաւատարիմ որդիք Զեր բաղդաւոր զինքեանս համարին և պարծին, զի ունին ՚ի միջի իւրեանց զայնպիսի անձն, որպէս է Շանշեանց, որ է կատարեալ գիմառնութիւն (մարմնացումն) առաքինութեան, և բարձր զնա դաշտեն քան զսեպհական երջանկութիւն իւրեանց: Եթէ հարկ է դաստիարակել զմտերիմ որդիս եկեղեցւոյ և հայրենեաց, եթէ հարկ է տալ նոցա զհոգի գիտութեան և զիմաստութեան, եթէ հարկ է ճշգրիտ լուսաւորութիւն, միով բանիւ, եթէ հարկ է կրթել Հայ մարդիկ, պատրասաս յանձնազոհութիւն ՚ի սէր Ազգի և Եկեղեցւոյ, վստահաբար կարեմք ասել՝ վասն այդը նպատակի չիք ալլ ոք բաց ի Շանշեանցէ, գտանիլն ուրոյ աստ, որքան յայտ է մեզ, է անձնազոհութիւն ՚ի կողմանէ նորա:

«Բայց եթէ հարկ է յանդունդս արկանել զթանկագինն Զերդ Վեհափառութեան և մեր սրտի զ՞նպրոցն, ընդ նմին և զոյս մեր, և արկանել զՂարաբաղցիս ՚ի յալիտենական խաւար և ՚ի ստրկութիւն, իրաւի պարտ է հեռտցուցանել աստէն վիութանակի զՇանշեանց, վասն զի գտանիլն նորա աստ, թէւ առանց պաշտօնի, է լոյս՝ ՚ի փարատ տգիտութեան, կամ լաւ ևս ասել՝ մաքառումն լուսոյ ընդ խաւարի. : Որպէս հաւատացեալք (ընտրեալք) ՚ի Հասարակութենէ և գործակատարք նորա՝ մեք քննելով զամենայն պարագայս և հայեցեալ շուրջանակի՝ պարտիմք ասել, թէ Շանշեանց և լուսաւորութիւն, կամ Շանշեանց և ու-

սումնարան համանունք են և մին առանց միւսոյ ոչ կարէ կեալ, քանզի Շանշեանց է անփոխարինելի առա ուրեմն ՚ի հեռանալն նորա՝ պարտիմք հեռանալ և մեք, զի յայնժամ ուսումնարանն փակեսցի և մեզ ոչինչ մնայ գործել և ոչ իմիք ծառայել. . . . զի Շանշեանց ունի զայնպիսի կարդ հեղինակական առաջի Հայազգի ուսումնականաց և բարեխոհ մարդկան և յայտ է առաքինի վարուք իւրովք, զի ՚ի հեռանալն նորա աստէն մեք բոլորովին կորուսանեմք զհամարումն և զհաւատատ, և չիցէ մարթ մեզ գտանել զսակաւ ինչ արժանաւոր վերատեսուչ, որ յօժարեսցի գալ առ մեզ ՚ի նոյն պէտո»¹⁾:

Հոգաբարձուք — Բայս րեդ Մելիք Հարագեօզեան
Համբարձում րեդ Մարոսիանեան
Մարգիս րեդ Քաղաքաթարեան
Գարբիկ Աղաւաղեան
10 Յունիսի 1864 Համբարձում Խաչարեան

Բոլորուն ու ոչ մըսնշան
Յանձնաւուն իւրաքանչական ու բայց և առանձ
Ցուցանում ժողովրդեան. — ԳԻԾԵՐԱՑԻՆ ՓԱԽՈՒՍՏ ԱՌԱՋ-
ՆՈՐԴԻՆ. — ՊԱՏԳԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆ Ի Ս. ԷՀՄԻԱԾԻՒՆ:

Վեհափառ կաթողիկոսն, փոխանակ Հոգաբարձութեան գրոյն պատասխանելու, ՚նոր կոնդակ է զրկում յանուն Առաջնորդին, և սա փոխանակ Հոգաբարձութեան յանձնելու՝ յայտնում է մի քանի ստահակներու, որոնք հրապարակի վրայ ծեծում են երաժշտութեան ուսուցիչն, գոչելով — կոնդակ է եկել, ՚ինչո՞ւ չէք ներանում կորչում ուսումնարանէն: Սոյն դէպքին վրայ

1) Տես եղծ բանաբաղութեանց Զամուրձեան Պատուելոյն. Ա. Պոլիս. 1866. Տպագր. Արամեան:

քաղաքն վրդովում է, բազմաթիւ երևելի անձինք հաւաքում են Առաջնորդի մօտ, պահանջում են յանցաւորն յատեան կոչել և պատժել. բայց սա, Գէորգ վ. Արամեան, ընդդիմանում է և իւր գլուխն ազատելու համար՝ հանում է կոնդակն և յանձնում Հոգաբարձութեան:

Փողովականք, նշմարելով որ Առաջնորդն գործիք է դաւադրութեան և մատն ունի գործոյն մէջ, քանի մի հանրագրեր են պատրաստում յանուն ս. կաթողիկոսին՝ թէ ժողովրդեան կողմէն, թէ Հոգաբարձութեան և թէ քաղաքական դէպուտատի (հասարակութեան գլւխով) կողմէն, մանրամասն նկարագրելով ամեն բան, մերկացնելով խոռվարուզութեան գաղտնի շարժառիթներն, պահանջելով յետս կոչել Գէորգ վարդապետն և նոր Առաջնորդ դրկել, իիշելով ի միջի ալլոց՝ թէ երբ էջմիածնի միաբանից շրջաբերական բողոքի օրինակն Շուշի հասաւ կաթողիկոսն գահընկէց անելու համար, Շանշեանցն էր, որ պաշտպանեց Հայրապետութիւնն իւր իմաստուն գրով, որ հրատարակուելով ունայնացոյց բողոքն ու գահընկեցութեան ծանր հետևանքներն և Թիֆլիսէն պատգամաւորութիւն անդամ գնաց ի ս. էջմիածն աղդավնաս շարժման առաջն առնլոյ համար¹⁾: Հայ հասարակութիւնն ալատգամաւորներ է ընտրում

¹⁾ Ըստ ցաւում եմ, որ չունիմ Մելլու Հայաստանի լրագրի 1864 թուականի այն համարն, որոյ մէջ հրատարակուած է Շանշեանցի պաշտպանողականն, որ մի պերճախօս վկայութիւն է այն վեհանձն հայրենասիրութեան, որով Շանշեանց, կաթողիկոսէն հալածուած ժամանակն իսկ պաշտպանում է հալածչի պատիւն, որ Ազգէն ջնորհուած է. . . Ա՛հ, ո՞րչափ շուր պիտի ստանար անշուր կենսագրականս, եթէ նոյն նշանաւոր գիրն պարունակէր իւր մէջ:

մոյօր նսայի թէզ Դուզուխանեանց, Համբարձում Հայումեանց¹⁾, Համբ. Խաչատրեանց, Մեսրոպ Թառումեանց, Բաբաջան Աւան-հւզբաշեանց. յանձնում է սոցա իւր հանրագրերն և պարտք է դնում նոյն իսկ պ. Շանշեանցի և իմ վրայ, առնուլ երեք աշակերտներ, առնուլ նաև կըօնագիտութեան դասատետրն և պատգամաւորաց ընկերանալով՝ երթալ ի ս. էջմիածին:

Շուտով կատարուած են ուղևորութեան ամեն պատրաստութիւնք և նոյեմ. ամսոյն մէջ ճանապարհ ենք ընկնում, անցնելով է որ տղմուտներու մէջէն, է որ բքաբեր հոսանքներէն, է որ սառնապատներէն, շատ տեղ հետիոտս, զգուշանալով կառքերու խրուելէն կամ սահելէն²⁾ և ինն օրէն զկնի հազիւ հասնում էջմիա-

¹⁾ — Զեմ մռոցած բնաւ և սուրբ պարտք եմ համարու մ նաև արձանագրել այստեղ պ. Հախումեանցի ազնիւ տիկնոջ՝ Մարիամի խօսքերն: Մենք կասկածում էինք՝ թէ նա արգելք կըլինի ամուսնոյն ուղերութեան, որովհետև հիւանդ պառկած էր: Սակայն ուսումնասէր և բաջասիրտ հայուհին, երբ ինդիլն իլեն յայսնեցաւ, այսպէս պատամխանեց. — Եթէ պէտք կայ կին պատգամաւորի, ես ևս կ'ուղելորիմ, հիւանդութենէս և մեռնելէս վախ չունիմ, միայն թէ ուսումնարանի գործն յաջողուի:

²⁾ — Մի երեկոյ տակաւին կայարան չըհասած՝ մըթնացաւ: Զիւնով ծածկուած էր բոլոր ճանապարհն. մեր կառքն գլորեցաւ և միջնափայտն կոտրեցաւ: Ըստով հասան երկրորդ կառքով եկողներն, կառքն դարձուցին և մենք եղանք: Հարցուցինք իրարու թէ՝ վնասուող կա՞յ, ամէն կողմէն ոչ պատասխանուեցաւ, ուստի և կառքն թողլով մի ժամ ժանապարհ ուրբով քալեցինք մինչև կայարան: Պ. Շանշեանց ասաց ինձ՝ գնաւ խանութպանէն երկու հաւկիթ գնէ՛, բե՛ր: Գնացի և շուտով բե՛րի, չըհարցնելով թէ ինչո՞ւ համար է ուզում: Սպեղանի շինեց, ճակատն բացաւ, որուն վրայ ձիւն գնելով՝ թաշկինակով կապած էր: Կառքի գլորման ժամանակ՝ բեւեռն ճակատն մխուած էր, սակայն ինքն,

ծին, ուր արդէն երկու օր յառաջ հասած էր փախած Առաջնորդն։ Ընդունում ենք Ղազարապատի հիւրանոցում, ներկայանում ենք Վեհ։ Կաթողիկոսին, յանձնում ենք հանրագրերն, յանձնում ենք կրօնագիտութեան գասատետրն, ներկայացնում ենք աշակերտներն և թախանձում ենք նշանաւոր միաբաններէն ատեան կազմել, քննութեան ենթարկել թէ դասատետրն և թէ աշակերտներն, խոստումն է լինում, սպասում ենք քանի մի օր, դիմում ենք առաջաւոր եպիսկոպոսներուն խնդիրն փութացնելու, սակայն ամենայն ինչ մնում է անկատար։ Մի անգամ ևս ներկայանում ենք ս. կաթողիկոսին բոլոր պատգամաւորներով և Շանշեանցն սկսում է խօսիլ։ «Վեհափառ Տէր, ըստ հաճեցաք քննել գասատետրս, քննել աշակերտներս, ահա ես, ուրախ կըլինիմ և յաւիտեան շնորհապարտ կըմնամ Ձեզ, եթէ ուղղէք իմ որեկից սխալս, եթէ երբէք նշանած էք, Աւետարանի դէմ, լուսաւորիչներու և ննորհալիներու դէմ։ Ես ուսանող եմ, Վեհ։ Տէր, ով որ, Քրիստոնէական կրօնի նկատմամբ, ինձ մի անգիտացած ճշմարտութիւն ուսուցանէ, ես նորա ձեռքն կըհամբուրեմ, թէ եկեղեցական լինի և թէ աշխարհական»։ Դուք լեզուագէտ էք, պատասխանեց ս. կտթողիկոսն, դուք գիտնական էք, ես կարող չեմ ձեզ հետ խօսիլ. ահա կրտեսնէք որ հիւանդ եմ, բողոքականութեան հակառակ եմ, ևալլն ևալլն։ — Հեղահամբուր Շանշեանցն կարծես թէ՝ Սինէական լերան պատգամա-

առանց ձայն հանելու՝ ձիւնով կապած էր, որ արիւնն ըստ հոսի։ Այս բացուածն բաւական ուշ փակութցաւ, նոյն իսկ էջմիածնէն Թիֆլիս վերագառնալէն զկնի։ Շանշեանցի բանաւորական յատկանիշներէն մին էր՝ իւր ցաւով ուրիշն ըստ ցաւեցնել։ Շատ պատահմունքներու մեջ տեսած ենք այս հաստատամութեան օրինակներն, բայց մի առ մի յառաջ բերելու հարկ չըկայ։

քեր Մովսիսի գալրոյթն զգեցաւ, մօտեցաւ կաթողիկոսական գրասեղանին և կայծակի որոտմամբ ասաց. «Վեհափառ Տէր, Հայաստանեալց եկեղեցին՝ ոչ բողոքական է, ոչ յունական, և ոչ հոռմէական։ Հայաստանեալց եկեղեցին՝ քլիստոնէական նախնի և առաքելական եկեղեցին՝ է, որ գժբաղդաբար դուք չէք ճանաչում և խառնում էք ուրիշներու հետ, որոնք իրենց լատուկ պատմութիւնն ունին։ Թող Աստուած ինքն պահպանէ Հայոց եկեղեցին, բնաւ Զեր գործն չէ նորա պաշտպանութիւնն»։

Ելանք Վեհարանէն, եկանք Ղազարապատ, ուր պ. Շանշեանց այս խօսքերն արտասանեց արտասուելով. «Ներսէս մեռաւ և կաթողիկոսութիւնն իւր հետ տարաւ. պատրաստուեցէք երթանք»։

Սոյն միջոցին ներկայացաւ փախած Առաջնորդն. պատգամաւորներն պատրաստուեցան ծանր խօսքեր ասել. պ. Շանշեանց արգիլեց — «իւր խղճին պատիժն բաւական է իրեն, ինչ պէտք է ծանր խօսքեր»։ Առանց նստելու և առանց խօսելու հեռացաւ Առաջնորդն¹⁾։

¹⁾ — Ոի քանի ամսէն յետոյ Գէորգ վարդապետն վերադառնում է Ղարաբաղ և այստեղ իւր առաջնորդական վիճակէն գոհ չըլինելով՝ գնում է ձալէմու վանքն, Ուտի գաւառին մէջ, Վարդաշէնի մօտ։ Մի առաւտ միաբաններն տեսնում են, որ ընկուզենիէն կախուած ինքդուած է։ Արդեօք չէր մատնուած սա արդէն խղճահարութեան, երբ ի էջմիածին, վաղում էր սենեկէ ի սենեակ, այլայլած, ապշած։ Զը համարձակեցաւ երկու խօսք խօսիլ։ Ղարաբաղի գէպքի ժամանակ պ. Շանշեանց յատկապէս իւր մօտ կոչելով շատ բան խօսած էր իրեն։ «Զարմանալի է, ասած էր, որ կտրծում ես թէ՝ աւելի հաւատարիմ ես Հայոց եկեղեցւոյն քան Շանշեանցն։ Դու մոլորուած ես, դու խաղացւոյն քան Շանշեանցն։ Դու մոլորուած ես, դու խաղացւոյն քան Շանշեանցն։ Բայց բռնած ճանապարհդ Մեծ Վարդապետի ուսուցած ճանապարհն չէ»

Մանկութենէս ի վեր ճանաչում էի պ. Նանշեանցն և երբէք չէի տեսած այնքան տխուր, ինչպէս էր էջմիածին գտնուած ժամանակ, Ի՞նչն էր ճմլում արդեօք այդ ազնիւ Հայուն, ալդ իմաստուն քրիստոնէին սիրտն. ով կարող էր լիովին իմանալ: Նա արագէս տխուր չէր մինչև անգամ այն ժամուն, երբ Շուշիի հրապարակին վրայ ուսուցիչն ծեծուեցաւ և երբ ես, սաստիկ յուզուած այս անիրաւութեան դէմ, լաց էի լինում պատշգամի վրայ, մօտս եկաւ, յօնդիմանեց ասելով. «Առաջուց պէտք է իմանալիր, որ ճշմարտութիւնն միշտ թշնամիներ ունի և այսպիսի դէպքեր կարող են պատահիլ. Ի՞նչ հարկ ուրեմն լալու, գնա սենեակդ աշխատէ»:

Պատրաստուեցանք, լուսարարապետէն խնդրեցինք, Աւագ սեղանի վրայ եկեղեցւոյ քաջ Հովիւներու և Նահատակներու մասունքներն համբուրեցինք, ազօթեցինք և հրաժեշտ տալով մեկնեցանք էջմիածնէն: Երբ հասանք Աղստելի կայարանն, պ. Նանշեանց և Հախումեանց բաժնուեցան դէպի Թիֆլիս, իսկ մենք միւս պատգամաւորներով և աշակերտներով՝ ի Ղարաբաղ:

Աննկարագրելի կերպիւ սրտաշարժ էր մեր մուտն ի Շուշի: Կանխաւ լուր հասած էր քաղաքն. աշակերտք խումբ շարուած էին ճանապարհի երկու կողմն: Իրենց սուր սուր աչքերով Նանշեանց էին որոնում կառքերու վրայ: Հարցումներ էին անում և պատասխան էին ընդունում պատգամաւորներէն՝ թէ յետոյ պիտի դայ: Ես լուռ էի և հազիւ զսպում էի արտասուքներս:

Պատգամաւորներն և մեզ հետ գտնուած աշակերտներն գնացին իրենց տներն. իսկ ես գնացի ի վարժա-

Մտածէ, դու դիտես, . . . Նա զոհ էր Սարգիս եպիսկոպոս Զալալեանի, որ յաջողեցաւ այս միջոցաւ առաջնորդ լինիլ՝ ի Ղարաբաղ:

րան, որ քաղաքի վերին ծայրն էր: Հաւաքեցի իմ և Տեսչի գրքերն ու գոյքերն, զրկեցի ի Թիֆլիս, ինչպէս որ ապսպրուած էի և իւր լորտմութեամբ համակուած անցած գարձածներու վրայ՝ քացուեցայ ի Խանքենդի Ազնիւ Հախումեանցի տունն, ուր փոխադրուած էր իւր ընտանիքն օդոյն սակաւ ինչ մեղմութեան առժիւ: Այստեղ մնացի մինչև 1865 թուականի մայիսն, երբ եկաւ Հախումեանց¹⁾ և միասին գարձանք ի Թիֆլիս:

¹⁾) Հինգ ամսէն աւելի մնացի 'ի տան ազնիւ Հախումեանցի, վայելելով նահապետական Հիւրասիրութեան ամեն բարիքներն ու սփոփանքներն, սեղանակից ունենալով նաև հայրենասէր նկարիչ Ներսէս Ներսիսեանցն: Կայսերական զօրանոցի լեհազգի բժշկապետ Ադամովիչն բերում էր ինձ զանազան գրքեր կարդալու համար: Իբրև մտաւորական զբոսանք, ոչ միայն ուսումնասիրեցի նշանաւոր հեղինակաց գրքեր, այլ և թարգմանեցի (ընդարձակ) Շիլլերի Վիլհելմի թատերական քերթուածը: Այս միջոցին լսուեցաւ, որ մի եպիսկոպոս եկած է էջմիածնէն, կոնդակ բերած է, դպրոցական և առաջնորդական խնդիրն կարգադրելու համար. մի կոնդակ ևս բերած է ինձ դէմ, որպէս թէ վարժարան բացած եմ ի Խանքենդի: ուր երկու հայ ընտանիք միայն կային և Հախումեանցն էր միայն, որ երկու զաւակ ուներ 4—5 տարեկան: Ինչպէս վերջինս, նոյնպէս և առաջին կոնդակներն ստութեան խախուտ աւազոյն վրայ հիմնուած էին, և ժողովրդականք, Ծննդեան պահոց մէջ, զբուանօք ունկնդրած էին կոնդակներու ընթերցման, ցաւելով որ պարունակուած ստութիւններն կաթողիկոսի ստորագրութիւն են կրում: Վիլհելմի թարգմանութեան վրայ խօսելու առթիւ, զարթնեցաւ մի սուրբ յիշատակ: Ուսմանընթացքս աւարտելէն զկնի բնակում էի Ներսիսեան վարժարանի հոգաբարձութեան կողմէն ինձ շնորհուած մի մասնաւոր սենեկի մէջ, ունկնդրի վինելով Ծանշեանցի դասախոսութեանց և պարապելով ընթերցանութեամբ: Մի օր Ծանշեանց սենեակս մտաւ և տեսաւ գրասեղանիս վրայ Փրանսերէն Գալուտնիք Փարիզին, որ ատկաւին սկսած չէի կար-

Ալսպիսի տխուր վախճան ունեցաւ Ղարաբաղի դպրոցական խնդիրն, որ շքեղ հանդէսներով և լուսավառութիւններով սկսուած և տօնուած էր: Ի դերև ելան ամեն ծրագիրներ, որոնք պատրաստուած էին, ոչ միայն Ղարաբաղի, այլև թեմական դպրոցաց համար: Ես արդէն սկսած էի քննութեան առնուլ Ղարաբաղի մասնաւոր վարժոցներն, որոնք գտնուում էին ոմանց քահանաներու, տիրացուներու կամ խալֆաներու խնամոց տակ և պատրաստուած էի երթալ նաև ի նուխի և այլ թեմեր, քննութիւններ կատարելու և տեղեկագիր բերելու: Ամենայն ինչ ունայնացաւ լուսաւորութեան հակառակ խաւարասէրներէն: Թեմական դպրոցաց տեսչութեան ծրագիրն Շանշեանց լուսաւորութեան շատ ցաւում եմ, որ օրինակն չունիմ ի ձեռին հրատարակելու համար:

Երբ վերադարձ ի Թիֆլիս, տեսալ որ պ. Շանշեանցն ջերմօրէն թախանձում է քաղաքի ունեոր դասէն մասնաւոր վարժարան բանալ իրենց զաւակաց կըրթութեան համար: Տեսայ որ կատարուում են հարցաքննութիւններն ներսիսեան Դպրանոցի, որ գրեթէ հայրական տուն էր ինձ համար, ուր շուրջ 16 տարիներ ընակած էի, իբրև նախկին գիշերօթիկ սան, իբրև ուսուցիչ և աւագ վերակացու, իբրև պաշտօնակատար տեսչի, և ուր ծանօթ էին ինձ նոյն իսկ քննութեան ենթարկուած աշակերտներն, որոնք անպատմելի սիրով նախում էին ինձ վրայ, կարծելով թէ վերստին պիտի

դաշտ, ինչպէս իրեն ևս յայտնեցի: Փարիզի յայտնին բնչ է, որ գաղտնիքն ի՞նչ լինի, ասաց, զրկէ իւր տիրոջն, և ինքն եւր բնակարանն երթալով զրկեց ինձ Օգոստինոսի խոստովանութեան գիրքն, որ ոչ միայն կարդացի, այլև թարգմանեցի և ձեռագիրս անշուշտ գտնուում է մեր ընտանեկան գրադարանին մէջ ի Տաւուշ:

սկսիմ պաշտօններս: Սակայն ես այլ մտախոհութեան մէջ էի, ոչ մի բան չէր գրաւում սիրտս. ոչ պ. Շանշեանցի մտադրած վարժարանի և ոչ ներսիսեան դպրանոցի վերստին պաշտօնավարութիւնն: Արձակուրդի օրերէ էին արդէն, մի օր սիրտս բացի իմ սիրելի դաստիարակին և ասացի թէ՝ փափաք ունիմ վեց ամսուան համար ուսումնասիրական ճանապարհորդութիւն կատարել ի Թուրքիա և յալ տեղիս: Զարմացաց, որ հաւանութիւններս ասաց՝ աւելորդ ծախք մի աներ, առ կաշէ արկղս, չէրքեզի հագուստս ամեն պիտոյիւք: Հանեցի անցագիրս, առի կարևոր թղթերս և հրաժեշտ տալով եղբարցս, ընկերակիցներուս և բարեկամներուս՝ մեկնեցալ Թիֆլիսէն:

Իշպերն (մանաւանդ 1865 թուականի սոսկալի խոլերան) այնպէս բերին, որ մնացի ի Թուրքիա 1865—1879. ¹⁾ և սոյն թուականին էր, որ արժանացալ տեսնել սիրելի ուսուցիչս, թէ եպիսկոպոսական աստիճան ընդունելու առթիւ լիջմիածին երթալու և թէ վերագառնալու ժամանակ:

1) — Սոյն շրջանին մէջ շատ սակաւ ծանօթութիւն ունեցած եմ Շանշեանցի մասին: Այսակի միայն գիտէի, որ մասնաւոր վարժարան բացած է. իւր Ուսումն պարտուց նշանաւոր հեղինակութիւնն զրկած է ինձ տպագրելու և այլն: Իսկ ի Պօլիս մալուս, յերուսաղէմ երթալուս, տեսական պաշտօն վարելուս, վարդապետանալուս, հովուական կամ պատրիարքական վարչութիւն կատարելուս, յառաջնորդութիւն կոչուելուս այցելութիւն կատարելուս, իրողութեանց նկատմամբ, ի Զմրւոնիա, և այլ այսպիսի իրողութեանց նկատմամբ, ի Զարկ չեմ տեսնում խօսիլ, զի կապ չունին կենսագրականին հետ:

Տառ հյանդասութեան ու գ. Պարմակ ուղամհօնչար և վեցի
մասն պատճե սանցի և առաջի և առաջը զժուալու մի ու ուժ ունի
ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ Պ. ՇԱՆՑԵԱՆՑԻ ՀԵՏ ԽԹՖԼԻՄ. — ԻԿՐ
ԽՈՐՃՈՒՐԴԻ ՍՍՈՅ ԿԱԹՈՂԿԿՈՍՈՒԹԻՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ. — ԻՄ
ՀՐԱԺԵԾԻ ՕՐՆ:

Երբ Թիֆլիս մտալ, երեկոյեան մութն արդէն կո-
խած էր, սակայն ընկարացի համբերել, հետո առի աղ-
նուասիրտ հիւրընկալս պ. Յով. Շահինեանց և անմո-
ռանալի ընկերու՝ Գրիգոր Տ. Յարութիւնեանց, գնացի
ալցելութեան պ. Շանշեանցին, որ բնակում էր քաղա-
քի մի ծալըն՝ առանձնացած: Կանխաւ իմանալով, որ
այն երեկոյին քաղաք պիտի մտնեմ, քնացած չէր, ըս-
պասում էր այցելութեանս: Իրարու փաթթուեցանք,
իրար համբուրեցինք, ես միտքս դրած էի ձեռքն համ-
բուրել, չըթողաւ: Անպատմելի էր սիրոյ այս վայրկեանն,
մեզ մօտ գտնուղներն անդամ զգածուեցան և արտա-
սուեցին: Նստանք, ինքն թէլ պատրաստած էր, իւր
ձեռքովն թէլ տուաւ ինձ անզուգական դաստիարակս:
Ես կարօտ էի իւր խորհրդներուն, նա կարօտ էր իմ
պատմութիւններուն: Խօսեցանք անցելոյն վրայ, խօսե-
ցանք ներկային և ապագային վրայ և արդէն կէս գի-
շերն անցած էր, երբ իրարմէ բաժնուեցանք: Յաջորդ
օրն կանուխ ինքն եկաւ և վերստին տեսակցեցանք.
Եկան հետզհետէ նաև բազմամիւ ալցելուք — դասըն-
կերք, աշակերտք, պաշտօնակիցք, բարեկամք ևալն:

Սոյն տեսակցական խանդավառ տպաւորութեան
ներքոյ քանի մի օր մնալէն զկնի՝ շարունակեցի իմ
ուղևորութիւնն ի ս. Եջմիածին, խօստանալով ի վերա-
դարձին գէթ մի շաբաթ մնալ ի Թիֆլիս:

Եալիսկոպոսական ձեռնադրութենէ զկնի, պարտա-
ռորեցայ, ս. կաթողիկոսի պատուերին համեմատ, վերա-

դարձս յետաձգել և ճեմարանի հարցաքննութեանց ներ-
կալ լինել, որ արդէն սկսուած էր: Ս. Եջմիածնէն մեկ-
նելէն զկնի, սրտատրով բաղձանքներէս մին էր նաև
իմ հայրենի գիւղն՝ Տաւուշն տեսնել, որ շատ հեռի
չէր Աղստևի կայարանէն, և պանդխտութեանս կարօտն
առնուլ, գգուելով արենակիցներս, օրհնելով ծնողացս
գերեզմաններն և միխիթարելով գիւղացիներն:

Կենսագրութեանս ձեռնարկէն շատ հեռի կը լինի
նկարագրել գիւղական ալցելութեանս տպաւորութիւնն,
զի Շանշեանցի կեանքն է որ պիտի պատկերացնեմ և
ոչ իմս: Ուստի զսպելով սիրտս ու գրիչս, այսքան միայն
յայտնում եմ, թէ երբ ծննդավալրէս բաժնուելով հասայ ի
Թիֆլիս, իմացայ որ պ. Շանշեանց քաշուած է ի Վէ-
ձիս գիւղն: Գալստեանս լուրն առնլով իջաւ քաղաք այն
օրն, երբ ես հրաւելը ստացած էի վիճակաւոր Առաջ-
նորդ, Ալվագեան Գեր. Տ. Գաբրիէլ Արքեպիսկոպոսէն
և մայր եկեղեցւոյ երեսփոխան Յարութիւն Շահավի-
զեանցէն պատարագ մատուցանել ի մխիթարութիւն ժո-
ղովրդեան: Պ. Շանշեանց ուրախացաւ ս. պատարագ
մատուցանելու հրաւելին համար, բայց խորհուրդ տուաւ
քարոզ չըխօսիլ, թերևս գգուշանալով քաղաքական մեկ-
նութիւններէ: Սիրտս լցուած էր քարոզելու եռանդով,
եկեղեցին լցուած էր խուռն բազմութեամբ՝ քարոզ լսե-
լու փափաքով, բայց ես հետևեցայ տրուած խորհրդին.
զի հաւատացած էի թէ պ. Շանշեանց աւելի լաւ կա-
րող է խորհիլ քան թէ ես, որ արդէն յափշտակուած
էի զանազան մտածումներով և գուցէ թէ մոռնալի թէ
ուր եմ և ինչ կըխօսիմ: Խանդավառ էր ժողովուրդն,
որուն վաղուց ծանօթ էի ես, բայց շատացաւ միայն
պատարագս տեսնելով, պատարագ, որ մատուցի արտա-
սուօք այն սեղանին վրայ, որոյ բարձրութենէն, աշա-
կերտութեանս ժամանակ քարոզ խօսած էի, քաջալե-

ըուելով ներսէս Երաշնորհ Հայրապետէն, որ հայրական գորովանօք ունկնդրում էր մեր թոթովանքներուն:

Պ. Նանշեանց ապսպրած էր իմ մի սիրելի ընկերիս և ժամադիր եղած տեսակցիլ, քաղաքէն բաւական հեռի, Աւագիսանի այգույն մէջ: Նշանակած ժամին նըստած էինք ծառերու տակ և կարծելով թէ իսպառ առանձնացած ենք, և սակայն տեսանք որ ոստիկանութեան մի հայ պաշտօնեալ հեռուէն դիտելով անցաւ: Զը վրդովեցանք բնաւ: Մեր տեսակցութեան նիւթն էր Սոոյ կաթողիկոսութիւնն, որուն համար պ. Նանշեանց կարեոր դատած էր համառօտիւ աւանդել ինձ իւր համոզումն և պարտաւորել, որ աշխատիմ այդ մասին:

Սուրբ պարտք եմ համարում նոյնութեամբ արձանագրել այստեղ իւր աւանդածն, որ է միանգամայն նաև իմ համոզումս, ինչպէս որ շատ տարիներ առաջ յայտնած եմ եկեղեցական պատմութեանս մէջ:

Ահա պ. Նանշեանցի աւանդն.—

«Հայոց եկեղեցին գլխից մինչև ոտք ժողովրդական եկեղեցի է: Նա իւր շահն չէ բաժնած երբէք ժողովրդեան շահէն: Նորա յատկանիշն է՝ լալ ընդ լացողս և խնդալ՝ ընդ խնդացողս: Նորա վիճակն վապուած է Ազգի պատմական վիճակի հետ: Բաժանուեցաւ Հայոց տէրութիւնն, բաժանուեցաւ և Հայոց կաթողիկոսական իշխանութիւնն: Մարմնաւոր իշխանութեան անկեղրոնութիւնն ծնաւ անկեղրոնութիւն հոգեոր իշխանութեան: Այս տեղէն ծագեցան զանազան կաթողիկոսութիւններ՝ Սոոյ, Աղթամարայ ևալլն: Սոոյ կաթողիկոսին անկախութիւնն անցեալումն վնասակար չէր հայոց եկեղեցոյն, իսկ նորա անկախութիւնն ներկայումս ամենակարեւոր է Ազգի արդեան վիճակի վերանորոգութեան ժամանակ: Անկախութիւնն այն ժամանակ միայն վնասակար է որևիցէ Աթոռոյ, երբ կաթողիկոսական իշխա-

նութիւնն գործ է գնուում մասնաւոր նպատակաւ և ոչ քրիստոնէական սիրոյ տարածման համար: Հայոց աթուների կաթողիկոսներն միշտ յարաբերութիւն ունեցած են իրար հետ, իբրև եղբայր՝ եղբօր հետ և ոչ իբրև հրամայողներ ստորագասելոց հետ: Հոգեւոր իշխանութեան կեղրոնացումն միշտ յառաջ եկած է բարեպաշտութեան նուազութենէն և լոկ արտաքին անուանական քրիստոնէութեան մուտքան միշտ միակերպութիւնն: Այս ժամանակումն է, որ միշտ միակերպութիւնն շփոթում են միութեան հետ: Ա՛յլ է ներքին միութիւնն, որուն զոհում են առաջինն:

Ամեն կաթողիկոս հայրական և եղբայրական սիրոյ միջնորդ է միայն և ոչ երբէք իշխան որևիցէ փոփոխութեան եկեղեցոյ մէջ, զի ամենայն փոփոխութիւն կորստական հետևանք ունի և տանում է Ազգն գէպ ի կործանումն: Վասն զի ամենէն աննշան փոփոխութիւնն իսկ զառնում է ծանրակշիռ իւր հետևանքներով, ինչպէս է Գէորգ կաթողիկոսի փոփոխութիւն մսւծանելն եպիսկոպոսական երդման մէջ¹⁾: Հայոց կաթողիկոսն ընտրում է Ազգէն, միմիայն պահելու և պաշտպանելու ամեն ծէս և արարողութիւն և ոչ երբէք փոփոխութիւն մուծանելու առանց գիտութեան համօրէն Ազգին: Եպիսկոպոսի երդման փոփոխութիւնն կարող է առաջնորդել քահանալի երդման փոփոխմանն և ուր կըհասնի վերջն: Ամեն կաթողիկոսի պէտք է որ յայտնի լինին այն դարաններն, որ թշնամիներն լարած են և լարում են հայոց եկեղեցւոյ կործանման համար: Զարմանում ենք

¹⁾) — Ակնարկութիւն է այն նորահնար եպիսկոպոսական երդման, որուն մէջ Սոոյ Աթոռոն նկատուած էր հետեւալ եւ հերձեալ. և բարեբաղդաբար մահացաւ ս. կաթողիկոսի մահուան հետ: Ճեմարանն բաւական է իւր յիշատակի անմահութեան համար:

Գէորգ կաթողիկոսի և իւր հետեւողաց վրայ, որ աշխա-
տում են Սսոյ կաթողիկոսութիւնն ոչնչացնել:

Անհասկանալի է նոյնական Պօլսոյ Ազգային ժողովոյ
անտարբերութիւնն և անմեկնելի իւր բռնած ճանա-
պարհն այս մասին: Այս խնդրոյն համար եղած անտար-
բերութիւնն սպառնում է բոլոր ազգային շահերուն և
ազգայնութիւնն ջնջելու: Եթէ չունենալինք Սսոյ կա-
թողիկոսական Աթոռ, ներկայումս պարագաներն կը
պահանջէին ստեղծել այդպիսի Աթոռ, որ ներկայ բա-
րեփոխութեան ժամանակ անկախ լինէր գործելու մեր
բարոյական վերակենդանութեան համար:

Վէճիս¹⁾ գիւղի մենաւորութեան մէջ սոյն բարձր

¹⁾) — Քանից յիշուած է սոյն գիւղն կենսագրականիս
մէջ, ուստի հարկ եմ տեսնում մի բանի խօսք ասել իւր
մասին: Այս գիւղն Վրաստանի ազնուական Շանշեանցի հօր
կալուածն էր և բնակիչներն ճորտ էին, ստրուկ հետեւա-
պէս հօր մահէն զկնի՝ Պ. Շանշեանցի ժառանգութիւնն էր,
որովհետեւ իւր եղբարքն ուրիշ բաժիններ ունէին իրենց
համար: Թիֆլիսէն 15 վերստ հեռիէ այս գիւղն: Պ. Շան-
շեանց, երբ առաջին անգամ այցելում է այդ գիւղն, Պե-
տերուրդէն եկած ժամանակ, բնակիչներն շատ ուրախանում
և պատռում են: Մի մօլլա, (բանզի բնակչաց մէջ մահմե-
տականներ ևս կան) դիմում է Պ. Շանշեանցին և հրաման
է խնդրում մի ամուսնութեան (սիքեահի) համար. վասնզի
այս իրաւունքն ընդհանուր էր ամեն ճորտատէրներու հա-
մար: Մօլլան բերած է լինում նաև նիքեահի տուրքն: Պ.
Շանշեանց, ոչ միայն տուրքն չէ ընդունում, այլ յայտնում
է թէ՝ արդարեւ ամենքս Աստուծոյ որդի ենք, բայց ես աշ-
խարհական եմ, ձեր հոգեւորականն միայն իրաւունք ունի
այդ բանին մէջ: Այս գէպքէն զկնի ազատագրում է նա իւր
ճորտերն, կալուածական իրաւունքն միայն իրեն վերապա-
հելով: Այս է որ գովում են ամեն կենսագրիչներն, վասնզի
ռուսական պետութեան Ազատարար կոչուած Աղէքսանդր
կայսեր հրամանաւ կատարուած ճորտերու ազատագրութիւնն

խնդիրներով զբաղուած էր Պ. Շանշեանցն. իսկ թէ
ինչ արին և ինչ են անում ցարդ մեր պատրիարքներն
ու վարչութիւններն Սսոյ կարևոր Աթոռոյն նկատմամբ՝
սարսուռ է զգում մարդ խօսիլ այն ազգասպան կարճ-
մտութեան վրայ, որով զինուած ուխտեալներ կան պարզ
վանահայրութեան վերածել Սսոյ կաթողիկոսութիւնն,
այսինքն խօսառ կործանել:

Պ. Շանշեանց, իբրև Քրիստոնէական եկեղեցւոյ
պատմութեան քաջահմուտ գիտնական և հայոց եկե-
ղեցւոյ սիրով վառուած ընտիր զաւակ, իւր դաստիարա-
կութեան պաշտօնէն զատ, լատկապէս իւր մտախոհու-
թեան առարկայ արած էր մայրենի եկեղեցւոյ կրօնա-
կան ազատութիւնն և Հայրապետութեան անկախու-
թիւնն: Այս նպատակաւ գործակցած է նա այն կանո-
նագրութեան խմբագրութեանն, որ Մատթէոս ս. կա-
թողիկոսն առաջարկած է կառավարութեան ի հա-
տատութիւն, ինչպէս լիշում է նաև Իզմիրեանց իւր
խօսած դամբանականին մէջ: Այս նպատակաւ ուսերէն

շատ տարիներ յետոյ է Շանշեանցի շնորհած ազատագրու-
թենէն: Այս գիւղականաց նկատմամբ ամպէս է գրում պ.
Եւանգուլեանց: «Պ. Շանշեանց, վերջին տարիներս առանձ-
նացած, ապրում էր սոյն գիւղին չափաւոր եկամուտովն,
որոյ մի մասն ևս բաշխում էր տեղույն կարօտելոց: Վէ-
ճիսի շրջականերէն շատ հեռի ևս հնչում էր Շանշեանցի
անունն և ամեն օր անպակաս էին նորա բնակարանէն մօ-
տաւոր և հեռաւոր գիւղացիներն, որոնք դիմում էին բժը-
կական օգնութիւն խնդրելու, որոց օգնում էր Շանշեանց
իւր օմէօպատեան դեղարանով և ձրի դեղերուն հետ ա-
ռողջապահական անգին խրատներ ևս տալով վերադար-
ձնում էր: Նա գիւղացինց բարերարն, բժիշկն, նորհրդա-
տուն և դատաւորն էր: Սիրում և յարգում էին. պատկա-
ռում էին նորա առաջ և ամենքն նորա դատաստանին դի-
մլով, անպայման կերպի ընդունում էին նորա վճիռն»:

թարգմանած է Եղիշէի պատմովթիւնն՝¹⁾ լաղագս նահատակութեան Վարդանանց։ Այս ժողովրդասիրական ոգւով պաշտպանած է նա համարուեստաւորաց նահապետական իրաւունքներն իւր ոուսերէն Համքեար՝²⁾ անուն հրատարակութեամբ։ Սոյն նպատակին նույիրուած են իւր ընտիր հեղինակութիւններն—Քրիստոնէական ուսումն չայաստանեայց Եկեղեցւոյ, ուսումն պարտուց։ Թողունք իւր ինչ ինչ հրատարակութիւններն հայ և ոուս պարբերականաց մէջ։

Ակներև է ահա, որ Պ. Շանշեանց քրիստոնէական ճշմարիտ զարգացման և մալրենի Եկեղեցւոյ կրօնական ազատութեան և անկախութեան մէջ էր տեսնում ամեն տարերք ազգային ինքնուրոյն գոյութեան և յառաջադիմութեան։ Նորա համար ինչ որ կարեսոր էր Եկեղեցւոյ՝ կարեսոր էր Ազգի։ Նորա միտքն համակուած էր ազգային վիճակի մտածութեամբ։ Ինչ որ չէին տեսնում հայ պաշտօնական մարմիններն նա տեսնում էր, և տեսնում էր շատ հեռուէն։ Ինչ որ չէին խորհում Աթոռներու վրայ նստողներն, նա խորհում էր իւր գիւղական մենաւորութեան մէջ։ Նա շատ բան աւանդած էր յաշակերտութեանս, շատ բան աւանդեց նաև եպիսկոպոսութեանս ժամանակ, որոց կարգէն է Սոյոյ կաթողիկոսականն։ Թիֆլիսէն մեկնելու օրս կայարան եկած էր, եկած էին և շատերն, բայց նորա գալն ուրիշ տըպաւորութիւն ունէր ինձ վրայ. ինչպէս եղաւ և բաժանումն ջերմ գգուանքով և հոգեշունչ խօսքերով։

¹⁾ — Եղիշէի թարգմանութեան ընդարձակ յառաջաբանն մի սքանչելի նկարագիր է նոյն դարու քրիստոնէութեան վիճակի, թէ ընդհանրապէս և թէ մասնաւորապէս հայոց նկատմամբ։ Աւելի կարող էի խօսիլ այս մասին, եթէ ոուսերէն թարգմանութիւնն մօտ ունենայի։

²⁾ — Պ. Պոօշեանցի հայերէն թարգմանութեամբ ևս հրատարակուած է։

Կանոնագիր գիր անդամ գոյաց Պ. Ժայռական գոյաց Առաջնական մասու և մասնակի և հայոց մարդու ամ և Պ. Շանշեանց Վեշտ Կրտութիւնն։ — ԻՄ ՎՃՏԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹԻՒՆՆ. — ՄԱԶՆ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՍՏՈՐՈՒԹԻՒՆՆ. — ԻՄ ՎՃՏԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹԻՒՆ. — ԽՈՐՀՈՒԹԻՒՆ ՄԱՅԱԿԱՆ ԿԵՆԱՑԳՐՈՒԹԻՒՆ. — ԻՄ ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔՆ. — ԻՄ ԱՏԵՆԸՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԼՈՒ. — ԻՄ ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔՆ. — ԻՄ ԱՏԵՆԸՆ ԽԱԽՕՍՈՒԹԻՒՆՆ Դ ՂԱՐԱԲԱՂ

Սոյն բաժանումն զինի անցան տարիներ, անցան շատ անցքեր, կատարուեցան կաթողիկոսական ընտրութիւններ, վերջին Ազգային ընտրութիւնն մեր վրայ մնաց, չբայց յետոյ Տ. Մակար Սրբազանն կոչեցաւ ի կաթողիկոսութիւն։ Թէ ինչ էր խորհում Շանշեանց այս անցքերու նկատմամբ, որոշակի տեղեկութիւն չունէի, վասն զի ինքն սովորութիւն չունէր գրելու, իսկ թղթակիցներս շատ սակաւ բան էին գրում իւր մասին։ Միայն հաղորդում էին թէ՝ բոլորպին առանձնական կեանք է վարում Վէճիս գիւղում, փոխած է իւր սնընդառանութեան եղանակն. կաթն ու մածունն, իւղն ու պանիրն, սիսեռն ու լուբիան ընտրած է իրեն համար կերակուր։ Փայտ շատ ունի ձմրան համար, բայց վառում չէ, զի աւելի ախորդում է ցրտէն։ Գրում էին թէ՝ մի օր գողերն իւր տան վրայ, փոքրիկ գնդակներով լցուած ատրճանակ են պարապում, բայց նա անվըռդով խօսում է իրենց թէ՝ ինչ պէտք է այդպիսի վարմունք. անշուշտ ձեր ուզածն փող է (դրամ). ահա ձեզ փող ասելով տալիս է իւր մօտ գտնուած թղթադրամներն։ Աւագակներն անգամ շուարած իրարու հարցնում են ինչ տեսակ մարդ է այս մարդն։ Այս գէպքն է, որ հարեւանցի լիշում է ալ. Իզմիրեանց դամբանականին մէջ. «Նա մինչև անգամ քաղցրութեամբ հանդիպում էր իւր տուն մտած գողերին, ներողամիտ լինելով նրանց պակասութեան»։

Սլսպիսի մենաւորական կենաց մէջ հիւանդանում է նա, գիւղէն բերում է Թիֆլիս ի տուն Սահակեանց Տ. Սահակի, որ ՚ի Գերմանիա մանկավարժութիւն ուսած էր, բայց սիրում էր ուսանիլ նաև Շանշեանցէն, որ շատ անգամ այցելում էր այս քահանայի տունն, ինչպէս մեր Երկնաւոր Վարդապետն այցելում էր Ղազարոսի ընտանեաց։ Տ. Սահակի տան մէջ սփոփանք է գտնում Շանշեանց իւր կենաց վերջին օրերում։ Դարմանում Մայսուրեանց բժշկապետէն, որ իւր աշակերտն էր, հոգացւում է իւր միւս Երախտագէտ աշակերտէն և իմ ընկերակցէն՝ Գրիգոր Տ. Յարութիւնեանցէն։

Տ. Սահակի յարկին տակ կնքում է Շանշեանց իւր երկրաւոր կեանքն, խաղաղ հոգւով, գոգցես քնացած (ինչպէս գրում էր ինձ քահանայն), Երեկոյեան ժամն 2-ին, մարտի 9-ին 1889 և նոյն ամսոյ 12-ին, կիւրակի օրն, զկնի ս. պատարագին թաղլում է Վանքի Մայր Եկեղեցւոյ գաւթում։

Յուղուած բազմութիւնն ունկնդրում է ս. առաջնորդի, Գ. Իզմիրեանցի դամբանականներուն և նոյն իսկ օրն բարեմիտ անձինք խորհուրդ են լրանում հանգանակութեան դիմել, արձան կանգնել և նորա կենսագրութիւնն հրատարակել՝ ներկայ և ապագայ սերնդի սրտումն նորա լիշտակն յաւերթացնել, որոյ նոյն իսկ դադաղն սոյն խօսքերով է կնքում։ — Առաջինութեան միակ աստղն մեր փեացած ժամանակում, — բարի, հասատարիմ, որոշ համոզմունքի տէր, վերին աստիճանի բարոյական մարդ, — յարգում ենք տաղանդն, վիպասանն, սիրում ենք քանաստեղծութիւնն, բայց խոնարհում ենք մեր գլուխն մարդու առաջ, ծշմարիտ, անկեղծ, համոզմունքի տէր եւ բարի մարդու առաջ։ — Նրա հոգին ներշնչուած էր մի առանձին աս-

առածային շնորհքով։ — առանց սովորական պսակներու, նա ինքն ըստ ինքեան պսակ էր մեզ համար եւ անթառամ պսակ էլ մսալու է մեր սերնդների համար։ — իջրեւ բարի, առաքինի հայ քրիստոնեայ ապրեց եւ գործեց պ. Շանշեանց, միշտ եւ հանապազ չայաստանեայց եկեղեցւոյ դրօշակն բարձր պահելով, նոյն հաւատովն, նոյն համոզմունքներին հաւատարիմ հոգուով կնքեց նա իւր երկրաւորն։

Պ. Շանշեանցի մահուան լուրն և յուղարկաւորութեան ու թաղման նկարագիրներն հասան ինձ այն ժամուն, երբ լուսամտի առջև նստած նայում էի ձիւնով ծածկուած ծառերին։ Կարդացի ու լացի. շատ լացի և ապա հետևեալն գրեցի պ. Իզմիրեանցին։

«Սիրտս վշտահար, աչքս յարտասուս, գրիչ կառնում ձեռքս շնորհակալութիւն մատուցանել Ձեզ՝ թէ Ձեր խօսած դամբանականին համար և թէ այն վսեմա. խոհ արթնութեան, որով հոգացած էք մեր անմահ և ամենասիրելի Պետրոսի Շանշեանց Երկրաւոր մնացորդն ամփոփել Վանքի Մայր Եկեղեցւոյ գաւթում։

Ս.ալիին ամեն հեղինակներն և մասնակիցներն այդ արժանավայել տնօրէնութեան։

Գիտէք արդէն, սիրելի, որ պ. Շանշեանց իւրհոգւյն մէջ կը կրէր Հայոց բազմադարեան և բազմաչարչար Եկեղեցին. այդ Եկեղեցւոյ սիրովն կը վառէր, այդ Եկեղեցւոյ շընչովն կը շնչէր։ Նա մի կենդանի զօհ, մի կենդանի նահատակ էր այդ Եկեղեցւոյն և ի հարկէ ինչպէս որ մահն ոչինչ էր նորա համար, նոյնական և ուրմեռնիլն կամ ուր թաղուիլն։ սակայն անհրաժեշտ պէտք էր մի այդպիսի ժողովրդային գնահատութիւն, որ իւր մեծ կարևորութիւնն ունի։

Աստուածասէրն և մարդասէրն Շանշեանց արդարւ Երկար ժամանակէն ի վեր մեկուսացած էր, բայց նոյն իսկ այդ մենաւորութեան մէջ նորա քրիստոնէա-

կան խաղաղ հոգին, նորա անաշխարհասէր բարձրախոհ կեանքն, մի երկնատիպ օրինակ էր իւր բոլոր բարեկամներուն համար, նա մանաւանդ աշակերտներուն, որոնք կը տեսնէին և կը զգային թէ իրենց դաստիարակն մի հասարակ մահկանացու չէ, այլ «Այր մի, առաքեալ յԱստուծոյ», որ կոչուած է արծարծել Հայ պատանեկութեան սրտին մէջ այն սիրոյ հուրն, որով վառուած էին երկնաւոր Վարդապետի աշակերտներն, վառուած էին Դեսնդներն ու Վարդաններն:

Մենք կը հաւատանք անշուշտ, որ դարուց ի դարս անջինջ պիտի մնան ազնիւ Շանշեանցի անունն ու լիշտակն Հայոց տարեգրութեան մէջ, ինչպէս որ անմաշ են այն Փրկչի դպրութեան մէջ, որոյ ճշմարիտ խաչակիրներէն մին էր ինքն հեզն, խոնարհն և մաքրակենցաղն Շանշեանց: Գիտենք որ ներկայ և ապագայ սերունդն միշտ պիտի լայ, միշտ պիտի մորմոքի, երբ լիշէ թէ՝ ինչ էր Պ. Շանշեանցն իւր ժամանակի հայութեան համար և ինչ կարող էր լինիլ, եթէ չըստիպուէր իւր կենաց մի մեծ մասն առանձնութեան մէջ անցնել, ուր սահեցան, սրացան իւր տարիներն ի յաւիտենականութիւն՝ նման այն մենաւոր և ականակիտ վտակին, որոյ խոխոջանաց մրմունջն միայն կըբարձրանալ երկինք, որոյ զուարթարար ջուրն կըհոսի ի ծով և հազիւ ուրեմն անցորդներ պատահմամբ կը զովացնեն իրենց պասուքն:

Ո՞հ, այսպէս սահեցաւ անցաւ այն լուսասփիւռ կեանքն, այն լուսատու ճրագն, զոր Նախախնամութեան ձեռքն դրած էր հայոց կրթական աշտանակներու կտմ ամբիոններու վրայ, բայց հիւանդուտ աչքով խաւարասէրներն չըկարացին տանիլ և անմեղ սերունդն լուսէ զրկեցին:

Դարերն պիտի ծնին արդեօք հայ պատանեկութեան ու հասարակութեան համար նոյնպիսի իմաստուն

և առաքինի դաստիարակներ ու առաջնորդներ: — Ազօթենք, որ գթայ Աստուած Հայ ազգին: Արտասուաթոր աշօք. Մ. Ե. Մ.: (Նորդար 1889 ապրիլ 26.):

Սոյն վշտակցականն զրկելէն զկնի՝ գիր առի Թիֆլիսէն թէ՝ Պ. Շանշեանցի յարգողներն՝ նորա լիշտակն յաւերժացնելու համար, իբրև տիպար ճշմարիտ քրիստոնէի և հասարակութեան ազնիւ և ընտիր գործիչի, ընտրած են մի մասնաժողով, որ պիտի հոգայ հանգուցելոյն շիրմին վրայ մի շքեղ և վայելուչ մահարձան կանգնեցնել և կենսագրութիւնն հրատարակել:

Այս առթիւ մասնաժողովի ազնիւ նախագահն՝ պ. Մարկոս Եսայեան Դոլուխանեանց, մեր Լարաբաղցի անմոռանալի բարեկամն՝ յատկապէս գրած էր ինձ թէ՝ կարևոր դատուած է, որ կենսագրութիւնն ես պատրաստեմ: Շատ ցաւում եմ, որ թերի գտնուեցայ՝ ինձ բաժին ընկած սուլը պարտքն ժամանակին կատարելու: Մինչդեռ բարեխորհուրդ մասնաժողովն վաղուց կանգնած է մահարձանն, ¹⁾ ես տակաւին նոր պատրաստեցի կենսագրութիւնն: Ի՞նչ արձանագրուած է արդեօք լիշտակարանին վրայ. չըգիտեմ, որ այստեղ օրինակեմ: Սակայն անսպառ երախտագիտութեանս զգացումն բըռնադատում է, չըշատանալ միայն կենսագրականաւն,

¹⁾) — Արաւնի բացման օրն պատարագում է սիրելի աշակերտս Տ. Սահակ Եպիս. Խապայենց, լուսարարապետ Առաքելական Աթոռոյ ս. Երուսալէմի և խօսում է մի սըրտաշարժ արձանական, շեշտելով իմ բացակայութիւնն և իւր անակնկալ ներկայութիւնն, Էջմիածնէն վերադարձին:

Ցաւում եմ, որ թղթակիցներս միայն յիշած էին և ոչ հաղորդած արձանականին գէթ համառօտագրութիւնն, որ շատ պատշաճ կըլինէր այժմ կենսագրականին մէջ ամփոփել:

այլ սրտիս խորքէն քանի մի խօսք ուղղել սիրելի դաստիարակիս, որ ինձ համար միշտ կենդանի է, ոչ միայն հոգւով, այլև իւր բարեհամբոյր պատկերով, որ միշտ տեսած եմ ընդ լուսով արեգական և ոչ ի ծածկիլն ընդ հողով:

«Մարդասէր դաստիարակ. սիրեցիր աշակերտներդ Յիսուսի նման, ինչ որ խօսքով ուսուցիր, կեանքովդ հաստատեցիր: Սիրեցիր եկեղեցիդ Մեսրոպի և Սահակի նման՝ Աստուածազունչ Գրոց անմահ հոգւոյն մէջ հըռշակելով եկեղեցւոյ կենդանութիւնն ու անմահութիւնն: Սիրեցիր ազգդ՝ Վարդաններու նման՝ խոստովանելով ճշմարտութեան յաղթանակն՝ Աստուածային օրինաց համար նահատակութեան մէջ, իսկ ազգաց ազտութիւնն՝ ճշմարտութեան սիրոյն մէջ:

Աստուածասէր դաստիարակ, շարունակ կրկնեցիր թէ մարդոյ երջանկութիւնն Աստուծոյ մէջ է. աշխարհը պատերազմն և առաքինի մարդն՝ միշտ պատերազմի մէջ, ծանր զոհողութեամբ է ձեռք բերում թանկագին յաղթանակն: Այո՛, դու զոհուեցար այս պատերազմին մէջ, բայց միշտ յաղթական մնացիր:

Հեղահամբոյր դաստիարակ, միշտ քարոզեցիր թէ երբ մարդ կատարելութեան է դիմում, չէ նախանձում ընաւ ալլոց բաղդաւորութեան, մեծութեան և արտօնաւորութեան, այլ ճշմարիտ հաւասարութիւնն տեսնում է միայն առաքինութեան մէջ: Այո՛, կեանքովդ վկալեցիր, որ բուն փառասիրութեան միակ նպատակն է բարձրանալ բարոյականութեամբ, զօրաւոր լինիլ ճշմարտութեամբ, սրտի բարութեամբ, հաւատով, սըր. բութեամբ և առաքինութեամբ:

Իմաստասէր դաստիարակ, երբէք չըլափշտակուեցար մարդկային ձեռակերտներէն, շքեղապանծ ապարանքներէն, բարձրաբերձ բուրգերէն, և մի օր չեմ մոռցած

ասացիր նոյն իսկ եղբօրդ, երբ քանի մի յարկով տուն էր շինում, «Զաքարիա, քո շինածէդ աւելի շատ ու շատ բարձր լեռներ կան, ինչ է այդքան ունախասէր մտասանջութիւնդ»:

Բարոյախօս դաստիարակ, բացարձակ հռչակեցիր թէ՝ ճշմարիտ մարդոյ որոնած և փափաքած իշխանութիւնն է՝ իշխանութիւն բարոյական օրինաց, իշխանութիւնն իւր անձին և կրից վրայ: Այո՛, իրօք հաստատեցիր, թէ՝ անհնարին է քեզ՝ սոյն բարոյական իշխանութիւնն փոխել աշխարհիս բոլոր իշխանութեանց հետ:

Լուսամէր դաստիարակ. ուրախութեամբ նուիրեցիր անձնդ ժողովրդի լուսաւորութեան, ջանացիր տարածել ճշմարիտ լուսաւորութիւնն, հաստատել սրտերու մէջ՝ առաքինութեան կանոններ և բարոյական օրէնքներ: Այո՛, դու պատրաստ գտնուեցար մինչև անգամ կեանքդ զոհելու և այս ամենամեծ օրէնքն թագաւորեցնելու համար, այն է Սիր ԱՌ ԱՍՏՈՒԱԾ և Սիր ԱՌ ՄԱՐԴ:

Դու, ուսուցիչ սիրոյ, դու, ուսուցիչ ճշմարտութեան, դու, ուսուցիչ լուսոր: Օրհնուած է իլշատակ՝ Աստուծոյ սիրելիներու գպրութեան մէջ, օրհնուած է հայ ազգի դաստիարակութեան տարեգրութեան մէջ. օրհնուած է աշակերտացդ բերանով ու սրտով. օրհնուած է նոցա ծնողաց երախտագէտ բարբառով: ԱՌ, միշտ լիշում եմ, երբ մի օր, այցելութեանդ ժամուն¹⁾,

1) — Պ. Շահշեանց հրաժարուած էր ներսիսեան գպրանոցի տեսչութենէն. իսկ ես ուսումնարանի սենեակս թողած՝ առանձին բնակարան վարձած էի և նոր մտած էի ուսուցչութեան ասպարէզն: Մայրս եկած էր գիւղէն երկու կրտսեր եղբարցս հետ, իմ կրթական խնամոց յանձնելու համար: Ազնիւ դաստիարակս լսելով մօրս և եղբարցս գալուստն՝ եկած էր այցելութեան: Ես արդէն մօրս շատ բան պատմած էի և երախտագէտ զգացումներով լցուած էր:

գոգցես, մօրս ամօթխած լեզուն բացուեցաւ և ասաց.
«վարժապետ, միշտ Աստուծոյ լուսի ու շնորհքի մէջ
թաթաղուած մնաս, որ Աստուծոյ շնորհքով զարդարում
ես աշակերտներդ»:

Քանի, քանի մալրեր այսպէս օրհնած են քեզ,
ազնիւ հայ, քանի քանիներ միշտ պիտի օրհնեն, քանի
որ կարդան կանանց սեռին ուղղուած Ատենախօսու-
թիւնը, որով պիտի կնքեմ այժմ կենսագրականդ, իս
հաւաքած ծաղիկներուս հետ պատկ հիւսելով և կապելով
անմահ ճակատիդ, որ միշտ փայլեցաւ փառօք խաչին,
սիրով մարդկութեան, լուսով ճշմարտութեան և լուսով
անմահութեան:

«Սրբազն Հայր,
Պարոնայք,
Տիկնայք

«Թոյլ տո՛ւք ինձ այսօր՝ հրաւիրել Զեր ուշադրու-
թիւնն մի առարկայի վրայ, որ կենդանի կապուած է
կանանց լուսաւորութեան այս հոգեոր տաճարի հետ,
զոր Դուք այսօր գումարուած էք հիմնարկելու: Թոյլ
տո՛ւք ինձ այսօր խօսիլ այն ազդեցութեան վրայ, զոր
ունին կանայք մեր կենաց վրայ և որոց ձեռքն է, ոչ
միայն երեխայից ասլագայն, ինչպէս ասաց Մեծն Նա-
պօլէօն, այլ և բոլոր մարդկութեան:

Կանանց ազգեցութիւնն կը սկսի մեր մանկութե-
նէն և կը շարունակուի մեր բովանդակ կենաց մէջ:
Որուն կը յանձնէ բնութիւնն մեր կեանքն, եթէ ոչ
մայրական սիրոյն: Մարդն, որ Աստուածային Արարշու-
թեան զարդն է, յաշխարհ կուգայ՝ ամենատկար քան
համօրէն արարածները: Հազիւ թէ շունչ կառնու նա,
կը սկսի լայու ձախն հանել: Կարծես թէ վայր ընկած
է նա մի ամենամեծ բարձրութենէ: Նա կը ճնշուի
երկրիս օդէն, շնչառութենէն և իւր նոր վիճակէն: Լա-

լով կաւետէ նա իւր գալուստն յաշխարհ, կը զարթու-
ցանէ կարեկցութիւն: բայց նա միայն կարող է սփո-
փել և հանդարտեցնել, ով որ ծնած է ցաւով և հե-
ծութեամբ: Ո՞վ կարող է քաղցր ժպիտ զարթուցանել
երեխային մէջ, եթէ ոչ մայրական ուրախութիւնն, գո-
րովն և բարեսրտութիւնն: Ո՞վ կարող է գուշակել ե-
րեխայի հոգւոյ զարմանքն. ով կարող է գգուել և լու-
սաւորել նորա խիղճն. եթէ ոչ մայրն:

Նայեցէք, թէ ինչպէս մայրն առ ինքն կը քարշէ¹
երեխայն՝ իւր գեղեցկութեամբն, առոյգութեամբն և
առաւել քան զամենայն իւր սրտովն: Մայրական համ-
բերութիւնը կը գոհացնէ, կը լցուցանէ երեխայի ան-
սահման հետաքրքրութիւնն: Մայրական սէրն կը պա-
հէ, կը պահպանէ մանուկն ամեն վնասակար բաներէ:
Մայրական սիրով կը թեթևնալ մանկան վրայ ունեցած
անշափ հոգացողութեան ծանրութիւնն: կամաց կամաց
մանկան և մօր իրարու հետ ունեցած խաղալու և խըն-
դալու ցանկութիւնը մի գեղեցիկ կապ կը լինի ման-
կան և մօր մէջ: Ամեն բանով կը կապուին նոքա իրա-
րու հետ, ինչպէս համաձայնութեամբ, նոյնպէս և
ընդդիմութեամբ: Եւ սոյն մայրական ձիրքովն, որ է
համբերութիւն և հսկողութիւն, բնութիւնն ինքնին
ցոյց կը տայ մեզ յալտնապէս, թէ՝ որո՞ւ հաւատացած
է մեր մանկութիւնը և ով է մեր երջանկութեան պատ-
ճառն:

Այո՛, Տեարք և Տիկնայք. մայրական ազգեցութիւ-
նը կը դրոշմէ իւր կնիքը մեր սրտի զգացմանց վրայ,
մեր մտաց վրայ, մեր կենաց վրայ: Մեր հոգւոյ վրայ
եղած այս մայրական ազգեցութիւնը մեր նախասահ-
մանութիւնն է, ինչպէս ասաց Մեծն Նապօլէօն. «Երե-
խայի ապագայն մօր ձեռքն է»: Նատ անգամ կասէր
Նապօլէօն, աւելի իւր մօրն է պարտական, որ իւր կե-

նաց մէջ այնքան մեծութեան հասաւ: Մայրական ազ-
դեցութեան տակ զարգացած բացուած են բանաստեղ-
ծական երևելի ոգիներ և հանձարներ—Բայրըն, Լա-
մարթին, Անդրէ Եէնիէ, Հիւգօ, Եիլէր և այլք: «Իմ
մայրս տուաւ ինձ, իւր կենդանի ուրախութեամբ, ճա-
շակ գրութեան, ճաշակ զգացողութեան, ճաշակ բա-
նաստեղծութեան» ասում է Գերմանացի երևելի բա-
նաստեղծն Դէօթէ:

Այն, Տեարք և Տիկնայք, միայն մայրն կարող է տալ
մեզ բանաստեղծութիւն և հոգի բարեպաշտութեան:
Միայն նա կարող է տպաւորել մեր մէջ առաքինու-
թիւն, և ուսուցանել մեզ, որ բարի անունը նախապա-
տիւ համարինք դանձէ և հարստութենէ, Ազգի երջան-
կութիւնն՝ մեր անձի երջանկութենէն. սիրենք մեր ըն-
կերներն, օգնենք տարաբաղներուն, բարձրացնենք մեր
հոգին առ Աստուած, որ է աղբիւր ամենայն գեղեցկու-
թեան և բարութեան:

Ասացէք ինձ, ով դարձուց զսուրբն Օգոստինոս առ
ճշմարիտն Աստուած, եթէ ոչ իւր մայրն՝ սրբուհին
Մոնիկ: Ո՞վ դաստիարակեց զսուրբն Ոսկեբերան, եթէ
ոչ իւր մայրն: Ո՞վ հաստատեց զկեսարացին հարսեղ
փրկութեան ճանապարհի վրայ, եթէ ոչ իւր մայրն:
Ո՞վ երեխայութեան ժամանակ եկեղեցի բերաւ զԱս-
տուածաբանն Գրիգոր և Աւետարանը ձեռքը տուաւ
շօշափելու, նայելու և սիրելու, եթէ ոչ իւր մայրն,
որ կարծես թէ կը փափաքէր, կը ցանկար, որ շօշա-
փելով ու նայելով աստուածալին հոգին թափանցէ իւր
զաւակի ջիղերն, երակներն ու սիրտն: Ո՞վ ծնաւ ու
զարգացոյց այն վեհ ու փափուկ Հայրենեաց զաւակնե-
րն, այն առիւծի նման հզօր և զառան նման հեզ՝
Աարդանանց նահատակներն, եթէ ոչ մայրերն: Այս
փափկասիրտ և փափկասուն մայրերն են, որոց զոհա-

բերութեան հոգին կը նկարագրէ մեզ քաղցրախօս Ե-
ղիշէն: Ալսպիսի մայրերն են, որոնք կը ներշնչեն ոչ
թէ այն անձուկ հայրենասիրութիւնն, որ միայն օտարն
ատելու մէջ կը սահմանափակի, այլ սէրն անսահման,
որ կը ծնանի մեր մէջ այն աստուածալին զգացումն,
այն եղբայրական համակամութիւնն, որ ազգի բոլոր ան-
դամներուն կը տալ մի սիրտ, մի հոգի, մի միտք, մի
կամք:

Միայն ալսպիսի մայրերն կարող են ուսուցանել
մեզ, որ մեր բնակած աշխարհէն բարձրագոյն՝ կայ մի
այլ աշխարհ, մեր հայրենիքէն բարձրագոյն՝ կայ մարդ-
կութիւն և մարդկութենէն գերագոյն՝ մեր պաշտելու
Առաջին և սուրբ Եակն՝ Աստուած: Ով որ իւր մանկու-
թեան ժամանակ՝ դաստիարակ չէ ունեցած իւր մայրն,
կարող է նա, այն, սրտի բնական շարժումով բարե-
պաշտութեան հասնիլ, բայց նորա առ Արարիչն ունե-
ցած լարաբերութեանց մէջ կը պակսի, կարծես թէ,
տեսակ մի ընտանեկան կապ, որ հիմն է քաղցր զգաց-
մանց, վասն զի մայրական փափուկ զգացմունքն չէ
զարթուցած նորա մէջ սէր առ Աստուած:

Եթէ աշխարհիս մէջ մի ճշմարիտ բան կայ, այն
կանանց ազգեցութիւնն է մեր բոլոր կենաց վրայ: Ալս
ազգեցութիւնն կերեկ որդիական սիրոյ և ամուսնական
կապի մէջ: Մարդն կը խորհրդակցի իւր կնոջ հետ. կը
հնազանդի իւր մօր կամքին, երկար ժամանակ կը կա-
տարէ նորա կամքն, ևս և նորա մահէն զկնի, և իւր
մօրէն ստացած համոզումներն այնպէս կարմատանան
իւր սրտի մէջ, որ շատ անդամ կիրքերն ևս անկարող
կը լինին յաղթել նոյն համոզումներուն:

Այն, Տեարք և Տիկնայք, մի երկիր կարող է փո-
խել իւր օրէնքները, իւր կարգ ու կանոններն, բայց
մի բան կայ, որ միշտ անփոփոխ կը մնայ կենաց մէջ,

այն է կանանց հզօր ազդեցութիւնն մարդկանց բարուց վրայ: Կինը, թէ ազատ և թէ փակուած, միշտ կը պահ: պանէ իւր իշխանութիւնը մարդոյ վրայ: Վասնզի, նա՝ իւր սոյն իշխանութիւնն կըստանայ մեր սրտէն և մեր կիրքերէն: Կանանց սոյն ազդեցութիւնն, իրենց լուսաւորութեան աստիճանին համեմատ, կըլինի շատ կամ սակաւ օգտակար, աւելի կամ նուազ արդիւնաւոր, նայելով թէ՝ ո՞չչափ յարգանք կըտան նոցա մարդիկ: Կիներն, թէ ամուսին լինին և թէ ստրուկ, միշտ իրենց կընմանեցնեն զմեզ, կամ ազատ, կամ ստրուկ: Կարծես թէ՝ բնութիւնը կապած է ոչ միայն մեր լուսաւորութիւնը՝ նոցա լուսաւորութեան հետ, այլ և մեր յարգանքը՝ նոցա յարգանաց հետ, ինչպէս և մենք կըկապենք մեր երջանկութիւնը նոցա առաքինութեան հետ: Այս է յաւիտենական արդար օրէնքն, ուր կինն անարդուած է, այնտեղ մարդն ևս կընկնի անարդութեան վիթ մէջ: Խոկ ուր կինն կընթանայ լուսոյ և ճշմարտութեան ճանապարհաւ, այնտեղ մարդն ևս իւր նշանակութիւնն կըստանայ:

Այս խօսքերս ճշմարտելու համար դարձնենք մեր աչքերն դէպի քրիստոնեալ և ոչքրիստոնեալ ազգերն: Ուր պահած է մարդն իւր պատիւն: Ուր ծաղկած և զարգացած են հասարակութիւնք գիտութեամբ և արուեստիւ, եթէ ոչ այնտեղ, ուր կինն ամուսին է և ոչ թէ գերի կամ ստրուկ: Ուր հաստատուած է գերդաստան և ոչ կանանց: Ուր կինը՝ մայր է, ուր ամուսնութիւնը՝ սուրբ կապ է և ոչ թէ ստրուկներու առուտուր:

Մարդ դու, որչափ կամիս օտարաց մօտ արդար ձեացիր, և աղքատաց մօտ՝ ողորմած. եթէ չես սեահականեր քո կնոջդ իրեն վայելուչ յարգանքը, կարող չես հոգեկան սէր պահանջել քո կնոջմէն քեզ՝ և քո որդւոց համար:

Զըկայ այնպիսի ազգ, որ ունենայ ճշմարիտ կրօնք ու սիրէ զայն և չխոստովանի կանանց ազդեցութեան մեծ նշանակութիւնն: Ճշմարիտ կրօնքը կը տարածէ լուսաւորութիւն, կը հաստատէ ամուսնութիւն, կը հաստատէ ընտանեկան կեանք, յորմէ կախեալ է ընկերական, միաբանական ու ազգային կեանքը: Վասն զի գերդաստանի մէջ միայն կը ծնին և կածին բարոյականութիւն, համոզմունք, առաքինութիւնք, միով բանիւ ամենալին մեծանութիւնք և արժանաւորութիւնք մարդկային ազգի: Խոկ ընդհակառակն, ուր չըկայ ընտանեկան կեանք, ուր չըկայ ամուսնական սրբութիւն, ուր չըկայ կնոջ սուրբ ազատութիւն, ուր տիրած են բազմակնութիւն և ամուսնական անհաւատարմութիւն, այնտեղ թշուառ և անլոյս է ազգի վիճակն, այնտեղ անբարյականութիւնը ճարակած է մարդոյ բնակարանին մէջ, այնտեղ մեռած է մարդոյ հոգեկան կեանքը, մեռած են քաղցր զգացմունք, մեռած են խիղճն ու բանականութիւնն ու թագաւորած են միայն մարմնական հեշտախտութիւնք: Միայն ամուսնութիւնն, քրիստոնէական սուրբ ամուսնութիւնն է, որ կըհալածէ մեղքերը և կըլուսաւորէ քրիստոնէի տունը:

Կըցանկած և կամիք, Տեալք և Տիկնալք, իմանալ թէ ամենէն աւելի Բնէ է պակաս մեր հայրենեացն ու ազգին: — Հոգի զոհաբերութեան, Հոգի մեծանձնութեան, Հոգի ազգասիրութեան: Մենք ունինք վաճառականներ և գրագէտներ, ունինք իշխաններ և աստիճանաւորներ. Բայց մարդիկ շատ սակաւ. և աւելի սակաւ՝ հայրենասէրներ: Այս բանիս, եթէ ոչ միակ, գէթ գլխաւոր պատճառն այն է, որ չունինք մայրեր: Ո՞չ. կան մայրեր, բայց ճնշուած են նոքա նիւթական հոգսերով, խեղդուած են նիւթապաշտ կեանքով: Զըկան այն մայրերն, որք կարողանային գաստիարակել իրենց զաւակ.

ներն՝ Քրիստոսի հոգւով, զոհաբերութեան և անձնութ-
րութեան հոգւով, սիրով առ Աստուած և առ ընկերն:
Զըկան այն մայրերն, որք կարողանալին իրենց հոգւոր
ծննդեամբ բազմացնել Աստուծոյ և հայրենեաց զաւակ-
ներ, ինչպէս իրենց մարմնաւոր ծննդեամբ կըբազմա-
ցնեն մարդկային ազգը: Մայր և կին լինելու համար՝
բաւական չէ միայն լինիլ տնտես, հրամաններ տալ ծա-
ռաներուն և աղախիններուն և հոգալ միայն նիւթա-
կան բարօրութեան համար: Պէտք են այս ամենն, բայց
միայն սոցա մէջ չէ կայացած նոցա կոչումն: Կանանց
գլխաւոր կոչումն է սիրել, աղօթել, մխիթարել: Նոցա
կոչումն է՝ կրթել և առաջնորդ լինել իրենց զաւակնե-
րուն, և այս շնորհքը յատկապէս կանալք միայն ունին
և նոքա կարող են լիովին կատարել:

Իւր մեծ կոչումն արժանապէս կատարելու և իւր
ամենազօր ազգեցութիւնն ազգի բարուց վրայ պտղաբեր
և շահաւետ գործելու համար՝ երեք բան հարկաւոր է
կնոջ—առաջին՝ լուսաւորութիւն, երկրորդ՝ լուսաւորու-
թիւն, և երրորդ՝ գարձեալ լուսաւորութիւն: Հարկաւոր
է կնոջ միտքը զարգացնել գիտութեանց մէջ և պատ-
րաստել իւր ամուսնոյ խորհրդներուն և զաւակաց ուս-
ման մասնակից լինելու: Լուսաւորութիւնն կապ է ա-
մուսիններու մէջ, իսկ տգիտութիւնն՝ արգելք: Լուսա-
ւորութիւնն մխիթարութիւն է, իսկ տգիտութիւնն՝
հալածիչ մխիթարութեան: Տգիտութիւնն կըծնանի հա-
զար տեսակ պակասութիւններ և հազար տեսակ մոլու-
թիւններ ու մոլութիւններ կանանց համար:

Ասացէք, ինչո՞ւ համար այս ինչ կինը կըմեռնի
ձանձրութենէ ու սրտնեղութենէ. — վասնզի զուրկ է լու-
սաւորութենէ: Ինչո՞ւ համար այն ինչ կինն պճնամոլ է
և ունայնասէր. — վասնզի զուրկ է լուսաւորութենէ: Ին-
չո՞ւ այն ինչ կինը, ունայն և չնչին բաներ գնելու հա-

մար, չըխնայեր իւր ամուսնոյն ամսական աշխատանքն. —
վասնզի զուրկ է լուսաւորութենէ, օտարէ մտաւոր և բարո-
յական աշխարհի համար, զուրկ է իւր պարտուց ճանա-
չողութենէն, որպէս մարդ, որպէս անդամ ազգի, որպէս
անդամ եկեղեցւոյ: Կանանց կրթութեան անհոգութիւնը
մեր հայրերու համար աններելի էր, իսկ մեզ համար՝
անշուշտ դատապարտելի, մեզ համար, որ կըզգանք թէ
իգական սեռի լուսաւորութիւնն աւելի նշանաւոր է քան
արականինն: Վասնզի օրօրոցէն մինչև ի գերեզման, կա-
նանց ազգեցութեան տակն ենք մենք, վասնզի կըզգանք,
որ կանանց լուսաւորութեան համար հոգալով՝ կըհո-
գանք մեր սեպհական լուսաւորութեան համար: Ով որ
փրկարար և արժանաւոր մտքեր կըներշնչէ կանանց,
նա մի հարսւածով կոչնչացնէ մեր չնչին կիրքերն ու
կորստական ցանկութիւններն: Կանալք որքան գերա-
զանց լինին, այնքան արժանաւոր կըլինինք և մենք,
և երբ նոքա մեզ կերջանկացնեն, ինքեանք ևս յայն-
ժամ երջանիկ կըլինին:

Տիկնալք, դուք որ պատճառ էք կանանց լուսա-
ւորութեան այս մեծ գործին, դուք, որ այսպէս հա-
մեստութեամբ սկսաք այսքան նշանաւոր գործը, կըզ-
գաք արդեօք, որ դուք կուտաք ազգին նոր հոգի և
նոր կեանք. այն ազգին, որ անշուշտ անջինջ կըպահ-
պանէ իւր սրտի խորոց մէջ ձեր անուններն ու լիշա-
տակն: Վասնզի, Աստուածածնի Աւետման այս մեծ ա-
ւուր մէջ, աւետեցիք հայրենի երկնին՝ Ղարաբաղին և
Հայաստանին, թէ տիս օրէն բացուած է հայ աղջկանց
համար՝ ճանապարհ լուսաւորութեան, որ կըտանի առ
Աստուած, առ ազգն և առ ապագայ կեանքն, ցոյց կը-
տայ կենաց նպատակն և դէպ ի նոյն նպատակն դիմե-
լու անմոլար ուղին:

Տիկնալք, դուք ևս օրհնեալ լինիք այս օրէն կա-

նանց մէջ։ Այս օրէն Տէլն Զեզ հետ է, լուսոյ և ճըշ-
մարտութեան ճանապարհի վրայ, ուր ցանկացաք դուք
հրաւիրել այս փոքրիկ աղջիկները և որ պէտք է տանի
նրանց առ մարդասէր Փրկիչն, որ իւր քաղցր ձայնով,
տասն և ութ գար է, կըկոչէ մանուկներն ասելով,
«Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս և մի արգելուք
զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից»։

Սրբազան հայր¹⁾, դուք, որ արթուն և անդադար
շանքով կաշխատիք մեր լուսաւորութեան համար, դուք,
որ առաջին անգամ օրհնեցիք այս լուսաւորութեան
գործը, ընդունելով զայն Զեր հովանաւորութեան տակ,
դուք նոյնպէս՝ առաջին անգամ բացիք լուսաւորութեան
ճանապարհ խղճալի որբոց համար, զորս այնքան սիրեց
մեր վարդապետն, որ զինքն ներկայացուցիչներ ընտրեց
երկրիս վրայ, դուք ևս երկու որբ աղջիկներ Զեզ որ.
զեզիր ընտրեցիք յանուն Զեր վարդապետին, որ ասաց.
«որ ոք ընկալցի զմանուկ մի այսպիսի յանուն իմ՝ զիս
ընդունի»։

Քոյրեր, Զեր առաջ բացուած է այսօր նոր ճանա-
պարհ լուսաւորութեան, որ պիտի առաջնորդէ ձեզ՝
ձեր պարտաւորութիւնը ճանաչել և ձեր սիրտն ու միտ-
քըն դարձնել այս օրէն առ Աստուած, առ ազգն և առ
ճշմարիտ կեանքն, որով լոյսն խաղաղ է և անանց։
Դուք պարտիք ձեր աշաց առջև ունենալ այն բարեպաշտ
կանանց պատկերներն, որոց համար Փրկիչն ասաց.
«Մարթա, Մարթա, դու հոգաս և զբազում իւիք ըզ-
բաղեալ ես, բայց սակաւ ինչ պիտոյ է, Մարիամ մասն
բարի ընտրեաց, որ ոչ բարձրի ի նմանէ»։

1) — Ժամանակին Առաջնորդն՝ Ստեփաննոս Արքե-
պիսկոպոս。

ՀՀ Ազգային գրադարան



NL0339547

